

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԵԹՈՒՄ ՊԱՏՄԻՉ ԿՈՌԻԿՈՍՅԻՆ



ԵՎ ՆՐԱ
ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Karen Matevosyan

HISTORIAN
HAYTON
OF CORYCUS
AND
HIS CHRONICLE

MOUGNI PUBLISHERS
YEREVAN • 2011

Կարեն Մաթևոսյան

ՀԵԹՈՒՄ
ՊԱՏՄԻՉ
ԿՈՌԻԿՈՍՑԻՆ
ԵՎ ՆՐԱ
ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԵՎԱՆ • 2011

ՀՏԴ 941 (479.25)

ԳՄԴ 63.3 (2Հ)

Մ 151

**Տպագրվել է Կանադահայոց թեմի
Առաջնորդարանի հովանավորությամբ**

Մաթեւոսյան Կարեն

Մ 151 Հեթում Պատմիչ Կոռիկոսցին եւ նրա ժամանակագրությունը/

Կարեն Մաթեւոսյան. – Եր.– «Մուղնի» հրատարակչություն, 2011.– 112 էջ:

Գրքում ներկայացվում է Հեթում Պատմիչ Կոռիկոսցու (13-րդ դ. վերջ - 14-րդ դ. սկիզբ) 1296 թվականին կազմած ժամանակագրությունը՝ «Համառոտ պատմութիւն ժամանակաց հաւաքեալի զանազան պատմութեանց...», երեք խմբագրություններով, ուսումնասիրությամբ եւ ծանոթագրություններով, ինչպես նաեւ հեղինակի երկու այլ գործերը (հավելվածում), որոնք արժեքավոր աղբյուրներ են Կիլիկիայի Հայոց թագավորության եւ խաչակիրների պետությունների պատմության վերաբերյալ:

Նախատեսված է պատմաբանների եւ Հայոց պատմությամբ հետաքրքրվող ընթերցող լայն հասարակայնության համար:

ՀՏԴ 941 (479.25)

ԳՄԴ 63.3 (2Հ)

© Մաթեւոսյան Կարեն, 2011

© «Մուղնի» հրատարակչություն, 2011

ISBN 978 - 99941 - 33 - 68 - 0

ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ մատենագրության նշանավոր դեմքերից է իշխան Հեթում Կոռիկոսցին, որը հայ պատմագրության մեջ հայտնի է Հեթում Պատմիչ, իսկ եվրոպականում՝ Հայթոն Հայ անունով (Hayton l'Arménien): Նա Կիլիկիո Հեթում Ա (1226-1269) թագավորի եղբայր Օշին պալլի որդին էր, նշանավոր իշխան, տերը Կոռիկոս ծովափնյա բերդաքաղաքի եւ մի շարք ամրոցների, եղել է նաեւ պետական բարձր պաշտոններում, մասնակցել դիվանագիտական առաքելությունների ու պատերազմների: Դրան զուգահեռ Հեթում Կոռիկոսցին պատմագիտական նախասիրություններով անձնավորություն էր. 1293-1296թթ. ժամանակամիջոցում գրել է մի շարք ազգաբանական աշխատություններ՝ նվիրված Ռուբինյաններին, Երուսաղեմի ու Կիպրոսի թագավորներին եւ Անտիոքի իշխաններին, ֆրանսագիր հեղինակների գործերից թարգմանել է մի ծավալուն ժամանակագրություն՝ «Պատմութիւն խրոնիկոնին...», ապա դրա հիմքի վրա կազմել մեկ այլ համառոտ ժամանակագրություն՝ «Համառոտ պատմութիւն ժամանակաց հաւաքեալ ի գանազան պատմութեանց...», որը ներկայացվում է այս գրքում:

1305թ. Կիպրոս տեղափոխված Հեթումը 1307թ., որպես իր բարեկամ եւ Կիպրոսի կառավարիչ Ամորիի պատգամախոս Ֆրանսիա մեկնելով՝ հանդիպել է Հռոմի Կղեմես Ե (1305-1314) պապին եւ նրա հանձնարարությամբ պատրաստել «Ծաղիկ պատմութեանց Արեւելից աշխարհի» երկը: Կոռիկոսցին այն թելադրել է հին ֆրանսերենով, որը գրի է առել Նիկոլաս Ֆակոնը, ապա եւ անմիջապես թարգմանել լատիներեն, որից հետո հեղինակը երկը հանձնել է Հռոմի պապին: Արեւելքի բազմաթիվ երկրների պատմության դրվագներ ներկայացնող այդ քառամաս երկի վերջին հատվածը խաչակրաց նոր արշավանքի կազմակերպման ռազմաքաղաքական մի ուշագրավ ծրագիր է, որը լուրջ քննարկման է դրվել, սակայն տարբեր պատճառներով չի իրականացել:

Եվրոպացի ուսումնասիրողները բարձր են գնահատել Հեթում Կոռիկոսցու «Ծաղիկ պատմութեանց...» երկը եւ անգամ համեմատել Մարկո Պոլոյի ու այլոց նույն ժամանակաշրջանում գրած ուղեգրությունների հետ: Իսկ նշանավոր հայագետ, պրոֆեսոր Ֆրեդերիկ Ֆեյդին, Հեթումին համարելով ֆրանսերենով ստեղծագործած առաջին հայը, նշում է, որ եթե մյուսները Արեւելք եկած ճանապարհորդներ էին, ապա նա բուն արեւելցի էր, հայ մարդ, որը թե՛ իր ծագումով, թե՛ գործունեության դիվանագիտական ասպարեզով մասնագիտական երաշխավորն էր իր գրածի¹: «Ծաղիկ պատմութեանց...» երկը թարգմանվել է եվրո-

1. Ֆ. Ֆեյտի, Հեթում Պատմիչ հեղինակ «Ծաղիկ պատմութեանց Արեւելեան Աշխարհի» գրքին, Փարիզ, 1939, էջ 7:

պական մի շարք լեզուներով եւ 16-17-րդ դարերում տարբեր երկրներում ունեցել է այնքան բազմաթիվ հրատարակություններ, որպիսին երբեւէ չի ունեցել որեւէ այլ հայ միջնադարյան հեղինակի գործ: Չնայած դրան՝ այն հայերեն (գրաբար) թարգմանվել է միայն մասամբ, առանց մեծաթեք չորրորդ մասի եւ հրատարակվել Վենետիկում 1842 թվականին:

Հեթում Կոռիկոսցու հայերեն աշխատությունները նույնպես միասնաբար եւ առանձին գրքով տպագրվելու բախտին չեն արժանացել: Ազգաբանական երկերը եւ «Պատմութիւն խրոնիկոնին...» ժամանակագրությունը Վազգեն Հակոբյանը հրատարակել է «Մանր ժամանակագրությունների» 2-րդ հատորում², իսկ «Համառոտ պատմութիւն ժամանակաց հաւաքեալ ի զանազան պատմութեանց...» ժամանակագրությունը՝ «Մանր ժամանակագրությունների» 1-ին հատորում, բայց այն վերագրել այլ հեղինակի՝ Հեթում Բ թագավորին³: Այս վերջին գործը թեւէ հրատարակվել է համեմատական բնագրով, բայց դրա համար որպէս հիմք է ընդունվել 1724 թվականի մի ընդօրինակություն, որի տեքստը լի է գրչության ուշ շրջանից եկող բազմաթիվ սխալներով, մինչդեռ ժամանակագրության պահպանված հնագույն օրինակը՝ 1319 թվականից, իր հրատարակությամբ հանդերձ⁴, «Մանր ժամանակագրությունների» հրատարակչին անձանոթ են մնացել:

Ստորեւ ներկայացնում ենք **«Համառոտ պատմութիւն ժամանակաց հաւաքեալ ի զանազան պատմութեանց...»** ժամանակագրությունը՝ ճշգրտված բնագրով, իր երեք խմբագրությունների զուգադրմամբ եւ մեկնաբանություններով (որով լուծվում է այս գործի հեղինակային պատկանելության թնջուկը), իսկ որպէս հավելված՝ Հեթում Կոռիկոսցու նորահայտ լրացումները Սամվել Անեցու ժամանակագրության մեջ եւ նրա 1293 թվականի ուշագրավ հիշատակարանը, որի ամբողջական տեքստը գիտական աշխարհին հասու է դարձել միայն մի քանի տարի առաջ: Այս աշխատանքը համարում ենք մի քայլ Հեթում Կոռիկոսցու մատենագրական վաստակի ամբողջացման ճանապարհին, հուսալով, որ առաջիկայում համապատասխան մասնագետների ջանքերով ի մի կրելվեն եւ առանձին հատորյակում կամփոփվեն այս ինքնատիպ հեղինակի բոլոր գործերը, այդ թվում՝ ամբողջական թարգմանությամբ «Ծաղիկ պատմութեանց Արեւելից աշխարհի» մեծաթեք երկը:

2. Մանր ժամանակագրություններ, 13-18-րդ դդ., հ. 2, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երեւան, 1956, էջ 33-114 (այսուհետեւ՝ Մժ, հ. 2):

3. Մանր ժամանակագրություններ, 13-18-րդ դդ., հ. 1, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երեւան, 1951, էջ 65-87 (այսուհետեւ՝ Մժ, հ. 1): Ժամանակագրության հեղինակի ինքնության պարզաբանումը տե՛ս Կ. Մաթեոսյան, Հեթում Կոռիկոսցու ժամանակագրությունը եւ նորահայտ ժամանակագրական լրացումները, Լ. Խաչիկյանի 90-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր, Երեւան, 2010, էջ 119-149:

4. Նկարագիր Օշին թագաւորի ձեռագիր Ժամագիրքին, 1319, նկարագրեց Արտաւազդ արքեպիսկոպոս, Անթիլիաս, 1933, էջ 93-101:

ՀԵԹՈՒՄ ԿՈՌԻԿՈՍՅԻ ԻՇԽԱՆԸ

Ա. ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԾԵՐ

ԿԻԼԻԿԻԱՅԻ ԾՈՎԱՀԱՅԱՑ Կոռիկոս բերդաքաղաքը, որը հայտնի է իր ցամաքային ու ծովային ամրոցներով, 13-րդ դ. կեսերին պատկանում էր Կիլիկիո Կոստանդին սպարապետի (1226-ից թագավորահայր) կրտսեր որդիներից Օշին պայլին (մահ. 1265թ.): Նրա ավագ եղբայրներն էին Հեթում Ա թագավորը (1226-1269) եւ Սմբատ Սպարապետը: Օշինին պատկանած բերդերի մասին Սմբատ Սպարապետը գրում է . «որ եւ նա տեր գլով զերագոյն դղեկին Կուռիկօսոյ, Միտիզօնին, Մանիօնին, Կանչոյն եւ այլ փոքրագոյն ամրոցաց»¹: Հեթում Կոռիկոսցին այս Օշին պայլի երեք որդիներից կրտսերն էր:

Հեթում Կոռիկոսցուն նվիրված առայժմ միակ ամբողջական ուսումնասիրության հեղինակ Կլոդ-Արմեն Մութաֆյանը մանրամասնորեն անդրադարձել է նրա ծագմանը, կենսագրությանն ու գործունեությանը²: Ըստ նրա՝ Օշին պայլի ավագ որդին՝ Կանչի (Կանչնո) բերդի տերն էր, մյուս որդին՝ Կոռիկոսի տերը, սակայն վերջինիս վաղ մահանալու պատճառով (1277թ.) մոտավորապես 1280թ. եղբայրներից կրտսերը՝ Հեթումը, դարձել է Կոռիկոսի տերը³: Կլոդ-Արմեն Մութաֆյանը ենթադրում է, որ Հեթում Կոռիկոսցին ծնվել է մոտավորապես 1240-ական թվականներին, 1280-90թթ. շրջանում ամուսնացել է Զաբելի (Զաբլուն) հետ, որը մոր կողմից նույնպես Հեթումյան տոհմից էր⁴: Հեթում Կոռիկոսցին 1293թ. ստացած Ավետարանի հիշատակարանում նշում է իր կնոջը եւ որդիներին⁵, որոնցից ավագը՝ Օշի-

1. Սմբատայ Սպարապետի Տաբեզիրը, Վենետիկ, 1956, էջ 244:

2. Claude Mutafian, Héthoum de Korykos historien armenien un prince cosmopolite a l'aube du XIVe siècle, "Cahiers de recherches médiévales" No. 1, Orléans, 1996, pp. 157-174:

3. Claude Mutafian, Héthoum de Korykos, p.161

4. Հեթում Կոռիկոսցին Հեթում Ա թագավորի եղբոր որդին էր, իսկ նրա կին Զաբելը, նույն Հեթում թագավորի Մարիամ դստեր (ամուսինը՝ Կիպրոսի սենեշալ Բալդուինի որդի Գի Իբելինացի) դուստրը: Տե՛ս Claude Mutafian, Héthoum de Korykos, p. 161, 176.

5. Նույն տեղում, հմմտ. աստ, հավելված 2:

նը, հետագայում դարձել է Կիլիկիո պայլ, իսկ Կոստանդինը՝ սպարապետ (գունդստաբլ), երկուսն էլ քաջ զինվորականներ էին⁶:

Հեթում Կոռիկոսցու մասին տեղեկություններ ենք գտնում նրա ստացած ձեռագրերի հիշատակարաններում: Դրանցից առաջինը 1287թ. գրված պատմական եւ տոմարական հարուստ ժողովածու է (այժմ պահվում է Հռոմում, Վատիկան, ձեռ. թիվ 3), որի նյութերը Հեթումի պատվերով հավաքելու ընդօրինակել է Ստեփանոս գրիչը՝ հիշատակարանում նշելով. «Հրամանաւ թագազարմ իշխանին իշխանաց՝ բարեպաշտին եւ աստուածասիրին Հեթմո տեառն Կուրիկոսի, շինեցաւ եւ գրեցաւ Ամսամտիկս այս ձեռամբ Ստեփանոսի նըւաստ քահանայի...»⁷:

Հաջորդ մատյանը վերը նշված 1293թ. Ավետարանն է (Ս. Էջմիածին, ձեռ. թիվ 1250)՝ գրված Հեթում Կոռիկոսցու քարտուղար՝ դպիր Վասիլի ձեռքով, որի պատմական նյութերով հարուստ եւ ծավալուն հիշատակարանը հրատարակվում է սույն գրքի վերջում (տե՛ս հավելված 2, հիշատակարանի պարունակած տեղեկություններին ավելի հանգամանորեն կանդրադառնանք հաջորդ ենթաբաժիններում):

Հեթումի ստացած մյուս ձեռագիրը Բժշկարան է (պահվում է Վենետիկում, ձեռ. թիվ 1281), որը 1294թ. ընդօրինակել է Վարդ Մրտիչցին: Ձեռագիրը պարունակում է մասամբ արաբերենից թարգմանված, մասամբ Մխիթար Հերացու գրած բժշկագիտական նյութեր: Հիշատակարանում նշվում է. «Զստացող Բժշկարանիս զմեծ սեւաստիօս եւ թագաւորագն եւ բարեհամբաւ զայրն զպարոն Հեթում տէր Կօռիկօսոյ եւ զիւրս ամենայն, զկենդանիս եւ զհանգուցեալս յիշեսցիք... գրեցաւ ի թու(ականիս) ՉԽԳ (1294) ի թագ(աւորութեանն) Հեթմոյ եւ ի հայր(ապետութեանն) Գրիգորի»⁸:

Հեթում Կոռիկոսցին վաղ տարիքում սերտորեն առնչվել է իր հորեղբոր՝ Հեթում Ա թագավորի հետ, որի մասին նշում է «Ծաղիկ պատմութեանց...» գրքում, որպէս իշխան կայացել է վերջինիս որդու՝ Լեւոն Գ (II)-ի (1269-1289)

6. Երկուսն էլ սպանվել են 1329թ. Լեւոն Ե (IV) (1320-1342) թագավորի հրամանով, որի խնամակալներն էին: Նույն թագավորի հրամանով Կոռիկոսը խլվեց այս տոհմից (այս մասին հանգամանորեն տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, Երևան, 2007, էջ 395-406):

7. Ձեռագրում առկա են Կիլիկիայի պատմությանը վերաբերող նյութեր, զանազան ցանկեր, Հեթում Հեղիի թարգմանությունները, նաեւ Սամվել Անեցու ժամանակագրության մի ընդօրինակությունը, որն այստեղ շարունակված է մինչև 1271թ.: Հեթում Կոռիկոսցու պատվիրած նյութերը հավանաբար այս մատյանի միայն մի մասն են կազմում: (տե՛ս Codices Armeni bybllothecae Vaticanae Borgiani Vaticani Barberiniani Chisiani, Rome, 1928, p. 216-221, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Մաթեոսյան, Երևան, 1984, էջ 610):

8. Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Ը., 3օրինեց Ս. Ճեմճեմեան, Վենետիկ, 1998, էջ 721-722, Ղ. Ալիշան, Մխուսան, Վենետիկ, 1885, էջ 337:

Ժամանակ: Դրան հաջորդած շրջանում, երբ գահին անցավ Լեւոն Գ-ի ավագ որդուն՝ Հեթում Բ-ին (1289-1306թթ. ընդհատումներով), երկիրը ճգնաժամի մատնվեց, որովհետեւ նա քանիցս հրաժարվեց իշխանությունից (բայց ոչ գահից), չթագադրվեց, այլ դարձավ լատին կրոնական՝ Հովհաննես անունով, հաջորդաբար իր Թորոս եւ Սմբատ եղբայրներին հանձնելով իշխանությունը, այնուհետեւ նրանց ինքնուրույնացումից անհանգստանալով, խլեց այն եւ այլն⁹: Այս խառնաշփոթ շրջանում Հեթում Կոռիկոսցին, ըստ երեւույթին, միշտ չէ, որ թագավորի համախոհն է եղել: Այդ մասին կարելի է եզրակացնել նրա իսկ ժամանակագրության մեջ այլ ձեռքով կատարված երկու ընդմիջարկությունից, որոնցից մեկում (1293) ասվում է. «Դա եղեւ Հեթում թագաւորի յիր իշխանացն, որք էին գլուխք պարոն Հեթում Կառիկոսոյ տէրն եւ իր եղբայրն պարոն Աւշին՝ Կանչոյն տէրն եւ յայլ բազում իշխանացն»¹⁰: Այդ թվականին էր, որ Հեթում Բ-ն իշխանությունը հանձնեց Թորոս եղբորը (ինչի մասին նշվում է նույն ժամանակագրության մեջ եւ այլ աղբյուրներում): Իսկ Ժամանակագրության 1294թ. դիմաց, որտեղ ասվում է, որ Հեթում Բ-ը Թորոսից հետ վերցրեց իշխանությունը, ավելացված է. «Եւ ի սոյն ամի փախեաւ պարոն Հեթում Կառիկոսայ տէրն եւ իւր եղբայրն պարոն Աւշինն»¹¹ (հավանաբար Հեթում Կոռիկոսցին եղել է Թորոսի կողմնակիցներից):

Այս տեղեկությունները ունանց ենթադրել են տվել, թե Հեթում Կոռիկոսցին այդ ժամանակ անվերադարձ հեռացել է երկրից¹², որը թյուրիմացություն է, քանի որ 1296-ին նա համարվում է Կոռիկոսի տերը: Այդ թվականին էր, որ Հեթում Բ-ն այս անգամ էլ իշխանությունը հանձնեց իր մյուս եղբորը՝ Սմբատին, որը, փորձելով ազատվել մրցակից եղբայրներից, Թորոսին սպանել տվեց, իսկ Հեթումին կուրացրեց: Որոշ ժամանակ անց քաղաքական բարդ իրավիճակում Սմբատին ընդդիմացավ նրա կրտսեր եղբայր Կոստանդինը եւ ճակատամարտում հաղթանակ տանելով՝ 1298-ին գահին վերադարձրեց Հեթում Բ-ին, մեռնոով բուժել տվեց նրա անվնաս մնացած մեկ աչքը: Ապաքինվելուց հետո Հեթումն իր Սմբատ եւ Կոստանդին եղբայրներին աքսորեց Կոստանդնուպոլիս (1299թ.): Այս ամենի մասին ման-

9. Այս մասին հանգամանորեն տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 337-379:

10. Բնագիրը հրատարակվում է ստորեւ, նախորդ հրատարակությունները տե՛ս Նկարագիր Օշին թագաւորի ձեռագիր Ժամագրքին, 1319, նկարագրեց Արտաւազդ արքեպիսկոպոս, Անթիլիաս, 1933, էջ 100, հմմտ. Սժ, հ. 1 էջ 86-87:

11. Նույն տեղում:

12. Ն. Ալիինեան, Գրախօսական, «Հանդէս ամսօեայ», 1957, էջ 507:

րամասնորեն պատմում է հենց Հեթում Կոռիկոսցին իր «Ծաղիկ պատմութեանց...» երկում¹³:

Ավելացնենք, որ Ժամանակագրության 1296 թվականի դիմաց եղած մեկ այլ հավելման մեջ նշվում է Հեթում Բ-ի նկատմամբ անհնազանդության մի ուրիշ դեպքի մասին «...դաւ եղեւ նմա յիշխանացն, որ էին գլուխք պարոն Աւշին սինիջալն, որդի պարոն Սմբատ Գունդուստապլին եւ պարոն Աւշին Բակուրնանց, որ էր ասպասալար Դարպսուն...»: Դատելով այն բանից, որ «դաւ եղեւ...» բառերով սկսվող եւ միանման շարադրանքով երկու հատվածներում (1293, 1296թթ.) նկարագրված դեպքերը հայտնի են միայն այս աղբյուրից (եթե իրական դավաճանություն կամ դավադրություն եղած լինէր, հավանաբար կհիշվէր նաեւ այլ տեղերում), եւ որ նշված «ընդվզումների» պարագլուխները չեն գրկվել իրենց տիրույթներից, իսկ որոշ ժամանակ անց հիշվում են որպէս Հեթում Բ-ի գործակիցներ եւ պաշտոններ վարում, մասնավորապէս 1299 եւ 1303 թվականներին Հեթում Կոռիկոսցին թագավորի հետ էր նրա սիրիական արշավանքների ժամանակ, իսկ Օշին սենեշալը, արդէն որպէս գունդստաբլ, 1307-ին սպանվեց թագավորի հետ միասին, պետք է կարծել, որ վերոնշյալ վկայություններում «դաւ» բառն օգտագործվել է «դավի»՝ վեճ իմաստով, եւ դրանք իրականում ինչ-ինչ հարցերի շուրջ անհամաձայնության, վեճի միջադեպեր են եղել: Ամեն դեպքում, Հեթում Բ-ի եւ Հեթում Կոռիկոսցու հարաբերությունների լարվածությունը կամ առնվազն սառնությունը իրականություն պետք է համարել՝ ելնելով նաեւ «Ծաղիկ պատմութեանց...» գործում այս թագավորի մասին հիշատակությունների չոր ոճից:

Այդ նույն երկում Հեթում Կոռիկոսցին, անդրադառնալով մոնղոլական Ղազան խանի (1295-1304) 1299թ. հաղթական արշավանքին, որին հայկական զորաբանակով մասնակցում էր Հեթում Բ թագավորը, պատմում է, թե ինչպէս Ղազանը՝ այդ կարճահասակ ու տգեղ մարդը, մի օր խորտակեց թշնամու հզորությունը, իսկ հաջորդ օրն առատաձեռնորեն բաժանեց ավարը, ընդգծելով, որ ինքն այդ ամենը տեսել է իր աչքերով («զայս ամենայն աչօք տեսի»), քանի որ ներկա էր¹⁴: Դատելով այս երկի այլ մանրամասներից՝ Հե-

13. Հեթում Կոռիկոսցու պատմության այս հատվածը դուրս է թողնված նրա երկի 1842թ. հայերեն թարգմանությունից, տե՛ս Hayton, La Fleur des Histoires de la terre d'Orient, "Recueil des historiens des Croisades" Documents Arméniens, t II, Paris, 1906, p. 209-210 (այսուհետեւ՝ Hayton): Կիլիկյան գահի շուրջ ծավալված հիշյալ դեպքերի մասին հանգամանորեն տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ., էջ 348-360:

14. «Իբրեւ դարձաւ արքայն Հայոց առ Ղազան, եգիտ զի քաղաքն Ղազանայ անձնատուր էր եղեալ հանդերձ ամենայն զանձու... զոր Ղազան ճոխաբար առատաձեռնութեամբ բաժանեաց ի մէջ իւրոցն եւ հարստացոյց զնոսա: Ես՝ եղբայր Հեթում, զայս ամենայն աչօք տեսի, զի առաջիկայ էի: Այն էր սքանչելի, զի Ղազան այր փոքրահասակ եւ տգեղ դիմօք, ի միում աւուր խորտակեաց զթշնամիս եւ յաւուր երկրորդի զամենայն ճոխութիւնս առատա-

թում Կոռիկոսցին Հեթում Բ-ի տիրապետության շրջանում նաեւ դիվանագիտական առաքելությունների մասնակից է եղել, շփումներ ունեցել մոնղոլական վերնախավի ներկայացուցիչների հետ:

Հ. Աճառյանը գրում է, որ սիրիական հաջորդ արշավանքից եւ 1305թ. եգիպտացիների դեմ հաղթական ճակատամարտից հետո Հեթում Կոռիկոսցին «Հեթում Բ-ից խնդրեց հրաժարվել զինվորական եւ աշխարհիկ կյանքից եւ գնալով Կիպրոս մտավ Պրեմոնտրատեանց լատինական կրոնական կարգը (Ordre des Prémontrés)»¹⁵:

Հեթում Կոռիկոսցու՝ Կիպրոս տեղափոխվելուց հետո Կոռիկոսը փոխանցվել է նրա ավագ որդի Օշինին, որը, նաեւ պայլի պաշտոնը ստանալով, դարձավ երկրի ամենաազդեցիկ պետական գործիչը¹⁶: Այս ամենը վկայում են, որ 1293-94թթ. Հեթում Կոռիկոսցու՝ Հեթում Բ-ի հետ ունեցած հակասությունը ճակատագրական բնույթ չի կրել եւ հարթվել է:

Ի՞նչ պաշտոն է ունեցել Հեթում Կոռիկոսցին կիլիկյան արքունիքում 1280-1290-ական թվականներին: Նրա անունը ուսումնասիրողները նշում են Կիլիկիո Հայոց սպարապետների եւ պայլերի շարքում¹⁷, սակայն պաշտոնի մասին ուղղակի վկայություն աղբյուրներում հայտնի չէ:

Հնարավոր է, որ Հեթում Կոռիկոսցու Կիպրոս տեղափոխվելը միայն նրա կրոնական զգացումների հետ չի կապված եղել, այլ նաեւ քաղաքական նպատակներ է հետապնդել: Հայտնի է, որ 1306-ին Կիպրոսում հեղաշրջմամբ իշխանության է եկել Հենրի Բ թագավորի եղբայրը՝ Ամորին, որի մտերիմ բարեկամն էր Հեթում Կոռիկոսցին: Այս դեպքերի մասին Լ. Տեր Պետրոսյանը գրում է. «Հեթում Կոռիկոսցին (հայտնի Հայթոն պատմիչը) հեղաշրջումից անմիջապես հետո Ամորիի կողմից գործուղվեց Արեւմուտք, խնդիր դնելով՝ Հռոմի պապի օրինությամբ օրինականացնելու իշխանության բռնազավթումը»¹⁸: Հեթում Կոռիկոսցու այս դիվանագիտական առաքելությունը հաջողությամբ ավարտվեց, քանի որ պապն Ամորիին ճանաչեց «Կիպրոսի թագավորության կառավարիչ»: «Հեթումը Կիպրոս վե-

ձեռնօրեն բաշխեաց ի մէջ իւրոցն...» (Հեթում պատմիչ թաթարաց, յեղեալ ի լատին օրինակէ ի հայ բարբառ ի ձեռն Հ. Մկրտիչ վարդապետի Աւգերեան, Վենետիկ, 1842, էջ 62, այսուհետեւ՝ Հեթում Պատմիչ):

15. Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Երեւան, 1946, էջ 73-74: 14-րդ դ. կեսերին այս օրդենը Եվրոպայում շուրջ 1300 վանք ուներ:

16. Օշին Կոռիկոսցին գահաժառանգ Լեւոն Ե (IV)-ի չորս խնամակալներից ամենաազդեցիկն էր եւ ամուսնացել էր վերջինիս մոր՝ 1320-ին մահացած Օշին թագավորի այրու՝ Յովհաննա Անժուացու հետ: Այս մասին տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 395-404:

17. Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 484, Տաբեգիրք Սմբատայ Սպարապետի, Փարիզ, 1859, էջ 137, Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, էջ 73 եւ այլն:

18. Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. 1, Երեւան, 2005, էջ 120:

րադարձավ 1308թ. մայիսին՝ իր հետ բերելով պապի նամակներն՝ ուղղված Ամորիին, որոնցում պահանջվում էր դադարեցնել Կիպրոսի Տաճարականների գործունեությունը...»¹⁹:

Բայց Հեթում Կոռիկոսցու Ֆրանսիա մեկնելը ունեցավ նաեւ մեկ այլ նշանակալից արդյունք. դա վերը նշված «Ծաղիկ պատմութեանց Արեւելից աշխարհի» (*La Fleur des Histoires de la terre d'Orient*)²⁰ գործի ստեղծումն էր Կղեմես Ե պապի հանձնարարությամբ: Հեթում Կոռիկոսցու երկը հին ֆրանսերենով գրի առած Նիկոլաս Ֆալկոնը գրքի սկզբում գրում է. «Այստեղ սկսվում է Ծաղիկ Արեւելից աշխարհի պատմության գիրքը, որը հորինեց Հայթոն եղբայրը, Կոռիկոսի իշխան, Հայաստանի թագավորի ազգական, առաքված Կղեմես 5-րդ սրբազան քահանայապետի հրամանով, մեր Տիրոջ թվականի 1307 տարվա օգոստոս ամսին, Ֆրանսիայի թագավորության Պուատիե քաղաքի մեջ»: Իսկ գրքի վերջում նշում է. «Այս գիրքը ես՝ Նիկոլաս Ֆալկոն, նախ ֆրանսերեն գրեցի, ինչպես Հայթոն եղբայրը բանավոր պատմեց, առանց նոթերի եւ օրինակի, եւ ֆրանսերենից լատիներեն թարգմանեցի: Եւ այս գիրքն իր ձեռքում ունեցավ Նորին Սրբություն քահանայապետը մեր Տիրոջ 1307 թվականի օգոստոս ամսին»²¹:

Հեթում Կոռիկոսցին գրքի հատվածներից մեկում Ղազան խանի հաջորդի եւ հայերի ու եգիպտացիների միջեւ հաստատված խաղաղության մասին պատմելուց հետո իր մասին հետեւյալն է ասում. «Ես՝ եղբայր Հայթոնս, նախորդ պատմածներիս ականատեսը լինելով, վաղուց մտադրվել էի կրոնավորի սքեմ հագնել, բայց (Հայոց) թագավորության դժվարին դրության պատճառով չկարողացա թողնել թագավորությունը, սակայն Բարձրյալի կամքով կատարեցի սրտիս ցանկությունը, գնացի Կիպրոս եւ առա Պրեմոնստրատեանց կարգը 1305 թվին»: Ապա նա հուսառատ խոսքերով նշում է Հեթում Բ-ի հաջորդի՝ նրա սպանված եղբայր Թորոսի որդի Լեւոն Դ(III)-ի գահակալության մասին. «Փառք Աստծո, քանզի Հայոց թագավորությունը բարվոք վիճակում է եւ Աստծո զորությամբ տեր Թորոսի որդի Լեւոնի ձեռքում իր նախկին վիճակն է ստանում...» (ճակատագրի հեգնանքով, այս խոսքերի գրվելուց 3 ամիս անց, 1307թ. նոյեմբերի 17-ին, Լեւոն Դ-ն իր հորեղբայր Հեթում Բ-ի հետ սպանվեց մոնղոլ զորավար Բիլարդուի ձեռքով): Դրանից հետո գրառողը պատմում է Հեթում Կոռիկոսցու շուրթերից լսածը նրա աղբյուրների մասին հետեւյալ խոսքերով. «Գրքիս ստուգա-

19. Նույն տեղում, էջ 121: 1310թ. Կիպրոսի կառավարիչ Ամորին դավադրաբար սպանվեց:

20. Հայ ուսումնասիրողները երբեմն վերնագրում նախընտրում են օգտագործել «ծաղկաբաղ» բառը:

21. Hayton, p. 113, 253, տե՛ս նաեւ Ֆ. Ֆելտի, Հեթում Պատմիչ հեղինակ..., էջ 9:

պատում հորինողը, այն ինչ որ պատմում է Չինգիզ խանից մինչև Մանգու խանը, վերցրել է թաթարների պատմությունից, Մանգու խանից մինչև Հուլավուն պատմում է ըստ իր հորեղբորից լսածի, որը ներկա է գտնվել բոլոր եղելություններին: Ապաղա խանից մինչև գրքի վերջը՝ ինքն է ականատես եղել բոլոր անցքերին»²²:

Այն հանգամանքը, որ Հեթում Կոռիկոսցին շատ կարճ ժամանակում բառացիորեն թելադրել է իր երկը²³ հարյուրավոր օտար տեղանունների, անձնանունների ու այլ անվանումների հիշատակությամբ, արդեն իսկ վկայում է նրա գիտելիքների հարուստ պաշարի եւ մտավոր բարձր կարողությունների մասին: Բնական է, որ Հեթում Կոռիկոսցին դա կարողացել է անել տարիների ընթացքում կուտակած գիտելիքների եւ այն բանի շնորհիվ, որ մինչ այդ արդեն զբաղվել էր պատմական նյութեր ժողովելով, թարգմանությամբ, ժամանակագրություններ կազմելով: Ըստ էության, Կոռեմես պապն էլ իմացել է, որ իր պատվերը կատարելու ընդունակ անձնավորության է հանձնարարում Արեւելքի երկրների մասին պատմաաշխարհագրական աշխատություն պատրաստել («Ծաղիկ պատմութեանց...» երկի բովանդակության մասին կխոսվի ստորեւ, Հեթում Կոռիկոսցու աշխատությունների բաժնում):

Բայց ավելի հետաքրքրական է խաչակրաց նոր արշավանքի կազմակերպման մասին այդ երկում եղած հատվածը: Ինչպես նկատում է ֆրանսիացի ուսումնասիրող Մարի-Աննա Շեվալիեն, Հեթումի երկի չորրորդ մասը «խաչակրաց արշավանքին վերաբերող տրակտատ է, որն այս խնդրի շուրջ Պապի հարցերի պատասխանն է...: Խաչակրաց արշավանքի նրա (Հեթում Կոռիկոսցու - Կ. Մ.) նախագիծը, որը վերաբերում էր երթուղիներին, թշնամական ուժերին, ֆրանկներին անհրաժեշտ դաշինքներին ու զինված ուժերին, վերանվաճման շարժառիթներին, նպատակահարմար ժամանակաշրջաններին եւ բազում այլ մանրամասների՝ մեծապես հետաքրքրել է Պապին»²⁴: Հեթում Կոռիկոսցին առաջարկություններ է ներկայացրել գլխավոր թշնամուն՝ Եգիպտոսի սուլթանությանը ծովային շրջափակմամբ

22. Հեթում Պատմիչ, էջ 67-68 (վերածել ենք աշխարհաբարի): Վերջին հատվածի գրաբարում նշվում է, թե Կոռիկոսցին լսել է «ի քեռոյ իւր», բայց խոսքը Հեթում Ա թագավորի մասին է, որը նրա հորեղբայրն էր: Պատճառը «oncle» բառն է, որն օգտագործվում է եւ քեռու եւ հորեղբոր պարագայում: Իսկ հետագա դեպքերին ականատես լինելու մասին բազմաթիվ օրինակներ կարելի է գտնել նրա երկում: Հատկապես ուշագրավ է վկայությունը թաթար խաների վրանը երկիցս անձամբ տեսած լինելու մասին (Նույն տեղում, էջ 32):

23. Հեթումը երբեմն տալիս է որոշ գրքերի ու հեղինակների անուններ (Տե՛ս Հեթում Պատմիչ, էջ 19, 30, 31, 36) որոնցից օգտվել է, բայց ինչպես երևում է Նիկոլաս Ֆալկոնի խոսքերից, դա արել է հիշողությամբ:

24. Մարի-Աննա Շեվալիե, Կիլիկյան Հայաստանի եւ հոգեւորասպետական միաբանությունների փոխհարաբերությունների պատմությունից, Երեւան, 2007, էջ 20-21:

թուլացնելու (քանի որ այն հաց էր ներմուծում ծովային ճանապարհով), մոնղոլների եւ այլոց հետ դաշնակցելու, խաչակիրների գորքի արդյունավետ երթուղիները որոշելու (նպատակահարմար էր գտնում Կիլիկիան), դաշնակից ուժերի միասնաբար գործելու, ինչպես նաեւ արշավանքի ճիշտ պահը ընտրելու վերաբերյալ: 1307-ին իր այս ծրագիրը պապին ներկայացրած Հեթում Կոռիկոսցին գտնում էր, որ դա հենց արշավանքի համար ամենանպաստավոր պահն էր:

Հայտնի է, որ այս ծրագրի եւ մասնավորապես խաչակրաց գորքերի Կիլիկիայում ափհանման նպատակահարմարության վերաբերյալ Կղեմես Ե պապը հարցում է արել Տաճարականների մեծ մագիստրոսին, որից, սակայն, մերժողական պատասխան է ստացել²⁵:

Հեթում Կոռիկոսցին իր երկն անձամբ հանձնել է Կղեմես պապին եւ այդ պահը ներկայացված է ֆրանսիական մի քանի ձեռագրերի մանրանկարներում²⁶: Ֆ. Ֆեյդիի բնորոշմամբ այս ուշագրավ աշխատության հատկապես վերջին մասը Հեթում Կոռիկոսցուն բնութագրում է որպես «խաչակրության քարոզիչ եւ կազմակերպիչ», բայց նաեւ՝ «հայրենասեր մարդ»²⁷, իսկ ընդհանրապես, այս գործում նա հանդես է բերում ոչ միայն Արեւելքի հարցերի խորը իմացություն, այլեւ ռազմավարական մտածողության տեր քաղաքական գործչի հատկանիշներ²⁸:

Հարկ է ավելացնել, որ իր երկում Հեթում Կոռիկոսցին կարելուք տեղեկություններ է հայտնում նաեւ Կիլիկիայի Հայոց պետության մասին, որոնք իր գրքում օգտագործելով՝ Լ. Տեր-Պետրոսյանը նրան համարում է «Կիլիկիո

25. Մարի-Աննա Շեվալիե, նշվ. աշխ., էջ 21:

26. Ֆ. Ֆեյտի, Հեթում Պատմիչ հեղինակ, էջ 8, 17, 23:

27. Նույն տեղում, էջ 26:

28. Նոր խաչակրության նախագիծն անձամբ Հռոմի պապին ներկայացնելու համար ընտրելով առավել արդյունավետ ճանապարհ՝ ներկայանալով կաթոլիկ վանականի հանգամանքով, կարծում ենք, որ Հեթում Կոռիկոսցին ծրագիրը նախապես համաձայնեցրել էր Հայոց թագավոր կամ այդ պահին՝ ավագ պարոն Հեթում Բ-ի եւ Կիպրոսի կառավարիչ Ամորիի (որի կինը Հեթում Բ-ի քույրն էր) հետ: Հեթումի գիրքը բարձր են գնահատել եվրոպացի եւ ռուս հետազոտողները (այս մասին տե՛ս Լ. Բաբայան, Դրվագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության, Երեւան, 1981, էջ 342-343): Նոր խաչակրության կազմակերպման համար Հեթում Կոռիկոսցու երկը դարձել է նաեւ շատերին ոգեւորող եւ նոր ծրագրերի համար օրինակ ծառայող մի գործ (տե՛ս Գ. Абгарян, Архетип “Татарской хроники” Гетума, использованный в “Любекской хронике” Детмара, Պատմա-բանասիրական հանդես, 1978, N 1, էջ 157-170): Այն մեկ այլ տեսակետից արժեւորելով՝ Մ. Զուլալյանը գրում է. «13-րդ դարի 50-80-ական թվականների հայ-մոնղոլական քաղաքական կապերի, մոնղոլների վարած արտաքին քաղաքականության հարցերը եւ ոչ մի պատմական աշխատության մեջ այնքան խորը ու բազմակողմանի չեն լուսաբանված, ինչպես դա արված է Հեթում պատմիչի հին ֆրանսերենով գրված «Ծաղկաբաղուն» (Մ. Զուլալյան, Հայ ժողովրդի 13-18-րդ դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, գիրք Ա, Երեւան, 1990, էջ 77):



Հեղում Կոդիկոսցին իր գիրքը հանձնում է Հռոմի Կղեմես Ե պապին:
15-րդ դարի առաջին կեսի մանրանկար (Ֆրանսիայի ազգային գրադարան, ձեռ. N 1255):

արքունիքի անցուղարձերին եւ գահաժառանգության իրավունքի նրբություններին քաջաճանոթ հեղինակ»²⁹, բայց որոնք այդ գործի չորրորդ մասի եւ այլ կարեւոր հատվածների հետ միասին դուրս են մնացել Կոդիկոսցու երկի հայերեն թարգմանությունից (վենետիկյան հրատարակություն):

29. Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 367, 375:

Հեթում Կոռիկոսցին եղել է լատինական կողմնորոշման գործիչ³⁰։ Հայոց թագավորության ուժն իրատեսորեն գնահատելով՝ նա համարել է, որ առանց արտաքին օգնության այն չի կարող դիմակայել թշնամաբար տրամադրված մահմեդական շրջապատին եւ այդ փրկարար ուժի աղբյուր է համարել Հռոմի պապի ազդեցության ներքո գտնվող Արեւմուտքը։ Հասկանալի է, որ իր այդ կողմնորոշման համար նա Կիլիկիայում ունեցել է հակառակորդներ։ Նրա անունը՝ որպես լատինամետ գործիչ, հիշատակվում է անգամ Գլաձորի համալսարանի նշանավոր ուսուցչապետ Եսայի Նչեցու մի դավանական թղթի վերնագրում՝ «Երջանիկ րաբունոյն Եսայեայ ասացեալ վասն դաւանութեան հաւատոյ ընդդէմ պարոն Հեթոյ Կիռիկոսցոյն», թեեւ բուն նամակը հասցեագրված է Հեթում Կոռիկոսցու որդի Օշինին («Պարոն, պայլ եւ մարգպան ամենայն հայոց Աւշին...»)³¹։

1308-ին Կիպրոս վերադառնալուց հետո Հեթում Կոռիկոսցին հավանաբար թողել է վանքը³² եւ վերադարձել Կիլիկիա, որը ծանր ցնցում էր ապրել երիտասարդ Լեւոն Դ թագավորի եւ Հեթում Բ-ի՝ մոնղոլ ուխտադրուժ զորավարի ձեռքով սպանությունից հետո։ Կ-Ա. Մութաֆյանի կարծիքով 1309-ին Հեթում Կոռիկոսցին ստանձնել է Կիլիկիո գունդստարի պաշտոնը։ Կղեմես Գալանոսի՝ լատիներենով շարադրված երկում Ադանայի 1316թ. եկեղեցական ժողովի մասնակիցների թվում հիշատակվող Հայթոնը («Hayton, Armeniorum Dux Generalis»)³³ ամենայն հավանականությամբ հենց Հեթում Կոռիկոսցին է։ Այս հանգամանքից ելնելով՝ ենթադրվում է, որ Հեթում Կոռիկոսցին մահացել է 1316 թվականից հետո մինչեւ 1320 թվականը³⁴։

30. Ռընե Գրուսեն այս կապակցությամբ գրում է. «Կիլիկյան բարձր հասարակության մի որոշ հատվածի՝ լատինականությանը հարելու շարժումը լուսաբանվում է Հեթում Կոռիկոսցու՝ «Հայթոն վանականի» օրինակով (ծնված 1230-1245թթ., մահացած, անկասկած, 1314-ից հետո)։ Դա արքայական ընտանիքից սերած մի իշխան էր, հավանաբար Հեթում Ա թագավորի զարմիկներից մեկը։ 1305 թվականին նա կաթոլիկ վանական դարձավ Կիպրոսի Լապայիս բնակավայրի Պրեմոնտրյան վանքում։ Նա գրեց «Արեւելքի պատմություն» ֆրանսերեն աշխատությունը, որը 1307 թվականին Պուատիեում նվիրեց Կղեմես 5-րդ պապին, ցուցաբերելով ասիական խնդիրների փայլուն իմացություն եւ հանդես գալով որպես մոնղոլական դաշինքի հաստատամիտ կողմնակից» (Ռընե Գրուսեն, Լեւանտի կայսրությունը, հայերեն թարգմանությունը տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Ա, էջ 357)։

31. Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Է, յօրինեաց Ս. Ճեմճեմեան, Վենետիկ, 1996, էջ 427-428։

32. Մեկ այլ ենթադրության համաձայն Հեթում Կոռիկոսցին կրկին Եվրոպա է գնացել եւ Պուատիեի վանքի արքեպիսկոպոս դարձել (Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 339, Ֆ. Ֆեյտի, Հեթում Պատմիչ հեղինակ, էջ 9)։

33. Հայերեն հատվածում թարգմանված է՝ «Հեթում մեծ Սպարապետն Հայոց» (Մխաբանութիւն Հայոց սուրբ Եկեղեցոյն ընդ մեծի սուրբ Եկեղեցոյն Հռովմայ, շարադրեալ... Կղեմես վարդապետ, հ. Ա, Հոռոմ, 1690, էջ 504)։

34. Claude Mutafian, Héthoum de Korykos, p. 172, p. 172, Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 625։

Բ. ՀԵԹՈՒՄԸ՝ ԲԵՐԴԱՏԵՐ
ԵՒ ԿՈՌԻԿՈՍԻ ԾՈՎԱՅԻՆ ԱՄՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՈՂ

ՄԻՆՉԵՒ ՀԵԹՈՒՄ Կոռիկոսցուն նվիրված Կլոդ-Արմեն Մուրաֆյանի հոդվածի հրապարակումը (1996թ.) հայագիտությանը հայտնի էր, որ Հեթումը միայն Կոռիկոս բերդաքաղաքի³⁵ տերն է եղել: Սակայն հիշյալ հոդվածում հեղինակը վկայաբերում է մի մասնավոր հավաքածուի 1293թ. հիշատակարանի հատված, որտեղ Հեթումը համարվում է մի քանի բերդերի տեր («...seigneur de Korykos, de Manion, de Bounar, d'Anamur»)³⁶: Ավելի ուշ հայտնի դարձավ, որ այդ ձեռագիրը պատկանել է Շահե արքեպս. Աճեմյանին, որն էլ այն նվիրել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Դա 1293թ. Հեթում Կոռիկոսցու ստացած վերը նշված Ավետարանն է, որի հիշատակարանի միայն երկրորդ եւ կրճատված մասն էր հայտնի (երկիցս հրատարակված)³⁷, իսկ բուն ձեռագիրը կորած էր համարվում: 2006-ին Շահե արքեպս. Աճեմյանը փոքր առաջաբանով հրատարակել է Ավետարանի հիշատակարանն ամբողջությամբ³⁸: Հեթում Կոռիկոսցուն պատկանած բերդերին վերաբերող հատվածը հիշատակարանի առաջին մասում է, ուր մասնավորապես ասվում է. «...Հեթում, որդի Աւշին՝ եղբար Հեթմոյ Հայոց թագաւորի, որ եւ ես՝ Հեթում շնորհաւք ողորմութեանն Աստուծոյ տէր Կուռիկաւոյ եւ Մանիաւնին, Պունառոյ, Անամուռին եւ Կուպային եւ այլոց ամրոցացն, որ առ կողմամբքն Սավրիո եւ գաւառաց բերդիցն, ստացա զսուրբ Աւետարանս...»³⁹:

Հեթում Կոռիկոսցուն պատկանած բերդերի այս տպավորիչ ցանկը վկայում է հիշյալ շրջանում նրա չափազանց ազդեցիկ գործիչ լինելու մասին: Բավական է նշել, որ Միջերկրականի ծովափնյա Անամուռը գտնվում է Կոռիկոսից շուրջ 100 կմ արեւմուտք, անմատչելի Մանիոնը ժամանակին Ատան պալլի գլխավոր բերդն էր (որին Լեւոն Բ (I) թագավորն իր միակ դստեր Զաբելի խնամակալ էր կարգել):

Եթե Կոռիկոսը, Անամուռը, Մանիոնը հանրահայտ բերդեր են, ապա

35. Կոռիկոսը նշանավոր քաղաք էր նավահանգիստ է եղել դեռեւս անտիկ շրջանում: Այսօր էլ հաստատված ծովահենները մեծ անհանգստություն են պատճառել հոռմեացիներին:

36. Claude Mutaftian, Héthoum de Korykos, p.161.

37. Ավետարանի հիշատակարանը որոշ կրճատումներով արտագրված է եղել 1608թ. մի ժողովածուի մեջ (Մատենադարան, ձեռ. 5613), որից էլ 1948-ին հրատարակել է Վ. Հակոբյանը (Վ. Հակոբյան, Հեթում պատմիչի հիշատակարանը, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1948, N 10, էջ 66-73), իսկ երկրորդ անգամ՝ Ա. Մաթեոսյանը՝ 13-րդ դարի հիշատակարանների ժողովածուում (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 717-719):

38. Շ. Աճեմյան, Հայոց սպարապետ Հեթում պալլի յիշատակարանը, «Հայերեն Աստուածաշունչը» (հայագիտական ուսումնասիրություններ), Երեւան, 2006, էջ 344-351:

39. Նույն տեղում, էջ 348: Ս. Էջմիածին, ձեռ. թիվ 1250, թերթ 448բ: Հիշատակարանն ամբողջությամբ տե՛ս աստ, հավելված 2: «Պունառոյ» բառը գրիչը մանր տառերով ավելացրել է տողի վերելում:



Հեթում Գոռիկոսոցն պատկանած Անամուր բերդը:

Կուսան եւ Պունառը թեւ իրենց բերդակալ իշխանների անունների հետ հիշվում են Սմբատ Սպարապետի Տարեգրքում (այդ իշխանները եկել էին Լեւոն Բ-ի թագադրության հանդեսին)⁴⁰, բայց դրանց գտնվելու ստույգ տեղը հայտնի չէ. «Ճիշտ դիրքն անորոշ է», ինչպես տեղանունների բառարանն է նշում⁴¹: Կիլիկիայի բերդերի պատմության հետազոտող Մ. Յովհաննիսյանը նույնպես Սմբատի հայտնածից բացի այս բերդերի մասին այլ տեղեկություն չի գտել⁴²: Այժմ Հեթում Գոռիկոսոցի հիշատակարանի շնորհիվ կարելի է ասել, որ Կուսան եւ Պունառը գտնվել են Իսաւրիա երկրամասում կամ դրա կողմերում: Ուշագրավ է նաեւ, որ բացի անվանապես հիշվածներից, եղել են նաեւ իշխանին պատկանած այլ ամրոցներ, «գավառների բերդեր»: Այս ամենը մի փոքր իշխանապետություն էր, որը հետո անցել է Հեթում Գոռիկոսոցի ավագ որդուն՝ Օշին պայլին, որն էլ այն ավելի է ընդարձակել՝ դառնալով Իսաւրիա երկրամասի մեծ կոմսը («մեծ գունթն Սաւրիոյ»)⁴³, իսկ 14-րդ դարի 20-ական թվականներին՝ հանգամանքների բերումով՝ «Հայոց թագավորության փաստացի տերն ու տիրակալը»⁴⁴:

Վերադառնալով 1293 թվականի հիշատակարանին՝ նշենք որ դրա երկրորդ մասում արժեքավոր վկայություն կա Կոռիկոսի ծովային ամրոցի կառուցման մասին: Հեթում Կոռիկոսցին նախ պատմում է այդ ժամանակաշրջանի աննախադեպ եւ ճակատագրական իրադարձությունների մասին:

40. Սմբատ Սպարապետ, էջ 210:

41. Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երեւան, 1991, էջ 278, հ. 4, Երեւան, 1998, էջ 369:

42. Մ. Յովհաննեսյան, Հայկական Կիլիկիոյ բերդերն ու բերդաքաղաքները, Վենետիկ, 1989, էջ 245, 310:

43. ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց՝ Լ. Խաչիկյան, Երեւան, 1950, էջ 208:

44. Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 404:



Կոռիկոսի ծովային բերդը ցամաքային բերդից դիտված:

Մամլուքյան Եգիպտոսի սուլթանները մեկը մյուսի հետեւից վերացնում են խաչակիրների վերջին իշխանություններն ու հենակետերը. 1268-ին գրավում նշանավոր Անտիոքը, 1289-ին՝ Տրիպոլին («գեռապարսպեանն Տրապոլիս»), վերջապես 1291 թվականին՝ խաչակիրների Արեւելքում գտնվող վերջին ցամաքային ամրակուռ բերդը՝ Աքքան (Ակրա): Հերթը հասնում է Կիլիկյան Հայաստանին: 1292թ. Մելիք Աշրաֆ սուլթանի (1290-1294) զորքերը պաշարում են կաթողիկոսանիստ Հռոմկլան եւ հունիսի 28-ին գրավում, ավերում են այն՝ Եգիպտոս գերության մատնելով Ստեփանոս կաթողիկոսին ու հայրապետանոցի անգին սրբությունները:

Կիլիկիան հայտնվում է վերահաս վտանգի առջեւ, տագնապում են հատկապես ծովեզերյա շրջանները («յաճախեաց ահ եւ երկիւղ ի վերայ ամենայն քաղաքաց ծովեզերեայց»), ուստի Հեթում իշխանը **«մտախոհ եղեալ գտանել տեղի ամրոցի եւ ապաստանի»** Կոռիկոսի ափամերձ «գեղեցկադիր» կղզում բազում ծախսերով «գեղեցկաշէն» ամրոց է կառուցում: Նաեւ՝ հավատացյալների մխիթարության համար ամրոցում կառուցում է եկեղեցի, միաժամանակ գրել տալիս այդ Ավետարանն ու ընծայում եկեղեցուն: Ահավասիկ հիշատակարանի այդ ամենի մասին վկայող հատվածը. «...եւ Հեթում, մտախոհ եղեալ գտանել տեղի ամրոցի... ցանկացայ գեղեցկադիր այսմ կղզոյս, որ հանդէպ մերոյ աստուածապահ ամրոցիս եւ յարմարեալ շինեցի զսա բազում ծախիւք եւ մեծ փափագանաւք, եւ վասն բնակչացն մխիթարութեան շինեցի տաճար Աստուծոյ եւ տուն աղաւթից

գտուրք եկեղեցիս, որ ի մեջ գեղեցկաշէն ամրոցի բերդիս, յորում եւ ի պէտս լուսաւորութեան հոգւոց որպէս ծառն կենաց ի մէջ դրախտին եւ Աւետարան Քրիստոսի պիտոյ էր այսմ դրախտի եկեղեցւոյ, զոր եւ ետու գրել ի լուսաւորութիւն հոգւոց ի տաճարս յայս աղաւթողաց եւ յիշատակ բարեաց ինձ եւ իմոցն յապագայս ժամանակաց...»:

Այսօր Կոռիկոսի ծովային ամրոցը կանգուն է⁴⁵, իսկ նրա մոտավորապէս կենտրոնում պահպանվել են եկեղեցու հիմնապատերը՝ արեւելյան խորանի հատվածով:

Կոռիկոսի ծովային ամրոցի արեւելյան քառանկյուն բարձրադիր աշտարակի հարավային պատին, աշտարակի մուտքի վերելում պահպանվել է Հեթում Կոռիկոսցու զարդաշրջանակով վիմագիր արձանագրությունը, որը հայագիտությանը ցայժմ հայտնի է եղել Վ. Լանգլուայի, Դ. Ալիշանի բնութագրմամբ՝ «աղաւաղ» ընդօրինակությամբ: Այն հետեւյալն է.

«Ի թուակա(նիս) Հայոց Չ ամին եւ եւթն... թիուն

ի բարեպա(շտ) թագաւորին Հեթմ... թաչգէ

...ամրոցս... Սուլթանին. շինեալ

Մեծ իշխան Հեթմոյ Ռ»⁴⁶:

Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպության (RAA) մեզ տրամադրած լուսանկարներից դատելով արձանագրությունը սկսվում է հետեւյալ կերպ.

«(Ի ԹՈՒԱԿԱՆԻ)Ս ՀԱՅՈՑ ԶԱՐՄԻՆ ԵԻԹՆՀ(ԱՐԻԻՐ)...»,

այսինքն «Չ» (700) թվատառ չկա⁴⁷: Ցավոք տարեթվի տասնավորն ու միավորը եղծված են, բայց պահպանված առանձին տառերի ու մասնիկների եւ մյուս տողերում պահպանված հատվածների, ինչպես նաեւ Վ. Լանգլուայի հրատարակության (նրա ժամանակ առաջին տողերի արձանագիր քարերն ընկած չեն եղել) հիման վրա առաջարկում ենք հետեւյալ վերծանությունը.

45. Ամրոցի ճարտարապետության մասին տե՛ս Հ. Խալվախյան, Հայաստանի պաշտպանական կառույցների հատակագծման կոմպոզիցիոն առանձնահատկությունները, «Հայկական արվեստ», 1, Երևան, 1974, էջ 32:

46. Դ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 336, V. Langlois, Inscriptions Grecques, Romanes, Byzantines et Arméniennes de la Cilicie, Paris, 1854, p. 48.

47. Կոռիկոսի արձանագրության մեջ կարծեցյալ «Չ»-ն թվական համարելով Վ. Լանգլուան արձանագրությունը թվագրել է (700+551=1251), որի հետեւանքով այլ ուսումնասիրություններում նույնպէս արձանագրությունը համարվել է 1251 թվականի: Մինչդեռ «Ձ» տառը միանգամայն հստակ է (նույնությամբ կրկնվում է հաջորդ տողի «ԱԶԳԻՆ» բառում) եւ դրանով սկսվում է «ԶԱՐՄԻՆ» բառը: Կիլիկիայի Դեղընքար բերդի 1319թ. չափածո արձանագրության մեջ Օշին թագավորը կոչվում է «ԹԱԳ(ԱԻ)ՈՐ ՀԱՅՈՑ ԶԱՐՄԻՆ» (Մ. Յովհաննէսեան, Հայկական Կիլիկիոյ բերդերը, էջ 94):



Կոռիկոսի ծովային բերդի արձանագրությունը:

«(Ի ԹՈՒԱԿԱՆԻ)Ս ՀԱՅՈՑ ԶԱՐՄԻՆ: ԵԻԹՆՀ[ԱՐԻԻՐ] ՔԱ[ՌԱՄՆ]ՈՒԹԻՆ,
(Ի ԲԱՐԵՊԱՇՏ ԹԱ)ԳԱԻՈՐԻՆ: ՀԵԹՄՈՅ /// Լ Հ[ԱՅՈՑ] ԱԶԳԻՆ,
(ՇԻՆԵԱՅ ԱՄՐՈՑՍ) /// ՄԱՆԻՆ: ՇԻՆԵԱԾՔ Ծ[ԱԽ]ԻԻՔ ԽՈՀԵՄ[ԱՄՏ]ԻՆ,⁴⁸
(...ՄԵԾ ԻՇԽ)ԱՆԻՆ: ՀԵԹՄՈՅ՝ ՈՐԴ[ԻՈՑ] Ա[ԻՇՆԻ]Ն»:

Պարզվում է, որ արձանագրությունը չափածո է, եւ տողերի միջնամասում գրիչը զույգ կետի նշանով տարանջատել է հանգավոր տողերը: Ըստ այս վերծանության՝ Կոռիկոսի ծովային ամրոցի շինարարական արձանագրությունը գրվել է 1299թ.: Ինչպես երևում է, արձանագրությունը պատրաստվել է բոլոր շինարարական աշխատանքների ավարտից հետո, իսկ մինչ այդ արդեն կառուցված է եղել ամրոցի եկեղեցին, որի համար, ինչպես վերելում տեսանք, 1293թ. Ավետարան է գրել տվել Հեթում Կոռիկոսցին:

48. Արձանագրության երրորդ տողը հավելյալ վերծանության կարիք ունի:

Գ. ՀԵԹՈՒՄ ԿՈՌԻԿՈՍՑՈՒ ԴՊԻՐ ՎԱՍԻԼԸ՝
«ՈՐ ԵՐԲԷՄՆ ՍԱՐԿԱԻԱԳ»

1293թ. ԱՎԵՏԱՐԱՆԻ ամբողջովին հրատարակված հիշատակարանի երկրորդ կարեւոր նորությունը հիշատակությունն է դրա գրչի մասին: Առաջին հայացքից երկրորդական թվացող այս հարցը, սակայն, կարեւորություն է ստանում, երբ պարզվում է, որ Վասիլ անունով այդ գրիչը եղել է Հեթում Կոռիկոսցու քարտուղար-դպիրը, գրել նաեւ իշխանի «հրովարտակները»: Այլ հիշատակարաններից եւ գրչության համեմատությունից պարզվում են նաեւ Վասիլի ընդօրինակած մի քանի այլ ձեռագրերը:

Բայց նախ ծանոթանանք 1293թ. հիշատակարանին, որտեղ ողջ ձեռագրի, ինչպես նաեւ Հեթում Կոռիկոսցու անունից գրված մեծ հիշատակարանի գրիչ Վասիլն իր մասին երկու վկայություն է թողել, առաջինը՝ միջնամասում, երկրորդը՝ ամենավերջում: Առաջինում, վերը նշված՝ Հեթումի բերդերը թվարկող հատվածի անմիջական շարունակության մեջ ասվում է. **«...եւ՝ Հեթում... ստացա զսուրբ Աւետարանս եւ փափագեալ սրտի բաղձանաւք ետու գրել զսա իմոյ իսկ հրովարտակաց դպրի՝ Վասլի, որ երբեմն սարկաւագ լեալ՝ եւ այժմ ծառայէ ինձ միամտութեամբ եւ մտերմաբար սիրով»**⁴⁹:

Հիշատակարանն արժեքավոր է Վասիլի անձի մասին տեղեկություններով, որը նախկինում սարկավագ է եղել, բայց հետո ծառայության է անցել Հեթում Կոռիկոսցու մոտ, որպէս նրա հրովարտակները գրող քարտուղար՝ դպիր, միաժամանակ եղել է իշխանի համախոհը՝ «միամիտը» (թերեւս նկատի է առնված գաղափարական եւ դավանական նախընտրությունները) եւ բարեկամը: Իսկ գրչին բնութագրող «որ երբեմն սարկաւագ» արտահայտությունը թույլ է տալիս ի հայտ բերել նրա ընդօրինակած նաեւ մյուս ձեռագրերը:

Վասիլն իր ու իր ազգականների, նաեւ մատյանի ծաղկող՝ նույնպէս Վասիլ անունով, բայց «Երկինք» մականունով մանրանկարչի մասին նշում է հիշատակարանի վերջում. «Աղաչեմ եւ ես անիմաստ այրս եւ թերավարժս յուսումն գրչութեան՝ Վասիլ գրող սորա եւ կազմող, յիշել ի մեղաց թողութիւն զիս եւ զծնողսն իմ եւ զեղբարս: Այլ եւ զհոգեւոր եղբայրն իմ զշնորհաներկ գրիչն Վասիլ, մականունն Երկինք, որ զանազան երանգաւք եւ ոսկիազաւծ ծաղկաւք զարդարեաց զսա, մի մոռանայք յաղաւթից»: Այսպիսով, Վասիլը, որ չնայած իրեն հիշատակարաններին հատուկ ձեւակերպումներով «անիմաստ այր» եւ գրչության մեջ «թերավարժ» է կոչում, բայց հմուտ

գրիչ լինելով ընդօրինակել է Ավետարանը, գրել հիշատակարանը, ապա կազմել մատյանը, իսկ նրա հոգեւոր եղբայր Վասիլ Երկինքը պատկերազարդել է այն:

1293թ. ձեռագրի ու դրա գրչի հայտնի դառնալու շնորհիվ՝ հնարավորություն առաջացավ պարզելու, որ Հեթում Կոռիկոսցու հայերեն երկերի հիմնական մասը՝ ազգաբանական եւ ժամանակագրական գործերը պարունակող Մատենադարանի թիվ 1898 ձեռագրի գրիչը նույնպես Վասիլն է: Այդ մեծարժեք ժողովածուն, ցավոք, զրկվել է հիշատակարանից, բայց դրա եւ 1293թ. Ավետարանի գրչության համեմատությունը, հատկապես բարդ գրությամբ տառերի (ձ, գ, ծ, ճ, ջ, Ֆ) նույնականությունը, ոչ մի կասկած չեն թողնում, որ դրանք նույն Վասիլ գրչին են պատկանում: Ձեռագրի պարունակած նյութերին եւ Հեթում Կոռիկոսցու երկերին կծանոթանաք ստորեւ, իսկ մատյանի սկզբում եղած Սամվել Անեցու ժամանակագրության մեջ Կոռիկոսցու հանձնարարությամբ Վասիլի ձեռամբ կատարված հավելումները ներկայացվում են գրքի վերջում (հավելված 1):

Ավելացնենք, որ Վասիլի ընդօրինակած թվարկված երկու մատյանները՝ 1293թ. Ավետարանը (Ս. Էջմիածին, ձեռ. թիվ 1250) եւ Մատենադարանի թիվ 1898 ժողովածուն, 2007 թվականին միասին ցուցադրվել են Ֆրանսիայում (Մարսել) կազմակերպված հայերեն գրքին նվիրված «Գրի կախարդանքը» ցուցահանդեսում, իսկ դրանց մասին տեղեկությունները (որպես Կոռիկոսի շրջանի գրքեր) ներկայացված են ցուցահանդեսի պատկերազարդ կատալոգի հանդիպակաց էջերում⁵⁰:

Վասիլ գրչին բնութագրող «որ երբեմն սարկաւագ» ձեւակերպումն ուղենիշ ունենալով՝ կարելի է խոսել նրա եւս երկու ձեռագրի մասին: Առաջինն այժմ Վենետիկում պահվող թիվ 1040 մատյանն է («Փիլոնի Եբրայեցւոյ մատենագրութիւնք»)՝ գրված 1296թ., որի ստացողը Հեթում Բ թագավորն է: Հիշատակարանում նշելով Հեթում Բ-ի Մամեստիայում (Մսիս) եկեղեցի կառուցելու մասին՝ գրիչը շարունակում է՝ «Որ եւ հրամայեաց իմոց նուստութեանս Բաալի, որ երբեմն սարկաւագ, գրել զսոյն զայս տառ... արագահատութեամբ եւ վերակացութեամբ սրբասէր քահանային Կոստանդեայ, որ էր քահանայիցն ամենայն երէց ի դրան արքունի», իսկ հիշատակարանի վերջում ավելացնում է՝ «...զանյարմար գրիչս Վասիլ աղաչեմ արժանի առնել յիշման»⁵¹: Հետաքրքիր է, որ բուն հիշատակարանում նա բավական մանրամասնորեն եւ ոգեւորությամբ պատմում է, թե ինչպես Հեթում Բ-ը

50. Arménie, La magie de l'écrit (sous la direction de Claude Mutafian), Samogy édition d'art, Paris, 2007, p. 330-331.

51. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 789, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Ը էջ 593:

թագավորությունը հանձնեց իր եղբայր Սմբատին: Այս դրվագը նկատի ունենալով՝ Լ. Տեր-Պետրոսյանը, անդրադառնալով Սմբատի գահակալությանը, Վասիլին կոչում է վերջինիս «բացահայտ կողմնակից եւ ջատագով»⁵²:

Վերջապես, Վասիլի անվան եւս մի հիշատակություն գտնում ենք Հալեպում պահվող 1300թ. մի Ավետարանի հիշատակարանում, ուր նա հանդես է գալիս որպես կազմարար. «Զմեղաւոր կազմաւղ սորա զՎասիլ, որ երբեմն սարկաւագ, յիշեսջիք ի Քրիստոս. ՉԽԹ (1300)»⁵³:

Այսպիսով, վերոհիշյալ հիշատակարանների միջոցով որոշակի պատկերացում ենք կազմում առնվազն չորս ձեռագրի վրա աշխատած Վասիլ հմուտ գրչի մասին, որը 1290-ական թթ. եղել է Հեթում Կոռիկոսցու դպիրն ու բարեկամը, առնվազն երկու ձեռագիր գրել նրա համար, ձեռագիր է ընդօրինակել նաեւ Հեթում Բ թագավորի պատվերով, քաջածանոթ է եղել արքունական անցուդարձերին, գրել է ուշագրավ հիշատակարաններ, որտեղ նաեւ յուրահատուկ «ստորագրության» իմաստով գործածել է «որ երբեմն սարկաւագ» բնութագրական ձեւակերպումը:

52. Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 52, 54:

53. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 873 (ձեռագիրը պահվում է Հալեպում, ձեռ. թիվ 39, գրչության վայրը, գրիչն ու ստացողն անհայտ են):

ՀԵԹՈՒՄ ԿՈՌԻԿՈՍՅՈՒ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. ԱԶԳԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԵԹՈՒՄ ԿՈՌԻԿՈՍՅՈՒ ազգաբանական (տոհմաբանական) աշխատությունները պահպանվել են նրա դպիր Վասիլի ձեռքով 13-րդ դարի վերջին տարիներին գրված վերը նշված Ժողովածուի մեջ (Մատենադարան, ձեռ. թիվ 1898)¹: Այս մատյանի առաջին նյութը Սամվել Անեցու Ժամանակագրությունն է, որի երկրորդ՝ աղյուսակավոր մասը հիմնականում լրացված է Հեթում Կոռիկոսցու երկերից քաղված Ժամանակագրական միավորներով, երկրորդ նյութը Հեթում Կոռիկոսցու թարգմանած եւ լրացրած «Պատմութիւն խրոնիկոնին...» Ժամանակագրությունն է, իսկ 3-րդ, 4-րդ, 5-րդ նյութ-միավորները համապատասխանաբար վերնագրված են՝ «Պատմութիւն ազգին Ռովբինանց, թէ որպէս տիրեցին Կիլիկիո» (թերթ 168ա-172ա), «Ազգաբանութիւն թագաւորացն Երուսաղէմի եւ թագաւորացն Կիպրոսի» (172ա-174բ) «Ազգաբանութիւն բրընձնոյն Անտիոքա» (174բ-175բ): Սրանք բոլորը հրատարակել է Վազգեն Հակոբյանը «Մանր ժամանակագրությունների» 2-րդ հատորում, առաջաբանով եւ հակիրճ ծանոթագրություններով, միաժամանակ հիմնավորելով, որ հեղինակը Հեթում Կոռիկոսցին է²:

«Պատմութիւն ազգին Ռովբինանց...» գործը, սկսվելով տոհմի հիմնադիր Ռուբեն Ա-ի իշխանության հաստատումից, պատմում է հաջորդ իշխանների, այնուհետեւ թագավորության հոչակման, ապա՝ Հեթումյան

1. Մատենադարանի ձեռագրացուցակում համարվում է 13-րդ դարի մատյան (Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, Երեւան, 1965, էջ 669): Քանի որ ձեռագրում Սամվել Անեցու Ժամանակագրությունը շարունակված է մինչեւ 1294թ., ձեռագրի հաջորդ նյութը Հեթում Կոռիկոսցու 1296-ին թարգմանած «Պատմութիւն խրոնիկոնին» գործն է, իսկ մյուս նյութերում եղած թվականները չեն հասնում 14-րդ դար, կարելի է ենթադրել, որ ձեռագիրը գրվել է 13-րդ դարի վերջին տարիներին:

2. ՄԺ, հ. 2, էջ 33-35: Հրատարակիչը «Պատմութիւն ազգին Ռովբինանց...» գործի տեքստը համեմատել է Մատենադարանի թիվ 3965 մատյանում եղած ընդօրինակության հետ (թերթ 88ա-91ա):

գահակալների (որոնք իրենց նույնպես Ռուբինյան էին համարում) մասին, հասնում մինչև Հեթում Բ-ի թագավորության շրջանը՝ պարունակելով հիմնականում այլ աղբյուրներից հայտնի տվյալներ, բայց երբեմն նաև շատ ուշագրավ մանրամասներ: Հեղինակը նշում է Կիլիկիո իշխանների եւ թագավորների կանանց ու զավակների անունները, ներկայացնում նրանց խնամիական կապերը եւ այլն: Ըստ Վ. Հակոբյանի այս գործը գրվել է 1293թ.³:

Հաջորդ նյութերում, նույնպիսի մանրամասնություններով ու խնամիական կապերի բացահայտմամբ, ներկայացվում են Երուսաղեմի եւ Կիպրոսի թագավորները, Անտիոքի իշխանները (պրինց-բրինձ): Երուսաղեմի թագավորության պատմությունը սկսվում է խաչակիրների կողմից քաղաքի գրավմամբ եւ հասնում մինչև 13-րդ դարի առաջին կեսը: Կիպրոսի թագավորների մասին պատմվում է փոքրիկ ենթավերնագրի ներքո («Թագաւորք Կիպրոսի», թերթ 173բ), սկսվելով թագավորության հիմնադրմամբ՝ 12-րդ դարի 90-ականների սկիզբ, իսկ ավատվում է կիպրական թագավորական ընտանիքից սերող Մարգարիտի եւ Հայոց Լեւոն Գ (II) թագավորի որդի Թորոսի առաջնեկի՝ Լեւոնի (հետագայում Լեւոն Դ (III) թագ.) ծննդյան հիշատակությամբ, որը տեղի է ունեցել 1289 թ.⁴:

Անտիոքի իշխանության գահակալների ազգաբանությանը վերաբերող նյութն ընդգրկում է 11-րդ դարի 90-ականներից մինչև 12-րդ դարի 50-ական թվականներն ընկած ժամանակահատվածը: Հարկ է նշել, որ հեղինակը որոշ մարդկանց մասին տարբեր նյութերում կրկնվող տեղեկություններ հաղորդելիս, նշում է՝ «որպէս վերոյ գրեցաք» կամ «որպէս ի վերոյ յիշեցաք»՝ նկատի ունենալով նաև ազգաբանական նյութերին նախորդող «Պատմութիւն խորնիկոնին...» ժամանակագրությունը⁵:

3. Վ. Հակոբյանը նկատում է, որ աշխատության վերջում նշվում է Հեթում Բ-ի ավագ քրոջ՝ Զապելի ամուսնությունը, որը տեղի է ունեցել 1293 թ, բայց չի նշվում մյուս քրոջ՝ Ռիթայի ամուսնությունը՝ 1294-ին (ՄԺ, հ. 2, էջ 94):

4. ՄԺ, հ. 2, էջ 108, ՄԺ, հ. 1, էջ 86:

5. ՄԺ, հ. 2, էջ 95, 107, 109, 110:

Բ. «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԽՐՈՆԻԿՈՆԻՆ...»
ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՎԱՍԻԼ ԴՊՐԻ ընդօրինակած մատյանի երկրորդ նյութը, ինչպես վերը նշվեց, «Պատմութիւն խրոնիկոնին...» ժամանակագրությունն է (Մատենադարան, ձեռ. թիվ 1898, թերթ 123ա-167բ.), որի երկարաշունչ վերնագիրը նաեւ մի քանի կարեւոր տվյալ է պարունակում. **«Պատմութիւն խրոնիկոնին, գոր նըւաստ ծառայս Քրիստոսի Հեթումս տէր Կոռիկլասոյ փոխեցի ի Ֆռանգ գրոց ի թուին Հայոց ՉԽԵ (1296)»**⁶: Վերնագիրը ներկայացնում է նախ աշխատության տեսակը՝ ժամանակագրական պատմություն (պատմութիւն խրոնիկոնին), թարգմանական բնույթը եւ աղբյուրը (փոխեալ ի ֆռանգ գրոց), հեղինակի անունը (Հեթումս տէր Կոռիկլասոյ) եւ թվականը (Հայոց ՉԽԵ (1296)):

Այս տվյալները հայագիտության մեջ, բարեբախտաբար, ցայժմ չեն վիճարկվել, ինչը չի կարելի ասել Հեթում Կոռիկոսցու նմանատիպ տեղեկություններով վերնագիր ունեցող «Համառոտ պատմութիւն ժամանակաց...» ժամանակագրության մասին, որին կանդրադառնանք քիչ հետո: Ավելացնենք միայն, որ «Պատմութիւն խրոնիկոնին...» թարգմանական գործը, որը սկսվում է Քրիստոսի ծնունդից (1թ.) եւ հասնում մինչեւ 1294թ., Հեթում Կոռիկոսցու ձեռքով մեծապես լրացվել է Կիլիկիո պատմությանը վերաբերող հայկական նյութերով, եւ պատահական չէ, որ որոշ ուսումնասիրողներ նրան հենց հեղինակ են համարում: Մարի-Աննա Շեվալիեն, օրինակ, նկատի ունենալով «Պատմութիւն խրոնիկոնին...» գործը, նշում է, որ Հեթում Կոռիկոսցու ժամանակագրության մեջ խաչակիրների մասին եղած տեղեկությունները ստույգ եւ արժեքավոր են⁷:

Ժամանակագրության հրատարակիչ Վ. Հակոբյանը նկատում է, որ այս գործում հանդիպում են «հարյուրից անցնող հունարեն, արաբերեն, լատիներեն եւ ֆրանսերեն» բառեր, որոնցից չորս տասնյակից ավելին ֆրանսերեն են⁸:

Ինչ վերաբերում է այս գործի սկզբնաղբյուրին, ապա ինչպես Վ. Հակոբյանն է նշում, դրանցից մեկը դոմինիկյան միաբանության անդամ Մարտինոս Օպավինացու կամ Լեհացու (լատ. Martinus Oppaviensis) ժամանակագրությունն է: Հայտնի է, որ ավելի ուշ (1348-1351թթ.), Ավինյոնում այն

6. Հրատարակությունը տե՛ս ՍԺ, հ. 2, էջ 37-80: Երկի մեկ այլ օրինակ պահվել է Ղալաթիայի ազգային մատենադարանում (Բաբկեն կաթողիկոս, Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ Ազգային մատենադարանին Հայոց, Անթիլիաս, 1961, էջ 875):

7. Մարի-Աննա Շեվալիե, նշվ. աշխ., էջ 52, 64-65, 75:

8. ՍԺ, հ. 2, էջ 34: Բնագրում կատարվել են որոշ փոքր կրճատումներ (տե՛ս նույն տեղում, էջ 36):

ամբողջովին հայերեն է թարգմանել հայտնի միարար, կաթոլիկ եպիսկոպոս Ներսես Պալիանենցը: Բայց նկատենք, որ Մարտինոսը մահացել է 1278թ., մինչդեռ Հեթում Կոռիկոսցու թարգմանական գործն ավարտվում է 1294 թվականով, եւ ակներեւ է, որ նա ձեռքին նաեւ այլ աղբյուրներ է ունեցել, հետեւաբար իրավացիորեն վերնագրում նշում է, թե թարգմանել է «ի Ֆռանգ գրոց»:

Գ. «ԾԱՂԻԿ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ ԱՐԵՒԵԼԻՑ ԱՇԽԱՐՀԻ»

ԱՅՍ ԵՐԿԻ ստեղծման հանգամանքներին եւ ժամանակին վայելած հռչակին ծանոթացանք վերելում, միայն ավելացնենք ռուս արեւելագետ Ս. Միրնիի կարծիքն, ըստ որի, Արեւելքին վերաբերող գրականության մեջ, եթե չհաշվենք Մարկո Պոլոյի «Ճանապարհորդությունը», ապա Հեթումի երկը միջնադարյան Եվրոպայում ամենից շատ է տպագրվել⁹: Կոռիկոսցու պատմության ձեռագիր ընդօրինակություններն աչքի են ընկել նաեւ իրենց մանրանկարներով, քանի որ գրքում նկարագրված պատմություններն ակնհայտորեն շարժել են եվրոպացի նկարիչների ստեղծագործական երեւակայությունը¹⁰:

1842թ. Մկրտիչ Ավգերյանը Հեթում Կոռիկոսցու այս արժեքավոր պատմությունը որոշ կրճատումներով թարգմանել է հայերեն (գրաբար) եւ հրա-

9. С. Мирный, «La Flor des histoires de la terres d'Orient» Гайтона как историкогеографический источник по востоку и по истории монголов, «Вопросы востоковедения», 1956, т. V, стр. 73: Հեթում Կոռիկոսցու պատմությունը Փարիզում առաջին անգամ տպագրվել է 1510թ., այնուհետեւ՝ 1517, 1529 եւ 1735թթ., իսկ համեմատական բնագիրը ֆրանսիական ակադեմիան հրատարակել է 1906-ին (Hayton, p. 110-254), վերահրատարակվել է 2002-ին: Լատիներեն տպվել է 1529, 1532, 1555, 1585, 1671թթ., իտալերեն՝ 1535, 1559, 1562թթ., հոլանդերեն՝ 1563, 1664, տպագրվել է նաեւ անգլերեն (Լոնդոն, 1520), գերմաներեն (Ստրասբուրգ, 1534), իսպաներեն (Կորդոբա, 1595) եւ այլն (տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, էջ 74-75, Ֆ. Ֆելյոյի, Հեթում Պատմիչ հեղինակ..., էջ 8, Լ. Բաբայան, նշվ. աշխ., էջ 338, 390, տե՛ս նաեւ համացանցի՝ Wikipedia հանրագիտարանի գերմաներեն «Hethum von Korykos» հոդվածը): Ռուսերեն, Ն. Գորելովի ուսումնասիրությամբ ու ծանոթագրություններով տպագրվել է 2006-ին (Մանկտ-Պետերբուրգ): Երկի բազմաթիվ նորագույն այլ հրատարակությունների մասին տե՛ս համացանցում. <http://rbedrosian.com/hetumint.htm>

10. «Ծաղիկ պատմութեանց...» գրքի միջնադարյան նկարագրողությունների մասին տե՛ս Ֆ. Ֆելյոյի, Հեթում Պատմիչ հեղինակ..., էջ 7-28: Բազմաթիվ նկարագրողություններ կարելի է տեսնել համացանցում.

http://en.wikipedia.org/wiki/Hayton_of_Corycus

<http://crm.revues.org/index2262.html>

http://digitalgallery.nypl.org/nypldigital/dgtitle_tree.cfm?level=2&title_id=185689

http://www.qantara-med.org/qantara4/public/show_document.php?do_id=1439&lang=en

տարակել Վենետիկում, հետեւյալ վերնագրով. «Հեթում պատմիչ թաթարաց, յեղեալ ի լատին օրինակէ ի հայ բարբառ ի ձեռն Հ. Մկրտիչ վարդապետի Աւգերեան» (Վենետիկ, 1842, երկրորդ տպագրություն՝ Վենետիկ, 1951): Սույն հրատարակության վերնագրից ելնելով է, որ Հեթում Կոռիկոսցուն կոչել են նաեւ Հեթում Պատմիչ, երբեմն՝ «Հեթում պատմիչ թաթարաց», իսկ բուն երկը՝ «Պատմութիւն թաթարաց», որը ծագում է այս երկի Եվրոպայում տարածված մէկ այլ անվանումից. «L'Histoire merveilleuse du grand Empereur de Tartarie nommé le grand Can»: Հայերեն թարգմանության եւ ընտրված վերնագրի առնչությամբ ակադ. Աշոտ Հովհաննիսյանը գրում է. «գրի առնելով իր երկը, Հեթումն ամենից քիչ մտածել էր «թաթարաց պատմիչ» լինելու մասին: ...Հեթումի բուն աշխատությունը... խաչակրաց նոր արշավանքի ռազմաքաղաքական մի ծրագիր էր, որը Վենետիկի հայերեն թարգմանության մեջ դուրս է ձգված»¹¹: Հեթում Կոռիկոսցու երկի «թարգմանությունից բացակայող հատվածների մի ընտրանի» աշխարհաբարով հրատարակած Ա. Ազիզյանը վենետիկյան հրատարակության մասին գրում է. «Ցավոք, բացի այն, որ թարգմանիչը, որպես սկզբնական նյութ օգտագործել է արդեն որոշ չափով ձեւափոխված լատիներեն թարգմանությունը, այլ ոչ ֆրանսերեն բնօրինակը, նա բավական ազատ է մոտեցել նյութին՝ կատարել կրճատումներ, իսկ մի քանի գլուխներ ընդհանրապես չի թարգմանել»¹²:

Հեթում Կոռիկոսցու այս պատմությունը բաղկացած է չորս մասից. առաջինը ներկայացնում է Արեւելքի 14 երկրներն ու դրանց ժողովուրդներին՝ համառոտ բնութագրումներով (դրանք են՝ Չինաստան, Ուլգորիա-Տարոս, Թուրքեստան, Խորեզմ, Կոմանիա, Հնդկաստան, Պարսկաստան, Մարաստան, Հայաստան, Վրաստան, Միջագետք, Խաղդիա, Թուրքաց (սելջուկների) պետություն, Ասորիք), երկրորդ մասում խոսվում է այն ինքնակալների մասին, որոնք իշխել են Ասիայում Քրիստոսի ծնունդից ի վեր, երրորդ մասը թաթարների պատմությունն է (ծագումը, նվաճումները, պետությունը եւ այլն), չորրորդ մասը՝ դեպի Սուրբ Երկիր խաչակրաց նոր արշավանք կազմակերպելու մանրամասն մշակված ծրագիր է: Եւ պետք է ասել, որ հեղինակի բուն նպատակը հենց այդ ծրագիրը ներկայացնելն է եղել, որն իրականություն դարձնելու եւ այդ գործում Կիլիկիայի Հայոց թագավորության համար շահեկան վիճակ ապահովելու համար երբեմն մեծացրել է վերջինիս դերը, գերազնահատել մոնղոլների հետ ունեցած նրա

11. Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Ա, Երեւան, 1957, էջ 175:

12. Ա. Ազիզյան, Հատվածներ Հեթում պատմիչի «Արեւելքի երկրների պատմության ծաղկաքաղ»-ից, «Բանբեր Երեւանի Համալսարանի», 2003, N 3, էջ 101:

հարաբերությունները¹³: Սակայն անկախ դրդապատճառներից ծագող նրբերանգներից՝ Հեթում Կոռիկոսցու գիրքը հսկայական աղբյուրագիտական արժեք է ներկայացնում, ինչպես հայ-մոնղոլական հարաբերությունների ուսումնասիրության, այնպես էլ այլ հարցերի վերաբերյալ:

Գրքի մյուս մանրամասներին ու առանձնահատկություններին չենք անդրադառնում, որովհետև մեր նպատակից դուրս է այս աշխատության քննությունը, որն առանձին է մանրակրկիտ հետազոտության նյութ է, միայն հարկադրված ենք արձանագրել, որ հայագիտությունը ցավալիորեն ուշացել է հայ միջնադարյան պատմագրության մեջ միանգամայն ուրույն տեղ գրավող այս երկի հայերեն ամբողջական թարգմանության եւ պատշաճ ուսումնասիրությամբ հրատարակման հարցում:

Իսկ վերջում, այս գրքում հեղինակի ոճի մասին որոշ պատկերացում տալու նպատակով՝ ուզում ենք մեջբերել Ա. Ազիզյանի թարգմանած մի հատվածը, որը վերաբերում է նախատեսված խաչակրաց արշավանքի ժամանակ նաեւ վրացիներին ու նուբիացիներին (եթովպացիներին) ներգրավելու հարցին:

ԳԻՐՔ IV, ԳԼՈՒԽ XXIII

[Թե ինչպես այս գրքի հեղինակը Պապի հետ խոսեց ծովի այն կողմ արշավի մասին]

«Ինձ կների Ձերդ Սրբությունը, եթե ես համարձակվեմ ասել եւս երկու խոսք, մեկը՝ որ Ձերդ Սրբությունը գրի վրացիների թագավորին, որոնք քրիստոնյաներ են եւ ուրիշ ազգերից ավելի են նվիրված Սուրբ Երկրի ուխտագնացություններին ու հանգրվաններին, որպեսզի օգնություն ու աջակցություն ցուցաբերեն ուխտագնացներին Սուրբ Երկիրը վերադարձնելու գործում: Ես վստահորեն հավատում եմ, որ հանուն Աստծո փառքի ու Ձերդ Սրբության հարգանքի, նրանք ուրախությամբ կկատարեն Ձեր հրամանը,

13. Պատմելով Հայոց թագավոր Հեթում Ա-ի Կարակորում մեկնելու եւ կնքված հայ-մոնղոլական դաշնագրի մասին՝ Կոռիկոսցին վկայաբերում է պայմանագրի բոլոր կետերը, որոնք ընդգծված հայանպաստ են: Հարցի հանգամանակից քննությամբ զբաղված Լ. Տեր-Պետրոսյանը, դրանք չափազանցություն համարելով, գրում է. «Մենք դիտավորյալ չանդրադարձանք Հեթում Կոռիկոսցու «Արեւելքի պատմության ծաղկաքաղ» գրքում ընդգրկված, այսպես կոչված, «Հայ-մոնղոլական պայմանագրին», քանի որ այն, որոշ պատմական ճշմարտություններ պարունակելով հանդերձ, ընդհանուր առմամբ արդյունք է հեղինակի անսահման երեւակայության եւ հետապնդում է զուտ քարոզչական նպատակներ», ապա ավելացնում՝ «Հեթում պատմիչը, Արեւմուտքի վրա տպավորություն գործելու նպատակով, հսկված է չափազանցնելու հայ-մոնղոլական հարաբերությունների իրական դրությունը» (Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 315, 324):

քանի որ աստվածավախ քրիստոնյաներ են եւ թվաքանակով շատ, եւ շատ ուժեղ ու խիզախ զինվորներ են, եւ կարծես թե հարեւան են Հայոց թագավորությանը:

Հետո, երբ Ձերդ Սրբությունը գրի նուբիացիներին, որոնք քրիստոնյաներ են եւ Քրիստոսի հավատքին դարձան իմ տեր սուրբ Թովմաս առաքյալի ձեռքով՝ Եթովպիայում, ասելով, որ նրանք պատերազմ սկսեն սուլթանի ու նրա մարդկանց դեմ, եւ վստահորեն հավատում եմ, որ վերոհիշյալ նուբիացիները, հանուն մեր Տեր Հիսուս Քրիստոսի փառքի ու Ձերդ Սրբության հարգանքի, պատերազմ կսկսեն սուլթանի ու նրա մարդկանց դեմ եւ նրանց անհանգստություն կպատճառեն, իսկ նրա ուժին՝ վնաս, եւ սա մի մեծ գլխացավանք կլինի սուլթանի եւ նրա մարդկանց համար: Եւ այս նամակները կարող են ուղարկվել Հայոց թագավորին, որը դրանք թարգմանել կտա նրանց լեզուներով եւ կուղարկի վստահելի սուրհանդակների միջոցով»¹⁴:

14. Ա. Ազիզյան, Հատվածներ Հեթում պատմիչի... , էջ 102-103: Ուշագրավ է, որ գրքի առաջին մասում, Վրաստանին վերաբերող հատվածում, Հեթում Կոռիկոսցին նշում է, թե անձամբ եղել է այնտեղ (Հեթում պատմիչ, էջ 15):

«ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԾ ՀԱՒԱՔԵԱԼ Ի ՉԱՆԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ...» ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀԵԹՈՒՄ ԿՈՌԻԿՈՍՅՈՒ Ժամանակագրական այս երկի մասին եթե վիճակագրության լեզվով խոսենք, պետք է արձանագրենք 12 ձեռագիր, 3 խմբագրություն, 5 հրատարակություն (որից 2-ն օտար լեզուներով՝ ֆրանսերեն եւ ռուսերեն): Եւ անմիջապես կարող է հարց առաջանալ, թե այդքան անգամ հրատարակվելու բախտին արժանացած գործն ինչո՞ւ է նորից վերահրատարակվում: Պատճառները հիմնավոր են, քանի որ նախկինում որոշ հրատարակություններ կատարվել են թերի բնագրերով ձեռագրերից, իսկ հեղինակի ինքնության հարցը վիճարկվել է, եւ ժամանակագրությունը վերագրվել ուրիշ հեղինակի՝ Հեթում Բ թագավորին:

Հեթում Կոռիկոսցու սույն ժամանակագրությունը, համաձայն վերնագրում նշված տեղեկության, կազմել է 1296թ.: Վերելում արդեն տեսանք, որ այդ նույն ձեռով, վերնագրում 1296 թվականն արձանագրելով՝ Կոռիկոսցին թարգմանել եւ հայկական նյութով համալրել է «Պատմութիւն խրոնիկոնին...» ժամանակագրությունը: Վազգեն Հակոբյանը, որը հրատարակել է երկու ժամանակագրությունն էլ, «Մանր ժամանակագրությունների» առաջին եւ երկրորդ հատորներում, իրավացիորեն նկատում է, որ նախ գրվել է «Պատմութիւն խրոնիկոնին...» ժամանակագրությունը, որից հետո նրա նյութերը հիմնական աղբյուր են դարձել «Համառոտ պատմութիւն ժամանակաց...» ժամանակագրության համար¹: Սա նշանակում է, որ ֆրանսագիր հեղինակների գործերից թարգմանելով Քրիստոսի ծնունդից մինչեւ իր ժամանակները (1294թ.) ձգվող «Պատմութիւն խրոնիկոնին...» ծավալուն ժամանակագրությունը եւ նրա մեջ որոշ հավելումներ կատարելով՝ Հեթում Կոռիկոսցին որոշել է կազմել մի ավելի բազմաղբյուր՝ «հաւաքեալ ի զանա-

զան պատմութեանց», բայց միաժամանակ համառոտ՝ 1076-1296 թվականներն ընդգրկող² եւ հայ հասարակության հետաքրքրասիրությունը բավարարող ժամանակագրություն, եւ հենց նույն 1296 թվականին պատրաստել է այն, վերնագրում, ինչպես «Պատմութիւն խրոնիկոնին...» գործում, գետեղելով նյութի բնույթը պարզաբանող, հեղինակի անունն ու գրության թվականը պարունակող տվյալներ. **«Համառոտ պատմութիւն ժամանակաց հաւաքեալ ի զանազան պատմութեանց, այսինքն՝ ի Հայոց, ի Ֆռանկաց, ի Յունաց, ի յԱսորոց գրեւաց, աշխատութեամբ իմոյ, ծառայիս Աստուծոյ Հեթմոյ, տեառն Կուռիկասոյ, ի թվականիս Հայոց 29ԽԵ (1296)»:**

Այս ժամանակագրությունը, հակիրճության եւ նյութի պարզության տեսակետից հանրամատչելի լինելով, հետագայում բազմաթիվ ընդօրինակություններ է ունեցել (ի տարբերություն «Պատմութիւն խրոնիկոնին...» գործի), բայց նաեւ խմբագրվել, ավելի համառոտվել, որոշ օրինակներում՝ շարունակվել է:

Ինչպես նշվեց, այժմ հայտնի է «Համառոտ պատմութիւն ժամանակաց...» ժամանակագրության երեք խմբագրություն: Դրանք են՝

**Ա խմբագրություն՝ Հեթում Բ թագավորի,
Բ խմբագրություն՝ Ներսես Պալիանենցի,
Գ խմբագրություն՝ Ստեփանոս քահանայի:**

Այժմ ծանոթանանք խմբագրություններից յուրաքանչյուրի առաջացման հանգամանքներին, խմբագրողներին (հիմնավորելով նրանց ով լինելը) եւ ժամանակագրության հրատարակություններին:

2. «Պատմութիւն խրոնիկոնին...» գործի եւ «Համառոտ պատմութիւն ժամանակաց հաւաքեալ ի զանազան պատմութեանց...» ժամանակագրության ծավալային հարաբերության մասին պատկերացում կազմելու համար նշենք, որ Վ. Հակոբյանի աշխատասիրությամբ որոշ կրճատումներով հրատարակված առաջին բնագիրը «Մանր ժամանակագրություններում» (հ. 2) կազմում է 1950 տող, իսկ երկրորդը (հ. 1)՝ 458 տող:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ Ա խմբագրությունը, որը մեզ է հասել երեք ընդօրինակությամբ, պատկանում է Հեթում Բ թագավորին: Այստեղ Հեթում Կոռիկոսցու ժամանակագրության մի ընդօրինակության մեջ, ձեռագիր՝ որը պատկանել է Հեթում Բ-ին, ընդմիջարկություններ են արվել հենց թագավորի կամ նրա քարտուղարի ձեռքով: Սույն խմբագրությունը պարունակում է Հեթում Կոռիկոսցու ժամանակագրության առավել ամբողջական տեքստը, իսկ մեզ հասած հնագույն օրինակը, 1319 թվականից է (Հալեպի հայկական Քառասնից Մանկանց վանքի թիվ 6 ձեռագիր):

Ա խմբագրության հնությամբ երկրորդ ընդօրինակությունը (վերջից թերի է, հասնում է մինչև 1270 թվականը) պահպանվել է 1382-1404թթ. ժամանակամիջոցում կազմված ժամանակագրական նյութերի ժողովածուի մեջ³, որը պահվում է Բրիտանական թանգարանում (Or. 5458, թերթ 135բ-142բ, Մատենադարան, դրսի մանրածապավեն՝ 360): Ա խմբագրության երրորդ ընդօրինակությունը 1724 թվականից է (Մատենադարան, ձեռ. թիվ 663, թերթ 246ա-252բ): Այս վերջին ձեռագիրն էլ հիմք ընդունելով՝ Վագգեն Հակոբյանն իրականացրել է ժամանակագրության համեմատական բնագրի հրատարակությունը «Մանր ժամանակագրությունների» առաջին հատորում (ցավոք նա ծանոթ չի եղել Ա խմբագրության հնագույն օրինակին, իսկ Բրիտանական թանգարանի օրինակի՝ միայն վերնագրին ու սկսվածներին):

Իր ունեցած Ա խմբագրության միակ օրինակի՝ ուշ շրջանի ձեռագրերին բնորոշ աղավաղումներ ունեցող տեքստը⁴ Վ. Հակոբյանը համեմա-

3. Ա. Մաթեոսյան, Հեթում Ախտուց տիրոջ եւ Վասիլ մարաջախտի ժամանակագրությունները, «Պատմաբանասիրական հանդես», 1963, N 4, էջ 184: Բրիտանական թանգարանի ձեռագիրը պարունակում է նաեւ Հեթում Կոռիկոսցու զավակների սերնդակից Հեթում Նդիրցու ժամանակագրությունը, որը վերջինս վերնագրել է Հեթում Կոռիկոսցու երկի նման՝ «Համառոտ պատմութիւն ժամանակաց» (117բ) եւ մեծապէս օգտվել նրանից: Այս ժամանակագրությունն ունեցել է երկու հրատարակություն (Ա. Մաթեոսյան, նշվ. աշխ., էջ 189-201, Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 537-553): Այս ձեռագրում պահպանվել է նաեւ Վասիլ մարաջախտի փոքրիկ ժամանակագրությունը եւ մի քանի այլ ժամանակագրական միավորներ:

4. Ինչպէս կարելի է տեսնել ստորեւ հրատարակվող բնագրում, 1724թ. մատյանում (Ա3) բազմաթիվ անձնանուններ եւ տեղանուններ աղավաղումներով են: Այդ տեքստի ակնբերւորեն սխալ բառերը «Մանր ժամանակագրություններում» հրատարակվել են նույնությամբ, իսկ այլ ձեռագրերում եղած ճիշտ տարբերակները թողնվել են տողատակում: Օրինակ, տպված է «ՈԽԶ (1197)... զՃպէթն թաւօլ (sic) առին յանօրինաց», մինչդեռ այդ հրատարակության երեք ձեռագիր (բնականաբար նաեւ Ա խմբագրության մյուս երկու ձեռագրերը) տալիս են ճիշտ ձևը՝ «...դաւով առին» (ՄԺ, հ. 1, էջ 77): Հրատարակված բնագրում Հեթում անունն ընդհանրապէս գրված է «Հեղոմ» ձևով, մինչդեռ Օշին թագավորի Ժամագրքում, Բրիտանական թանգարանի ձեռագրում (ինչպէս եւ ժամանակագրության մյուս բոլոր ձե-

տել է Մատենադարանի եւս չորս ձեռագրի⁵ (որոնցից 3-ը պատկանում են Բ խմբագրությանը, մեկը՝ Գ խմբագրությունն է) եւ Ժամանակագրության՝ Վենետիկի 1842թ. հրատարակության հետ: Թեեւ բնագիրը հրատարակվել է ձեռագրերից չորսում պահպանված վերնագրով, ուր նշված է հեղինակի անունը («...աշխատութեամբ իմոյ՝ ծառայիս Քրիստոսի Աստուծոյ Հեթմոյ, տեառն Կուռիկոսայ...»), սակայն Վ. Հակոբյանը գործը վերագրել է Հեթում Բ թագավորին՝ հիմնականում ելնելով Ժամանակագրության երկու հատվածում եղած տեղեկություններից, որոնք վերաբերում են վերջինիս պապի ու մոր մահվանը եւ նշված են՝ «պապն իմ», «մայր իմ» ձևակերպումներով⁶: Ժամանակագրությունը Հեթում Բ-ին վերագրելու մյուս կովանն էլ Բրիտանական թանգարանում պահվող ընդօրինակության վերնագիրն է, որտեղ «Հեթմոյ, տեառն Կուռիկոսայ» բառերի փոխարեն նշված է «Հովհաննես սպասաւոր բանի», որը Հեթում Բ-ի հոգեւորական դառնալուց հետո ընդունած անունն է: Վ. Հակոբյանի ներկայացրած բացահայտումն առաջին հայացքից այնքան տպավորիչ է թվացել, որ նրա տեսակետը միանգամից ընդունվել է հայագիտության մեջ, եւ ուսումնասիրողներն այդուհետեւ սկսել են Ժամանակագրությունը կոչել «Հեթում Բ-ի տարեգրություն»՝ ըստ «Մանր Ժամանակագրություններում» բնագրին նախորդող հետազոտական մասի վերնագրի⁷:

Սակայն այդ վերագրումն ընդունելի չէ, քանի որ Հեթում Բ-ի «պապն իմ», «մայր իմ» ձևակերպումներով Ժամանակագրական միավորները, ինչպես նաեւ մի քանի այլ տեղեկություններ (1293, 1294թթ.), որոնք վերաբերում են հենց Հեթում Կոռիկոսցուն եւ որոնցում նա ներկայացված է ոչ դրական

ռազրերում), այն «Հեթում» է: Ցավոք այդ հանգամանքը չի արտահայտված հրատարակության տողատակերում եւ այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ բոլոր ձեռագրերն էլ «Հեթում» անվանաձեւն են կիրառել: Ուսումնասիրության մեջ Վ. Հակոբյանը գրում է. «աչքի ընկնող շեղումները տվել ենք տողատակ՝ բացառելով մանրամասնությունները (օր. Կոստանդին թե Կոստանտին, բերթն թե բերդն եւ այլն)» (անդ, էջ 73): Ինչպես երևում է, նա այդ կարգի «մանրամասնությունների» շարքն է դասել նաեւ Հեթում-Հեդումը, որն անընդունելի է: Տարօրինակ է նաեւ, որ գրքի անվանացանկում «Հեթում պատմիչ» անվան դիմաց հղում է տրված՝ «Հեդում Կոռիկոսի իշխան» (անդ, էջ 434), որով 1724 թվականի մատյանի տեքստում Հեթում անձնանվան աղավաղված ձևը հրամցվել է որպես Հեթում Կոռիկոսցուն հատկանշող անվանաձեւ:

5. Վ. Հակոբյանը հիմնական՝ A օրինակ է համարել Մատենադարանի թիվ 663 ձեռագիրը (թերթ 246ա-252բ), մյուս ձեռագրերը նշվել են ռուսերեն այբուբենի տառերով՝ Ե - ձեռ. թիվ 2037, (127ա, 145ա-146բ), 1421թ., Ե - ձեռ. թիվ 7841, (303ա-306բ), Դ - ձեռ. թիվ 3079, (215բ-221բ), Ե - ձեռ. թիվ 5599, (219ա-221բ), 1347թ., (սա Գ խմբագրության ձեռագիրն է), վերջապես՝ Ժ (տեքստի տողատակերում՝ Ժ) վենետիկյան հրատարակությունը (ՄԺ, հ. 1, էջ 67-68):

6. ՄԺ, հ. 1, էջ 65, 87:

7. Այս հրատարակության տեքստը, Վ. Հակոբյանի ներածականով, գետեղված է նաեւ համացանցում. հայ մատենագրության թվանշային գրադարանում՝ <http://www.digilib.am/digilib/#scroll>

լույսի ներքո, հետեւաբար՝ դրանց հեղինակը չէր կարող լինել, նաեւ 1296թ. Հեթում Բ-ի դեմ ըմբոստության հատվածը (այդ մասին նշվեց վերելում), խմբագրողի կատարած հավելումներն են⁸: Հենց այդ ընդմիջարկություն-հավելումներով էլ հատկանշվում է Ա խմբագրությունը եւ տարբերվում ժամանակագրության Բ եւ Գ խմբագրություններից:

Հեթում Կոռիկոսցու Ժամանակագրության Ա խմբագրության առաջին հրատարակությունը տեղի է ունեցել «Մանր ժամանակագրություններ» տպագրությունից շուրջ երկու տասնամյակ առաջ, Հալեպի Քառասնից Մանկանց վանքում պահվող Օշին թագավորի 1319թ. Ժամագրքի նյութերի շարքում՝ աշխատասիրությամբ Արտավազ արքեպիսկոպոս Սյուրմեյանի (1889-1951)⁹: Սա Հեթում Կոռիկոսցու Ժամանակագրության առաջին հայտնի ամենավաղ ընդօրինակությունն է, որը Հեթում Բ-ի խմբագրության ընդմիջարկություններն ունենալով հանդերձ, վերնագրում կրում է բուն հեղինակի՝ Հեթում Կոռիկոսցու անունը (ինչպես որ Մատենադարանի թիվ 663 մատյանը): Օշինյան ձեռագրի Հակոբ անունով գրիչը, որը Հեթում Բ-ի եւ Հեթում Կոռիկոսցու կրտսեր ժամանակակիցն էր եւ բնականաբար ճանաչում էր հեղինակին, Ժամանակագրության վերնագրում անփոփոխ է թողել նրա անունը: Կամ, այլ կերպ ասած, նրա ձեռքին եղած նախօրինակը վերնագրում ընդմիջարկություն չի ունեցել, ինչպիսին ունի Բրիտանական թանգարանի օրինակը:

Մեր կարծիքով Հեթում Կոռիկոսցու Ժամանակագրության՝ Հեթում Բ-ին պատկանած եւ տեքստի մեջ վերը նշված ընդմիջարկություններն ունեցող օրինակը, թագավորի անակնկալ սպանությունից հետո (1307թ.) մնացել է արքունիքում, եւ 1319-ին դրանից ընդօրինակություն է կատարել Օշինի Ժամագրքի գրիչը: Վերջինս հիշատակարանում նշում է, որ Օշին թագավորը ձեռագիրը գրելու հանձնարարություն է տվել արքունիքի ավագերեց Թորոսին, սա էլ իր հերթին՝ գրչին («...աղաչեմ յիշել ի Տէր ըզտէր Թորոս աւագերեց գղրան արքունի, որ ետ զգիրս զայս գրել...»)¹⁰: Դրանից որոշ ժամանակ անց (մինչեւ 1380-ական թվականները), ինչ-որ մեկն ուշադրություն դարձնելով ժամանակագրության մեջ եղած «պապն իմ», «մայր իմ» նշումներով ժամանակագրական միավորներին եւ հասկանալով, որ դրանք Հեթում Բ-ին են վերաբերում, իր ունեցած օրինակի վերնագրում **«Հեթումյ տեառն Կուռիկոսայ»** (21 տառանիշ) բառերը ջնջելով՝ դրանց տեղում գրել է **«Հովհաննես սպասաւոր բանի»** (21 տառ), որից էլ կատարվել է Բրիտանա-

8. Հարցի բնությունը տե՛ս Կ. Մաթեոսյան, Հեթում Կոռիկոսցու Ժամանակագրությունը..., էջ 127-133:

9. Նկարագիր Օշին թագավորի ձեռագիր Ժամագիրքին, էջ 93-101:

10. Նկարագիր Օշին թագավորի ձեռագիր Ժամագիրքին, էջ 101:

կան թանգարանի ձեռագրի ընդօրինակությունը: Կարելի է ասել, որ փաստորեն, ընդմիջարկությունների պատճառով հեղինակի անունը փոխելու (Հեթում Կոռիկոսցու գործը Հեթում Բ-ին վերագրելու) այս նույն պատմությունը մեկ անգամ էլ կրկնվել է 20-րդ դարում:

Բարեբախտաբար, Հեթում Կոռիկոսցու ժամանակագրության Բ եւ Գ խմբագրություններն այլ ճանապարհ են անցել եւ զերծ մնացել Ա խմբագրությանը հատուկ ընդմիջարկություններից, որոնք, բնականաբար, բացակայում են նաեւ ժամանակագրության հիմնական աղբյուրի՝ «Պատմութիւն խրոնիկոնին» գործի մեջ: Բայց հատկանշական է, որ այդտեղ առկա է Հեթում Կոռիկոսցու նշումը իր հոր՝ Օշին պայլի մահվան մասին՝ «ՌՄԿԵ (1265)... վախճանեացաւ թագաւորեղբայրն Հայոց պարոն Աւշին, տէրն Կոռիկաւոյ ԻԵ (25) աւրն ի դէկտեմբոն, ի Նոյեմբն գիշերն»¹¹: Եւ հասկանալի է, որ այդ տվյալը Հեթում Կոռիկոսցին փոխանցել է նաեւ իր ժամանակագրության մեջ. «ՉԺԴ (1265) Վախճանեացաւ պարոն Աւշին թագաւորեղբայրն Հայոց, տէրն Կոռիկոսոյ, ԻԵ (25) ի դէկտեմբերի, յուրբաթ»¹²:

Այն, որ հենց Հեթում Կոռիկոսցին է քննության առարկա ժամանակագրության հեղինակը, հստակ իմացել է նաեւ նրա ու Հեթում Բ-ի մեկ այլ կրտսեր ժամանակակից՝ Ներսես Պալիանենցը, որն իր աշխատության մեջ անդրադառնալով խաչակիրների քաղաքների գրավմանը, ընթերցողին ծանուցում է Հեթում Կոռիկոսցու հեղինակած ժամանակագրության մասին՝ «...այլ եւս գտանես զսայ ի գաւազանագիրքն պարոն Հեթմո տեառն Կոռիկոսոյ, որ գրեմք ի յետո գրոցս»¹³ եւ իր խոստման համաձայն, այդ ժամանակագրությունը տեղադրում է նույն մատյանում, իր գործից հետո:

Ժամանակագրության 1246-1296 թվականներն ընդգրկող հիմնական հատվածը «Մանր ժամանակագրություններից» թարգմանվել է ռուսերեն¹⁴:

11. ՄԺ, հ. 2, էջ 73:

12. Նկարագիր Օշին թագաւորի ձեռագիր ժամագիրքին, էջ 99:

13. ՄԺ, հ. 2, էջ 179: Ձեռագիրը (Մատենադարան, ձեռ. թիվ 2037) Ն. Պալիանենցի գործերի հին եւ ընտիր օրինակ է):

14. Армянские источники о монголах, перевод с древнеармянского, предисловие и примечания А. Г. Галстяна, Москва, 1962, с 71-78.: Ցավոք 1724թ. մատյանից ծագող սխալները փոխանցվել են նաեւ ռուսերեն թարգմանությանը: Օրինակ, Ղազան խանի դեմ Բալաստուի («Պալթո») ընդվզման հատվածը՝ «մրտեց Պալթո ընդդէմ Խազանին», «Մանր ժամանակագրություններում» տպված է «մարտեաւ պաշտօն ընդդէմ Խազանին» (էջ 87), որը ռուսերենում դարձել է «[государственные] чиновники восстали против Газана» (с. 77), Հեթում Ա-ի՝ ոմն Ալիճախի հետ Ուճ բնակավայր գնալու հատվածը՝ «Հեթում թագաւորն Հայոց գնաց ի յՈւճն, հետ Ալիճախին», «Մանր ժամանակագրություններում»՝ «Հեթում թագաւորն գնաց ի Յուճն, հետեւեալ ի Ճախին» (էջ 82), ռուսերենում՝ «Царь Гетум отправился в Ютч, а затем в Чак» (с. 72), մեկ այլ տեղում՝ «փլուցին զիրենց պուրճն», «Մանր ժամանակագրություններում»՝ «փլուցին Զիպանց պուրճն» (էջ 82), ռուսերենում՝ «разрушили башни Зипанца» (с. 72) եւ այլն: Ժամանակագրության ռուսերեն թարգմանությունը տեղադրված է համացանցում՝ <http://www.vostlit.info/Texts/rus9/HetumII/frametext.htm>:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԻՆ անգամ հրատարակվել է Բ խմբագրության հիման վրա: 1842թ. Մ. Ավգերյանը Հեթում Կոռիկոսցու «Ծաղիկ պատմութեանց» երկի գրաբար թարգմանության գրքի վերջում, որպես հավելված գետեղել է Վենետիկի ձեռագրերից քաղված այս ժամանակագրության բնագիրը, հետեւյալ վերնագրով. **«Ժամանակագրութիւնք երեք հարիւր եւ մէկ ամաց կարճ ի կարճոյ հաւաքեալ ի զանազան պատմութեանց՝ Հայ, Ֆռանկ եւ Ասորի, շարագրեալ պարոն Հեթմոյ տեառն Կոռիկոսոյ եւ արար զայս բանք ի թուին Հայոց Շխե եւ յամի մարդեղութեան Տեառն ՌՄՂԶ»**¹⁵: Դժվար չէ նկատել, որ վերնագիրը հետագա ընդմիջարկության շերտ ունի, որտեղ նշված է ժամանակագրության՝ 301 տարի ընդգրկելու մասին, որը չի համապատասխանում ո՛չ բուն ժամանակագրության ընդգրկմանը՝ 1076-1296թթ. (220 տարի), ո՛չ էլ վենետիկյան հրատարակության մեջ տեղ գտած, լրացված տարբերակին՝ 1076-1307թթ. (231 տարի): Հեթում Կոռիկոսցու ժամանակագրությունը Վենետիկի հրատարակությունից ֆրանսերեն է թարգմանել Է. Դյուլորին և հայերենի հետ հրատարակել է 1869-ին՝ “Table Chronologique de Héthoum, Comte de Gorigos” վերնագրով¹⁶:

Վերնագրում եղած հավելումը Բ խմբագրության առանձնահատկություններից մեկն է, բայց ոչ միակը, քանի որ այն նաեւ բնագրում ունի զգալի կրճատումներ (դա ակնհայտորեն երևում է ստորեւ երեք խմբագրությունների զուգադիր հրատարակության մեջ), միաժամանակ շարունակվել է 1296 թվականից հետո տեղի ունեցած դեպքերի արձանագրմամբ: Բ խմբագրության առաջմ հայտնի ձեռագրերը թվով ութն են և դրանցից առնվազն չորսը¹⁷ թույլ են տալիս պարզելու, թե որտեղից է ծագում վերնագրի՝ 301 տարվա մասին նշումը: Այդ ձեռագրերում ժամանակագրությունը շարու-

15. Հեթում Պատմիչ, էջ 77:

16. “Recueil des historiens des Croisades” Documents Arméniens, t. I, Paris, 1869, p. 471-490.

17. Վենետիկ, Մխիթարյանների մատենադարան, ձեռ. թիվ 1578, 1348-1351թթ., Մատենադարան, ձեռ. թիվ 3079, 1700թ., Երուսաղեմ, ձեռ. թիվ 995, 1720թ. (Մատենադարան, դրսի մանրածապավեն, 890, տե՛ս նաեւ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, կազմեց Նորայր եպս. Պողարեան, հ. Գ, Երուսաղեմ, 1968, էջ 597), Հռոմի Ս. Վլաս եկեղեցու թիվ 25 ձեռագիր, 1723թ. (Ցուցակ հայերեն ձեռագրաց Հռոմի Հայոց հիւրանոցի ի Ս. Վլաս եւ քահ. Լեւոնեան հայ վարժանի, կազմեց Ն. Ակինեան, 1961, էջ 19):

Ժամանակագրության Բ խմբագրությունը պարունակող մյուս 4 ձեռագրերն են Մատենադարանի թիվ 2037 եւ 7841 մատյանները, Օքսֆորդի համալսարանի թիվ 121 ձեռագիրը (որը պակասավոր է, հասնում է մինչեւ 1151թ.) եւ Վենետիկում պահվող մեկ այլ մատյան, որի թվահամարը մեզ հայտնի չէ, բայց որի մասին նշում է Ն. Ակինյանը (Ն. Ակինեան, Գրախօսական, էջ 504-505): Կարծում ենք, որ այս օրինակը նույնպես Բ խմբագրությունն է պարունակում, քանի որ ժամանակագրության 1842թ. վենետիկյան հրատարակության մեջ չի ակնարկվում ներկայացված բնագրի այլ տարբերակի գոյության մասին:

նակված է մինչև Կիլիկիայի Հայոց թագավորության անկումը, թագավորական ընտանիքի եւ ավագանու գերեվարությունը Եգիպտոս (ըստ հավելման հեղինակի՝ 1374թ., իրականում՝ 1375թ.), իսկ ժամանակով ամենավերջին դեպքը վերաբերում է գերության մատնված, բայց սուլթանի թույլատվությամբ Երուսաղեմ ուխտի մեկնած Մարիուն թագուհու մահվանը, որը տեղի է ունեցել 1377թ. (թագուհին թաղվել է Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մուտքի մոտ): Հենց այս թվականի առկայությունն էլ, մեր կարծիքով, հիմք է հանդիսացել ժամանակագրության վերնագրում 301 տարվա ընդգրկման մասին հավելում կատարելու համար (1377-1076 = 301)¹⁸: Հետաքրքիր է, որ Բ խմբագրության Մատենադարանում պահվող հնագույն ձեռագիրը (թիվ 2037), որը 1421 թվականից է, եւ որի մեջ ժամանակագրությունը շարունակված է մինչև 1351 թ., վերնագրում չի ունեցել նշում 301 տարվա մասին, բայց այն ավելացվել է, որպես ընդմիջարկություն:

Ժամանակագրության Բ խմբագրության հեղինակ-խմբագրողի ինքնության վերաբերյալ ցայժմ եղած միակ կարծիքը պատկանում է հայագետ Գեւորգ Տեր-Վարդանյանին, որը նկատի ունենալով ժամանակագրության այս տարբերակի առկայությունը Ներսես Պալիանենցի՝ Վենետիկում պահվող ինքնագիր մատյանում, հենց վերջինիս է համարում խմբագիր¹⁹: Սա միանգամայն ընդունելի տեսակետ է: Պետք է ասել, որ այդ ձեռագրում Ներսես Պալիանենցի հավելումներով ժամանակագրությունը հասնում է մինչև 1351թ. (նա մահացել է մոտ 1363 թվականին), բայց դրանից հետո շարունակվել է այլ լրացնողի ձեռքով եւ վերջում ունի Մարիուն թագուհու մահվան մասին վերոնշյալ տվյալը:

Վերջում ավելացնենք, որ թերեւս պատահական զուգահեռությամբ, ժամանակագրության այս խմբագրությունը եզրափակվում է բուն հեղինակի անմիջական ժառանգի մասին տեղեկությամբ, քանի որ Մարիուն թագուհին (Օշին պայլի դուստրը)²⁰ Հեթում Կոռիկոսցու թոռնուհին էր:

18. Հարցի քննությունը տե՛ս Կ. Մաթեոսյան, Հեթում Կոռիկոսցու ժամանակագրությունը..., էջ 137-140, տե՛ս նաեւ աստ, 1351 թվականի ծանոթագրությունը:

19. Գեւորգ Տեր-Վարդանյանի Ներսես Պալիանենցին նվիրված ուսումնասիրությունը, որտեղ արծարծվում է նաեւ այս հարցը, անտիպ է: Հեղինակին խորին շնորհակալություն ենք հայտնում անհրաժեշտ տեղեկությունները մեզ տրամադրելու համար - Կ. Ս.:

20. Հեթում Կոռիկոսցու ավագ որդին՝ Օշին պայլը, Օշին թագավորի մահից (1320թ.) հետո ամուսնացավ նրա այրու՝ Յովհաննա (Ժաննա-Իրեն) Անժուացու հետ, որը Լեւոն Ե (IV)-ի մայրն էր: Հայտնի է նաեւ, որ նա այս կնոջ հետ սիրավեպ էր ունեցել շատ վաղուց, մինչև թագավորի մահը, երբ որպես խնամախոս գնացել էր նրան Կիլիկիա բերելու (1316-ին): Հովհաննես Դարդեղը գրում է, որ Օշին պայլը «առեալ էր ի կնութին զզշտոյն Յովհաննա, զմօրու արքայի, հարեալ ի սէր անդստին ի ժամանակէ անտի, յորում ած գնա ի Նէապոլսոյ ի Հայս» (Յովհաննես Դարդեղ, Ժամանակագրութիւն, էջ 30): Մարիունը Օշին պայլի եւ Յովհաննայի դուստրն էր:

ՀեթոՒՄ ԿՈՌԻԿՈՍՑՈՒ Ժամանակագրության ընդօրինակությունների մեջ նախորդ երկու խմբի ձեռագրերից առանձնանում է Մատենադարանի թիվ 5599 մատյանի (Ժողովածու) տեքստը, որը տարբերվում է նախ վերնագրով, որտեղ չի նշված հեղինակի անունը, ապա բովանդակությամբ, որը խիստ կրճատված է²¹: Հնարավոր է, որ վերնագրում հեղինակի անվան եւ հարակից մի քանի բառերի դուրս թողնելը նույնպես տեքստի համառոտման միտումի արտահայտություն է, կամ էլ 1347թ. ձեռագիրն ընդօրինակող Ուրել գյուղի քահանա Ստեփանոսը դավանաբանական նկատառումներով լատինական կողմնորոշման ակնառու ներկայացուցիչ հեղինակի անունը միտումնավոր է կրճատել²²: Այստեղ Ժամանակագրությունը շարունակված է 1307-1341թթ., որին հաջորդող 1342-1345թթ. մի քանի տեղեկություններ (խառը հերթականությամբ) տեղական (գավառական) նշանակության դեպքերի մասին են²³, իսկ վերջին նշումը 1355թ. վերաբերյալ է: Այս օրինակն էլ Ժամանակագրության Գ խմբագրություն համարելով՝ պայմանականորեն խմբագրող ենք համարում գրիչ Ստեփանոս քահանային:

Երեք խմբագրությունների եւ խմբագրողների մոտեցումների տարբերության հետաքրքիր պատկեր է ներկայացնում 1292թ. ծագատիկի մասին տեղեկությունը: Հայտնի է, որ Հեթում Բ թագավորի հրամանով, այդ թվականին Կիլիկիան պաշտոնապես Ջատիկը նշել է կաթոլիկ եկեղեցու հետ՝ նույն օրը, մինչդեռ ավանդապահ Ժողովրդի մի մասը՝ Հայոց եկեղեցու սահմանած օրը, որը համընկել է նաեւ նեստորական ասորիների գատկական տոնին: Հեթում Կոռիկոսցին (Ա խմբագրություն) այդ մասին գրել է. «Յայսմ ամի մոլորումն եղև Ջատիկի, զի մոլորեցան Ասորիքն՝ Նեստորքն եւ բաժին մի՝ Հայոց»: Մինչդեռ Ներսես Պալիանենցը (Բ խմբագրություն) մոլեռանդորեն մոլորված է համարել բոլոր հայերին²⁴, ընդ որում, ակնար-

21. Ժամանակագրությունը չունի բնագրի բավական խոշոր հատվածներ, եղածներում էլ կան կրճատումներ: Վ. Հակոբյանը նշում է. «Ե բնագրում (ձեռ. թիվ 5599 - Կ. Մ.) բացակայում են 1196թ., 1198-1204թթ., 1205-1206թթ., 1213-1216թթ., 1217-1219թթ., 1227-1265թթ., 1270թ., 1272-1273թթ. վերաբերող վկայությունները, ինչպես նաև ուրիշ մանր վկայություններ» (ՄԺ, հ. 1, էջ 68):

22. Չպետք է բացառել նաև այն տարբերակը, որ Ստեփանոսի կամ նրա նախօրինակի գրչի ձեռքին եղել է այն օրինակը, որտեղ Ժամանակագրության հեղինակի անունը ջնջված է տեղում նոր անուն է գրված եղել, ուստի նրանք հասկանալով, որ ինչ որ բան այնպես չէ, այդ անունը զանց են առել: Ստեփանոսի մատյանում Հեթում Բ-ի խմբագրության հետ առնչվող միայն մեկ վկայություն կա, բայց այլ ձևակերպմամբ. «Փոխեցաւ ի Քրիստոս Կեռան թագուհին» (ՄԺ, հ. 1, էջ 85):

23. Տե՛ս ՄԺ, հ. 1, էջ 88:

24. Հիշենք, որ Ներսես Պալիանենցը հիմնական հեղինակն է եղել Հռոմի պապի պահանջով կազմված «Հայոց եկեղեցու մոլորությունները» անվանումով հայտնի եւ 117 մեղադրանք

կելով, որ նախկինում եւս նրանք մոլորված են եղել. «Յայսմ ամի եւս մոլորեցան զԶատիկն Հայք եւ Ասորիքն՝ Նստորք»: Ստեփանոս քահանան (Գ խմբագրություն), թերեւս հայ ավանդապահ հոգեւորականությունը ներկայացնելով, որեւէ մեկին չի մեղադրել, այլ միայն արձանագրել է ծոպատկի փաստը, որից պարզ էլ չէ, թե իրականում ով է եղել մոլորվողը՝ «Յայս ամի մոլորումն եղել Զատիկին»:

Այսպիսով, ունենք Հեթում Կոռիկոսցու Ժամանակագրության երեք խմբագրություն: Դրանցից հնագույնը (Ա) Հեթում Բ-ի խմբագրությունն է, որը նրան պատկանած օրինակի վրա, մեր կարծիքով, թագավորի ցուցումով կատարել է նրա քարտուղարը²⁵: Այդ օրինակը Հեթում Բ-ի սպանությունից հետո մնացել է արքունիքում, այդ պատճառով էլ դրա բնագիրն արդեն 1319-ին նախօրինակ է դարձել Օշին թագավորի ձեռագրի համար, ավելի ուշ՝ ընդմիջարկյալի վերնագրով՝ Բրիտանական թանգարանի ձեռագրի գրչի համար: Իսկ Ներսես Պալիանենցի (Բ) եւ Ստեփանոս քահանայի (Գ) խմբագրությունները, թեւէ զերծ են մնացել Հեթում Բ-ի խմբագրության հավելումներից, բայց որոշ չափով համառոտվել եւ 1296 թվականից հետո շարունակվել են խմբագրողների ձեռքով:

Ավելացնենք, որ Հեթում Կոռիկոսցու Ժամանակագրության մի օգտագործող-շարունակողն էլ եղել է Հայոց ջամբոլա (սենեկապետ) Հեթում Նդիրցին, որն իր Ժամանակագրությունը (պահպանվել է Բրիտանական թանգարանի վերը նշված ձեռագրում, եզակի օրինակով) վերնագրել է Հեթում Կոռիկոսցու պես՝ «Համառոտ պատմութիւն Ժամանակաց» եւ սկսելով 1099 թվականից՝ մինչեւ 1296 թվականը Կոռիկոսցու Ժամանակագրությունից տասնյակ Ժամանակագրական միավորներ է արտագրել նույնությամբ

ներկայացնող գործի (տե՛ս Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Բ, Ս. Էջմիածին, 2001, էջ 2179-2222):

25. Հեթում Բ-ն իր ստացած Սաղմոսարանի 1292 թվականից հետո գրված հիշատակարանում Ժամանակագրական կարգով, առաջին դեմքով նշում է իր երկու պապերի, հայրական տատի եւ ծնողների (ընդամենը 5 հոգու) մահվան թվերն ու ստույգ ամսաթվերը (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 705): Այդ տեղեկություններից երկուսի՝ (մայրական պապի եւ մոր մահվան մասին) Կոռիկոսցու Ժամանակագրության մեջ միջնորդավորված ներթափանցման մասին է հուշում այն հանգամանքը, որ թագավորի մոր՝ Կեռանի մահվան ամսաթիվը սխալ է՝ «յոգոստոսի ԻԹ (29)», այն դեպքում, երբ իր հիշատակարանում Հեթում Բ-ը նշում է օգոստոսի 9-ը՝ «ի յաւգոստոս Թ (9)», եւ որը փաստագրում է նաեւ Սարգիս Սեցին՝ «Կեռան թագուհին մեռաւ, եւ է օգոստոսի Թ (9)» (ՄԺ, հ. 1, էջ 105): Թվում է, որ այս երկու վկայությունները, որոնք առաջին դեմքով են գրված, (Փոխեցաւ ի Քրիստոս առաքինի մայրն իմ, Կեռան...) Ժամանակագրության մեջ արտագրվել են Հեթում Բ-ի Սաղմոսարանից (որի Ժամանակ կատարվել է ամսաթվի գրչական վրիպում): Իսկ մյուս ընդմիջարկությունները՝ «Դաւ եղել Հեթում թագաւորին...» եւ այլն, թագավորի քարտուղարը գրել է արդեն երրորդ դեմքով:

կամ փոքր կրճատումներով: Այս բնագիրը հրատարակած Լ. Տեր-Պետրոսյանը, 1296 թվականի ներքո եղած տեղեկությունը ծանոթագրելով, գրում է՝ «այստեղից սկսվում է Հեթում Նղիրցու սեփական շարադրանքը»²⁶ (դրանից հետո ժամանակագրությունը շարունակվում է մինչև 1344թ.):

Ամփոփելով կարող ենք ասել, որ Հեթում Կոռիկոսցու այս ժամանակագրությունը չունի ո՛չ ձեռագրերի ու խմբագրությունների, ո՛չ էլ հրատարակությունների պակաս, բայց միայն՝ բուն նյութի ամփոփման եւ հեղինակային տեքստի զտման, հավելումների առանձնացման կարիք, ինչն էլ պիտի փորձենք կատարել ստորեւ:

ՔԱՆԻ ՈՐ Հեթում Կոռիկոսցու ժամանակագրությունը ծավալով փոքր է, նպատակահարմար գտանք տեքստը ներկայացնել երեք խմբագրությունների զուգադրմամբ, նմանություններն ու տարբերություններն ավելի ակնառու դարձնելու համար, մանավանդ նկատի ունենալով, որ Ա եւ Բ խմբագրություններն ունեցել են առանձին հրատարակություններ: Ամբողջական շարադրանքը տալիս ենք Ա խմբագրության սյունակում, իսկ մյուս երկու սյունակներում՝ նույն ժամանակագրական միավորի համար կրկնության դեպքում նշում ենք «Նույնը», իսկ բացակայության դեպքում՝ «Չիք»: Եթե ժամանակագրական միավորի տեքստը զգալիորեն տարբերվում է Ա խմբագրությունից, կամ համեմատության համար էական մանրամասներ է պարունակում, այն դնում ենք համապատասխան սյունակում՝ որպես այդ տեղեկության տարբերակ²⁷:

Ա խմբագրության տեքստում չակերտների մեջ դնելով եւ շեղ տառերով առանձնացրել ենք այն տողերը, որոնք հավանորեն ժամանակագրության մեջ են մուծվել խմբագրողի՝ Հեթում Բ թագավորի կամ նրա քարտուղարի ձեռքով:

Ծանոթագրությունները ներկայացվում են վերջում՝ ըստ հաջորդական տարեթվերի եւ ժամանակագրական միավորների (հանրահայտ դեպքերը եւ տեղանունները՝ օրինակ Կիլիկիա, Միս եւ այլն, չենք ծանոթագրել)²⁸: Ծանոթագրություններում հաճախ վկայաբերում ենք տվյալ ժամանակագրական միավորի զուգահեռը Հեթում Կոռիկոսցու թարգմանած եւ լրացրած «Պատմութիւն խորոնիկոնին» ժամանակագրությունից՝ առաջին հերթին աղբյուրը եւ նմանությունը ցույց տալու համար, միաժամանակ դրանցում երբեմն լինում են հավելյալ անվանումներ եւ բառեր, որոնք ավելի են հստա-

27. Ուղղագրական տարբերությունները չենք նշում, եթե դրանք վերաբերում են գրության ձևին՝ «ա» կամ «օ» (պահում ենք կիրառված հին ձևեր՝ ա), «դ»-ին եւ «լ»-ին (Պաղտին-Պալտին), կամ եթե իմաստը նույնն է, բառերը տարբեր, օրինակ մի տեղում՝ «վախճանեցա», մյուսում՝ «մեռա» եւ այլն: Անգամ նույն ձեռագրում (Ա1, Ա2) «գալեր» նալի անունը կարող է գրվել դալե կամ խալե, ֆրանսերեն «թագավոր» բառը (ռուա, roi)՝ «ըռէ» կամ «ռէ», եւ այլն: Տարբերությունների այս եւ այլ մանրամասներ չենք նշում, մանավանդ նկատի ունենալով ժամանակագրության համեմատական բնագրի հրատարակությունը «Մանր ժամանակագրություններում»:

28. Ծանոթագրություններն աշխատել ենք չծանրաբեռնել տեղեկատու գրականության հղումներով: Որոշ տեղանուններին կամ անձնանուններին կից փակագծում նշում ենք դրանց գրության օտարալեզու ձևերը, որպեսզի հետաքրքրվողները հեշտությամբ հավելյալ տեղեկություններ գտնեն համացանցում: Ժամանակագրության մեջ նշված բերդերի ու բնակավայրերի գտնվելու տեղերը կարելի է տեսնել Կիլիկիայի եւ խաչակիրների պետությունների քարտեզներում (Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Ա, էջ 543-549):

կեցնում հրատարակվող բնագրում եղած տեղեկությունները (օրինակ՝ 1202, 1208, 1210, 1220, 1259, 1260, 1282թթ. միավորները եւ այլն):

Ժամանակագրության երեք խմբագրությունները ներկայացվում են հետեւյալ ձեռագրերով եւ հրատարակություններով.

Ա խմբագրություն

(Հեթում Բ թագավորի)

Ա1 - Օշին թագավորի Ժամագիրք, 1319թ., գրիչ՝ Հակոբ քհ., հանձնարարող՝ «Թորոս աւագերեց գղրան արքունի», ստացող՝ Օշին թագավոր (Հալեպի Ս. Քառասնից մանկանց վանքի հավաքածու, ձեռ. 6, էջ 1002-1014)²⁹, հրատ.՝ Նկարագիր Օշին թագավորի ձեռագիր Ժամագիրքին, 1319, նկարագրեց Արտաւազդ արքեպիսկոպոս, Անթիլիաս, 1933, էջ 93-101:

Տեքստի առանձնահատկություն - «եղբայր» բառը որոշ տեղերում գրված է «աղբայր»:

Ա2 - Ժամանակագրական նյութերի ժողովածու, մոտ. 1382-1404թթ. (Բրիտանական թանգարան, Օր. 5458, թերթ 135բ-142բ, Մատենադարան, դրսի մանրածապավեն՝ 360): Այս օրինակում ժամանակագրությունն ավարտվում է 1270 թվականով (թերի է):

Ա3 - Ժողովածու, 1724թ., գրիչ՝ Պետրոս վրդ. Աստապատցի, վայր՝ Երուսաղեմ, Հալեպ (Մատենադարան, ձեռ. թիվ 663, թերթ 246ա-252բ), հրատ., Մանր ժամանակագրություններ, 13-18-րդ դդ., հ. 1, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երեւան, 1951, էջ 37-80:

Տեքստի առանձնահատկություն - Վերնագրից բացի գրիչն ամենուր Հեթում անձնանունը գրում է «Հեդում»: Տողատակերում Ա3 ձեռագրի հղումները ոչ այնքան տարբերեցումներ են մատնանշում, որքան ուշ շրջանի ընդօրինակության հետեւանք հանդիսացող գրչական սխալներ ու վրիպումներ, սակայն դրանցից առավել ակնառուները նշում ենք, քանի որ այս օրինակն է դարձել Ժամանակագրության 1951թ. հրատարակված համեմատական բնագրի հիմք (որից կատարվել է նաեւ ռուսերեն թարգմանությունը), եւ այդ տեքստը լայն տարածում է գտել գիտական գրականության մեջ:

Բ խմբագրություն

(Ներսես Պալիանենցի)

Բ1 Վենետիկի Մխիթարյանների մատենադարանի ձեռագրերից մեկի հիման վրա կատարված հրատ.՝ Հեթում պատմիչ թաթարաց, յեղեալ ի լա-

29. Խորին շնորհակալություն ենք հայտնում Բերիո թեմի առաջնորդ Տ. Շահան եպիսկոպոս Սարգիսյանին ձեռագրի համապատասխան էջերի լուսանկարները մեզ ուղարկելու համար, որով հնարավոր եղավ այս օրինակի տպագրի մի քանի վրիպումներն ուղղել – Կ. Մ.:

տին օրինակէ ի հայ բարբառ ի ձեռն Հ. Մկրտիչ վարդապետի Աւգերեան, Վենետիկ, 1842 (որպէս հավելված), էջ 77-86:

Բ2 Ժողովածու, 1421թ., գրիչ՝ Ֆրա Հովսէփ, վայր՝ Կաֆա, (Մատենադարան, ձեռ. թիվ 2037, թերթ 145ա-146բ):

Տեքստի առանձնահատկություն - Սկզբում (մինչեւ 1104թ.) Հայոց թվականից հետո նշված է նաեւ Փրկչական թվականը:

Բ3 Ժողովածու, 1700թ., գրիչ՝ Մարգար Զմյուռնիացի, վայր՝ Կոստանդնուպոլիս (Մատենադարան, ձեռ. թիվ 3079, թերթ 215բ-221բ): Այս օրինակն օգտագործվում է միայն բուն Ժամանակագրությանը հաջորդող հավելումները նշելու համար, քանի որ կրկնում է միաժամանակ Բ1 եւ Բ2 օրինակներում եղած բոլոր տարբերությունները: Ամենավերջին տեղեկությունը համեմատված է նաեւ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի թիվ 995 ձեռագրում (Մատենադարան, դրսի մանրաժապավեն՝ 890) եղած ժամանակագրության համապատասխան հատվածի հետ:

Գ խմբագրություն

(Ստեփանոս քահանայի)

Գ1 - Ժողովածու, 1347թ., գրիչ՝ Ստեփանոս քհ., վայր՝ Ուրեղ գյուղ (Մատենադարան, ձեռ. թիվ 5599, թերթ 219ա-221բ):

Տեքստի առանձնահատկություն - «Օ» հնչյունն արտահայտելու համար «աւ»-ը «օ» գրելով՝ գրիչն այդ տառն է գործածում նաեւ «աւ» երկհնչյունի տեղում, օրինակ Դաւիթի փոխարեն՝ Դօիթ: Մենք տալիս ենք ուղիղ ձևը: Այս օրինակում Ժամանակագրության ավարտին հաջորդող շարունակությունը տրված է թվականների խառը հերթականությամբ (տե՛ս ՄԾ, հ.1, էջ 88), մենք տալիս ենք ժամանակագրական հաջորդականությամբ:

Տողատակերում կիրառվում է՝

- փոխարեն բառի համար՝] նշանը³⁰,
- չկա (չիք) բառի փոխարեն՝ > նշանը,
- հաւելումների դեպքում՝ + նշանը:

30. Օրինակ, տողատակում «Ա3 Սպիլ] Սլիպ, Բ1, Բ2՝ Սիպիլա», նշանակում է, որ բնագրի «Սպիլ» անվան փոխարեն Ա3 ձեռագիրն ունի «Սլիպ», իսկ Բ1 եւ Բ2 ձեռագրերը՝ «Սիպիլա» ձևը:

ՀԵԹՈՒՄ ՊԱՏՄԻՉ ԿՈՌԻԿՈՍՑԻ

«ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԺԱՄԱՆԱԿԱՑ ՀԱԻԱՔԵԱԼ

Ի ԶԱՆԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ...»

(ԵՐԵՔ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶՈՒԳԱԴՐՄԱՄԲ)

Վերնագիր	Ա խմբագրություն Շեքուն Բ թագավորի	Բ խմբագրություն Ներսես Պալիամենցի	Գ խմբագրություն Ստեփանոս քահա- նայի
Թվական	Համառոտ պատմություն ժամանակաց հաւաքեալ ի վանական պատմութեանց, այսինքն՝ ի Հայոց, ի Ֆռանկաց, ի Յունաց, ի յԱսորոց գրեմաց ¹ , աշ- խատութեամբ իմոյ, ծառայիս ² Աստուծոյ Հեթմոյ, տեառն Կոռնիկասոյ ³ , ի թվականիս Հայոց ՉԽԵ (1296)	Ժամանակագրութիւնը երեք հարիւր եւ մէկ ամաց ⁴ կարճ ի կարճոյ հաւաքեալ ի վանական պատմու- թեանց՝ Հայ, Ֆռանկ եւ Ասորի, շարագրեալ պարոն Հեթմոյ տեառն Կոռնիկու- սոյ եւ արար վայս բանք ի թուին Հայոց ՇԽԵ (1296) եւ յամի մարդեղութեան Տեառն ՌՄՂԶ (1296)	Համառոտ պատմու- թիւն ժամանակաց հաւաքեալ ի վանա- կան պատմութեանց, այսինքն՝ ի Հայ, ի Ֆռանկ, ի Յուն եւ ի յԱսորի գրեմաց, ի թուականիս Հայոց ՉԽԵ (1296)
ՇԽԵ 1076	Գազիկ թագաւորն Հայոց սպանաւ յորդոցն Ման- տալի ⁵ , ի բերդն Կենդղասկոյ ⁶ : Յետ որոյ ⁷ Ռուբէն ազգական նորա երթեալ բնակեցաւ ի սահմանս Կաւսիտառոյ, եւ անտի հասեալ ի գեղն Կարմա- վալօ եւ անդ վախճանեցաւ: Եւ որդի նորա ⁸ Կոս- տանդին ետաւ Կվահկայն, եւ մախ սա տիրեաց ի Կիլիկեա, ի վերայ ազգին Հայոց:	Նույնը	Նույնը
ՇԽԹ 1080	Սուլիմանն ետաւ զԱմտիոք, սպանաւ Սուլիմանն ⁹ :	Չիք	Նույնը
ՇԽԵ 1096	Շարժեաց Աստուած զմեծ բասաճն Ֆռանկաց գալ ի թափումն յերուսաղէմի ի ձեռն ֆռանկի միայնա- կեցի միոյ, որուն անունն էր Փեռ Էրմիդ:	ՇԽԶ (1097) Եղեւ առաջին բասաճն Ֆռանկաց գալ յե- րուսաղէմ եւ ապա տեղ յանձ- րինաց ի ձեռն միայնակեցի միոյ ֆռանկ, որոյ անունն Փեռ Էրմիդ կոչիւր:	Նույնը
ՇԽԶ 1097	Բասաճն ետաւ Կիլիկիեա քաղաքն ի Յունաց:	Նույնը	Նույնը
ՇԽԵ 1098	Եղեւ թափումն Ամտիոքայ եւ Ռոռայոյ յանարի- նաց ¹⁰ :	Նույնը	Նույնը
ՇԽԸ 1099	Եղեւ թափումն Երուսաղէմի եւ տուլն Գանտաւֆրէ ¹¹ տիրեաց Երուսաղէմի:	Նույնը	Նույնը
ՇԽԹ 1100	Մեռաւ Գանտաւֆրէ եւ եկաց առաջին թագաւոր Երուսաղէմի Պաղտինն, եղբայրն Գանտաւֆրէ, կոման Ռոռայոյ:	Նույնը	Նույնը
ՇԾ 1101	Առաւ Սկայրն ¹² յանարինաց:	Նույնը	Նույնը

1. Ա3 գրեմաց] գրեմաց, Ա2 > գրեմաց

2. Ա3 + Քրիստոսի

3. Ա2 Հեթմոյ, տեառն Կոռնիկասոյ] Յովհաննէ սպասաւոր բանին

4. Բ2 > երեք հարիւր եւ մէկ ամաց: Վեմագրի վերետուն հետագայի
հավելում՝ «յ եւ մէկ ամաց»:

5. Ա3 Մանտալի] Մանդէլի, Ա1՝ Մանդալի

6. Գ1 Կենդղասկոյ] Կետոասկոյ, Բ1 + ի Լիկամոլոնն

7. Ա3 «Յետ որոյ...» նախադասութիւնը դնում է ՇԸ (1081)

թվականի ներքո:

8. Ա3 «Եւ որդի նորա...» նախադասութիւնը դնում է ՇԽ (1091), Բ1՝
ՇԽԶ (1097) թվականի ներքո:

9. Ա3 Սուլիմանն ետաւ զԱմտիոք, սպանաւ Սուլիմանն] Սոլեմոն

10. Ա2 > Եղեւ թափումն Ամտիոքայ եւ Ռոռայոյ յանարինաց: Բ1,
Բ2 Եղեւ թափումն Ամտիոքայ եւ Ռոռայոյ յանարինաց] Ազատե-
ցան յանձրինաց Ամտիոք եւ Ռոռա:

11. Բ1, Բ2 Գանտաւֆրէ] Կոստաւֆրէ

12. Բ1 Սկայր] Խոսայրն, Բ2՝ Խոսայրն

ՇԾԱ 1102	Պարոնն Հայոց Կոստանդին վախճանեցաւ, եւ տառ վիշխանութիւն նորա, անդրանիկ որդին իւր՝ Թորոս:	Նույնը	Նույնը
Ռիչարդ Առյուծասիրտը նշված քաղաքները գրավել է արյունալի մարտե-
րից հետո, որոնցից նշանավոր էր 1191 թ. սեպտեմբերի 7-ին Արսուֆի մոտ
կայացած ճակատամարտը: Նրա եւ Սալահեդդինի միջեւ հաշտություն է
կնքվել 1192 թ. սեպտեմբեր 2-3-ին, երեք տարի ութ ամիս ժամկետով:

- 1194 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՃՂԴ (1194) Մեռաւ Կի թագաւորն Երուսա-
ղեմի եւ Թ (9)-երորդ թագաւորեաց եղբայր նորա Հէմրի: Յայսմ ամի Լեւոն
տէրն Հայոց կալաւ զՊէմունտ բրինձն Անտաքոյ եւ զնտանեաց ի Սսոյ կլայն»
(ՄԺ, հ. 2, էջ 60):

«Կի» - Գի դը Լուսինյան (տե՛ս 1191 թ. ծան.):

«Հէմրի» - Կիպրոսի թագավոր Ամորի Ա (1194-1205):

«Տեմունտ/Պէմունտ» - Անտիոքի պրինց Բոհեմունդ Գ Կակազ (1163-1201):

- 1195 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՃՂԵ (1195) Ազատեցաւ Պեմունտ բրինձն
ի Սսոյ կլայէն միջնորդութեամբ գունթ Հեռէ, որ արար խնամութիւն յիրենց
մէջն» (ՄԺ, հ. 2, էջ 60):

«Գունթ» - կոմս (ֆր. comte), «Հեռի» - Հենրի Շամպայնացի, Երուսաղեմի թա-
գավոր (1192-1197): Այս դեպքերի մասին տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիր-
ները եւ հայերը, հ. Բ, էջ 172-179:

- 1196 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՃՂԶ (1196) Մեռաւ Սալահատինն եւ իր
աղբայրն Սէֆտինն հայրենէթփեց զաղբրորդիքն եւ ինք տիրեաց Մսրա եւ
Դմշխա» (ՄԺ, հ. 2, էջ 60):

Սալահեդդինը մահացել է 1193 թ., որին հաջորդել է եղբայրը՝ Ադիլը (Եսլը)՝
Սելֆ ադ Դին ալ Ադիլ, որը որպէս սուլթան իշխել է 1196-1218 թթ.:

- 1197 Լեւոն Բ (I) թագավոր Հայոց՝ 1198-1219, «Պատմութիւն խրոնիկոնին» գոր-
ծում թագադրումը նշվում է 1198-ին (ՄԺ, հ. 2, էջ 61):

«Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՃՂԷ (1197) Առին քրիստոնէքն զՃալէթ դա-
ւով յանարինաց... Եւ Մէլէքըլ Յայտլն էառ զՃաֆն ի քրիստոնէից» (ՄԺ, հ. 2,
էջ 61):

«Ճալէթ» - Զիբէյլ (Բիբլոս), Բեյրութից հյուսիս, «Ճաֆ» - Յաֆֆա, ծովափնյա
քաղաք Պաղեստինում:

- 1198 Քրիստոնյաները Բեյրութը վերագրավել են 1197 թ. հոկտեմբերի 23-ին:

- 1201 Անտիոքի պրինց Բոհեմունդ Դ Միակնանի (1201-1216, 1219-1233): Նրա
իշխանության գալը նշվում է նաեւ 1206 թ. տեղեկության մեջ, որը հավա-
նաբար թյուրիմացության հետեւանք է, քանի որ ժամանակագրության մայր
աղբյուրը՝ «Պատմութիւն խրոնիկոնին» գործն այդպիսի տեղեկություն չի
պարունակում (ՄԺ, հ. 2, էջ 61):

- 1202 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՄԲ (1202) Եղեւ մեծ շարժն որ փոյոյց զԱքա եւ զՄուր, զՃալէթ, զԱրկա եւ մեծ մասն ի Տրապաւլսոյ եւ այլ շատ քաղքնի ի քրիստոնէից եւ յանաւրինաց» (Մժ, հ. 2, էջ 61):
- 1204 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՄԴ (1204) ...Գունթըր տ Ֆլանդրն եւ տուկն Վնիժին առին զԿոստանդինուպալիս ի Յունաց: ...Եւ թագեցին կայսր Կոստանդինուպալսի զՊաղտինն: Եւ թագաւորն Կիպրոսի Հէմրի յորկեց զիր դալէքն ի Կիպրուսա եւ ի Սեհլէն՝ յԵգիպտոս, որ աւերեցին զՖաւճն եւ բերին մեծ շահ: Եւ Ֆիլիպ ըւէ տը Ֆրանցն շահեցաւ ի թագաւորէն Ընկլիզաց զՆորմանդոյ երկիրն» (Մժ, հ. 2, էջ 61):
- «Գունթ տը ֆլանտրն» - Ֆլանդրիայի դուքս եւ Կոստանդինուպոլսի առաջին լատին կայսր Բալդունին Ա (1204-1219):
- Ֆրանսիայի թագաւոր Ֆիլիպ Բ Օգլուստ (1180-1223):
- 1206 Տե՛ս 1201 թ. ծանոթագրությունը:
- 1207 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «Եւ յայսմ ամի թագաւորն Հայոց Լեւոն կալաւ զՍեւաստիաւսն Հէոի որդովքն եւ զԿոստանց Խումարտիաշն եւ զՃաւալինն եւ զՊաղտինն:
- Եւ զտէր Յոհանէս կաթողիկոսն ընկեցին յաթոռոյն եւ եղին կաթողիկոս զտէր Դաւիթ Արքակաղնցին» (Մժ, հ. 2, էջ 62): Լեւոնի ձերբակալած անձանց հիշատակում է Սմբատ Սպարապետը Լեւոն Բ-ի թագադրության հանդեսի մասնակիցների թվում (Սմբատ Սպարապետ, էջ 210, տե՛ս նաեւ Մժ, հ. 1, էջ 93):
- Հայոց կաթողիկոս Հովհաննէս Զ Սսեցի (1203-1207, 1211-1221), կաթողիկոս Դավիթ Արքակաղնեցի (1207-1211): Այս դեպքերի մանրամասները տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, էջ 1833-1836:
- 1208 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՄԸ (1208) Պեմունտ բրինձն Անտաքոյ խանգրեաց զիր ձիաւորքն եւ զԱնտաքոյ գումինն, որ մոտեալ էին ընդդէմ նորա. եւ վասն զի թերադրութեամբ պատրիարգին եղեւ մոտութիւնն այն. կալաւ զպատրիարգն եւ եղ ի բանդի, որ եւ անդ վախճանեցաւ: Խոսրովշահ սուլտանն յԵկոնիոյ որդի Խլիճ Ասլանին էառ զԲերդուսն ի Հայոց եւ կալաւ զտէր նորա զԳրիգոր որդի Լեւոնի» (Մժ, հ. 2, էջ 62):
- «Խոսրովշահ» - Ռումի սուլթան Գիյաթ ալ-Դին Քեյ Խոսրով Ա (1205-1210): Մարաշից հյուսիս գտնվող Բերդուսի տիրոջը հիշում է նաեւ Սմբատ Սպարապետը (Սմբատ Սպարապետ, էջ 210):
- 1209 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՄԹ (1209) Պատերազմեցաւ Լաշքարի կայսրն Յունաց ընդ սուլտանն յԵկոնիոյ ի Խոնաս: Եւ յաղթեալ անաւրինացն սպանաւ սուլտանն եւ եկաց ի տեղի նորա սուլտան յԱզըտին Քայքաւուսն» (Մժ, հ. 2, էջ 62):
- «Լաշքարի» - Նիկիայի կայսրության հիմնադիր Թեոդոր Ա Լասկարիոս (1204-1222):
- «Ազտին Գագաուզ» - Ռումի սուլթան Իզգեդդին Քեյ-Քավուս Ա (1210-1219):
- «Խոնաս» - Կոլոսսա, քաղաք Փոքր Ասիայում:

- 1210 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՄԺ (1210) Ամուսնացաւ ընդ թագուհին Երուսաղէմի Մարին՝ Ճուանն, որ յետոյ կոչեցաւ ըռէ Ճուան, որ եկաց Ժ (10)-երորդ թագաւոր Երուսաղէմի: Յայսմ ամի Լեւոն թագաւորն Հայոց Էանց ի կղզին Կիպրոս եւ ամուսնացաւ ընդ Սպիլ, քոյր թագաւորին Կիպրոսի ըռէ Ոյկին» (ՄԺ, հ. 2, էջ 62):
- 1211 Տե՛ս 1207 թ. ծանոթագրութիւնը:
- 1213 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՄԺԳ (1213) Եւ եղել մեծ պատերազմն ընդ քրիստոնէայսն ընդ Տաճիկսն յաշխարհն Սպանիոյ: Եւ Հաշիշիքն հարեալ սպանին զՊեմունդ բրինձն Անտիոքա (ՄԺ, հ. 2, էջ 62):
«Հաշիշիք» - Իսմայիլիտ ֆանատիկոս աղանդավորներին տրված անվանում, որով բնորոշվում է նրանց հաշիշամոլ լինելը: Նրանք հայտնի էին որպէս անվրէպ մարդասպաններ:
«Մղրպիք» ասելով հեղինակը նկատի է ունեցել իսպանական մավրերին:
- 1214 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «Ֆիլիպ ըռէ տը Ֆրանցն խանգրեաց զԱւդուն ընբրորն Ալամնաց ի կանդարայն, որ կոչի Պուվինս: Եւ Լաւիզ որդի ըռէ տը Ֆրանցին խանգրեաց զթագաւորն Ընկլիզաց զըռէ Ճուանն ի գաւառն, որ կոչի Բաւրդաւ...» (ՄԺ, հ. 2, էջ 63):
«զԱւդ» - Գերմանական կայսր Օտոն Դ (1198-1218): Այլ մանրամասներ տե՛ս ՄԺ, հ. 1, էջ 94, ծան. 49, ՄԺ, հ. 2, էջ 87, ծան. 128, 129:
- 1215 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՄԺԵ (1215) Ինաւսանթ պապն արար ժողով ընթանարական ի Հռոմ, վասն թափման Երուսաղէմի, ՆԻԲ (422) եպիսկոպոսաց եւ ՀԲ (72) արքեպիսկոպոսաց» (ՄԺ, հ. 2, էջ 62):
Տեղեկութիւնը Հռոմի Ինոկենտիոս Գ պապի (1198-1216) հրավիրած Լատերանի 12-րդ տիեզերական ժողովի մասին է:
- 1216 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «Եւ մեռաւ ընբրորն Ալամնաց Աւդունն եւ տիրեաց յետ նորա Ֆրտրիկն: Յայսմ ամի թագաւորն Հայոց Լեւոն Էառ դաւով ի գիշերի զքաղաքն Անտիոք եւ կացոյց անդ բրինձ զըռաւրբէն, թոռն ըռաւրբինի աւագ եղբարն իւրոյ:
Եւ ծնաւ Զապէլ դուստր թագաւորին Լեւոնի:
Յայսմ ամի Քայքաուս սուլտանն յիկոնիոյ պաշարեաց զբերդ Կապանն եւ կալաւ զիշխանսն Հայոց զԿոստանդին գունդուստապլն, որ կոչեցաւ Աւագ պարոն եւ զԿոստանդին, որդի տեառն Լամբրունին եւ զԿեռասակ տէրն Մաղվայոյ եւ զայլսն» (ՄԺ, հ. 2, էջ 63):
«Ֆրտրիկ» - Գերմանական կայսր Ֆրիդրիխ Բ (1212-1250):
Զաբէլ, Հայոց թագուհի (1219-1252):
Անտիոքի 1216 թ. գրավման մասին տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 224-225, 235:
Ռոմի սուլթանի արշավանքի եւ Կապանի մոտ տեղի ունեցած պարտության մասին տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Երևան, 1976, էջ 692-693:

- Կեռասկին Սմբատ Սպարապետը կոչում է «իշխան Մաղվայոյ եւ Սիկոյ եւ Պալապօլին» (Սմբատ Սպարապետ, էջ 210):
- 1217 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՄԺԷ (1217) Եկն յայսկոյս ծովու թագաւորին Ունգոաց եւ տուկ Տաւս տը Ռիչն եւ բազմութիւն խաչվորացն Ունգոաց եւ Ալամնաց, որ եւ գնացին մինչեւ ի Թափարական լեռն եւ շինեցին բերդ զՋաստէլ Բլրինն, Դամփլցեց: Եւ ըռէ Ճուանն եւ պատրիարքն շինեցին զՄը-գայրին բերդն» (ՄԺ, հ. 2, էջ 63):
- «Ունկոաց» - հունգարացիների:
- Ջաստէլ բերդը, որը հանձնվել է Տաճարականների՝ «Դամփլցեց», գտնվում է Թաքոր լեռան մոտ:
- 1218 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՄԺԸ (1218) Վախճանեցաւ ըռէ տը Կաստէլն, որ կոչէր Ալֆոնսս ըլ Պաւն: Եւ թագաւորն Կիպրոսի Ոյկն վախճանեցաւ ի Տրապաւլիս: Եւ գնացին զաւրքն քրիստոնէից ի Տամիաթն: Յայսմ ամի թագաւորն Հայոց Լեւոն ետ զին սուլտանին զբերդն Լուվլայ եւ զԼավգատի եւ ազատեաց զկալանաւոր իշխանսն իւր» (ՄԺ, հ. 2, էջ 63):
- «Ոյկ» - Կիպրոսի թագավոր Հուգո Ա (1205-1218):
- «Ալֆոնսս լ Պաւն» Իսպանական Կաստիլիայի թագավոր Ալֆոնս Բարի (1158-1214):
- Լուլուա եւ Լավգատ բերդերի մասին տե՛ս Մ. Յովհաննէսեան, նշվ. աշխ., էջ 107-109, 237:
- 1219 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՄԺԹ (1219) Զաւրքն քրիստոնէից առին զՏամիաթն յանաւրինաց: Եւ Պեմունտ բրինձն խլեաց զԱնտիոք յեղբարորդոյն իւրմէ յըՌաւբինայ, տուրտվութեամբ Կիլամ Ֆարապէլին: Եւ յայսմ ամի վախճանեցաւ թագաւորն Հայոց Լեւոն» (ՄԺ, հ. 2, էջ 63):
- 1220 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «Յայսմ ամի վախճանեցաւ Ֆիլիպ ըռէ տը Ֆրանցն եւ թագաւորեաց որդի նորա Լաւիզն: Պարոն Վահրամ Մարաշախտն Հայոց եւ այլ իշխանքն կամեցան բռնութեամբ թագաւորեցուցանել Հայոց ըՌաւբէն բրինձն: Եւ պայլն Հայոց Կոստանդին կոտորեաց զնոսա մերձ ի Մսիս եւ պաշարեալ զքաղաքն Տարսուս ամիսս երիս եւ աւուրս ինչ, եւ առեալ զքաղաքն կալաւ զբրինձն ըՌաւբէնն եւ զիշխանսն եւ առաքեաց ի Բանտի յանառիկ դղեակսն ի Բարձրբերդ եւ ի Պապեռաւնն: Եւ յայսմ ամի վախճանեցաւ կաթողիկոսն Հայոց տէր Յոհանէս եւ եկաց կաթողիկոս Հայոց տէր Կոստանդին Բարձրբերդցին» (ՄԺ, հ. 2, էջ 63): Այս դեպքերի մասին հանգամանորեն պատմում է Սմբատ Սպարապետը (Սմբատ Սպարապետ, էջ 223-225):
- Հայոց Կաթողիկոս Կոստանդին Ա Բարձրբերդցի (1221-1267):
- 1221 «Ֆիլիպ» - Հայոց թագավոր Փիլիպոս (1222-1225):
- «Պաֆ» - Պաֆո/Բեֆո քաղաք Կիպրոսում:
- 1226 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՄԻԶ (1226) Եկաց երրորդ թագաւոր Հայոց Հեթում որդի Կոստանդեա պայլոյն Հայոց:... Ֆրերքն Ալամնաց սկիզբն արարին շինելոյ զՄաւնֆաւրթն» (ՄԺ, հ. 2, էջ 64):

Հայոց թագավոր Հեթում Ա (1226-1269):

«Ալաման ֆրեյքը» (տե՛ս ծան. 1190 թ.), «Մունֆաւրդ» (Montfort), բերդ Հայֆայից 35 կմ հյուսիս-արեւելք:

- 1227 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՄԻԷ (1227) Յեկեղեցին Հռոմայ կանոնեցին գտարբն Ֆրանսէզ եւ գտարբն Անդոն ի կարգէ ֆրէր մնորացն եւ կարգեցին տանք նոցա: ... Քուրետին տիրեաց Դամասկոսի» (Մծ, հ. 2, էջ 64-65):
1227-1229 թթ. Դամասկոսում իշխել է Սալահ ադ Դին ալ Նասիր Բ-ը, որի անունն է հավանաբար ներկա բնագրում դարձել «Քուրետին»:

- 1228 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՄԻԸ (1228) Ընքրուր Ֆրտրիկն եկն յայսկոյս ծովուն եւ շինեաց զՃաֆն» (Մծ, հ. 2, էջ 65):

Գերմանական կայսր Ֆրիդրիխ Բ (1212-1250):

- 1229 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՄԻԹ (1229) Ընքրուր Ֆրտրիկն արար սէր ընդ Մէլէք Քէմլն եւ դարձուցին սիրով ի քրիստոնէքն զԵրուսաղէմ եւ զՆազարէթ եւ զԼիտն» (Մծ, հ. 2, էջ 65):

Եգիպտոսի սուլթան Մելիք էլ Քամել (1218-1238): 1229 թ. փետրվարի 18-ին կնքված 10-ամյա խաղաղության պայմանագրի մասին է, ըստ որի քրիստոնյաներին անցան Երուսաղէմի, Նազարէթի, Տորոնի եւ Լիդդայի շրջանները: Վերջինիս անունը ժամանակագրության մեջ սխալմամբ «Լիոն» է, մինչդէռ «Պատմութիւն խրոնիկոնին» գործում ավելի ճիշտ է՝ «Լիտ»:

- 1231 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՄԼԱ (1231) Լաւնկուպարտքն առին զՊերութա քաղաքն եւ պաշարեցին զԲերդն եւ ոչ կարացին առնուլ» (Մծ, հ. 2, էջ 65):

«Լաւնկուպարտք/ Լաւնկուպարտք» - Լանգոբարդներ անունով (նույնանուն գերմանական ցեղը նկատի ունենալով) հեղինակը կոչում է գերմանական կայսեր ուղարկած զորքերը:

- 1232 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՄԼԲ (1232) Լաւնկուպարտքն խլեցին զԿիպրոսի կղզին եւ Պերութա տէրն խանգրեաց զԼաւնկուպարտքն եւ թափեաց զկղզին ի նոցանէ» (Մծ, հ. 2, էջ 65):

Բէյրութի տէրը Հովհաննէս (Ժան) Իբելինացին էր: 1231-1233 թթ. քրիստոնյաների միջեւ ընդհարումների մասին տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Ա, էջ 95:

- 1233 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՄԼԳ (1233) Լաւնկուպարտքն տուին զԿէռինին բերդն ի Պերութա տէրն եւ ի Ճնուէզքն: Յայսմ ամի վախճանեցաւ բրինձն Անտիոքա Պեմունտ կոյրն եւ եկաց բրինձ Պեմունտնանկ» (Մծ, հ. 2, էջ 65):

Անտիոքի պրինց Բոհեմունդ Ե (1233-1252):

- 1238 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՄԼԸ (1238) Ըոէ Տըրակուն Տաւն Ճամն էառ զՎլանս քաղաքն յանարինաց» (Մծ, հ. 2, էջ 65):

Վալանսիա քաղաքը իսպանական Վալենսիա շրջանում, որը քրիստոնյա զորքերն Արագոնի (Տրակուն) թագավորի (Jaime I de Aragon) գլխավորությամբ մահմեդականներից գրավել են 1238 թ. հոկտեմբերի 9-ին:

- 1239 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՄԼԹ (1239) Ըոէ տա Նաւարն եւ այլ կոմսեր եկին յայսկոյս ծովու եւ պատերազմեցան ընդ զարս Մարայ մաւտ ի Խազէ: Եւ անաւրէնք յաղթեցին քրիստոնէից եւ եղեւ մեծ կոտորումն» (ՄԺ, հ. 2, էջ 65):
- Նավարայի թագավորի եւ այլ քրիստոնյա առաջնորդների գորքերը 1239 թ. նոյեմբերին պարտվել են Գազայի (Ղազե/Խազե) մոտ:
- 1240 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՄԽ (1240) Քրիստոնէայք Սեւիլին արարին սէր ընդ սուլտանն Դամասկոսի, եւ առին յանաւրինաց սիրով զՊեաֆարթն, զՍաֆէթ եւ զԵրուսաղէմի ամէն երկիրն: Եւ գունդ Ըոջարդն շինեաց զԱսխալան: Եւ դարձաւ ըռէ տը Նաւարն յիւր աշխարհն» (ՄԺ, հ. 2, էջ 66):
- Պիաֆորթ - Բոֆոր (Beaufort), Սաֆէթ (Safad) ամրոցներ Պաղեստինում:
- 1241 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՄԽԱ (1241) Պերութայ տէրն սկսաւ շինել զԱրսուֆ բերդն: Եւ յայսկոյս ծովու ընթրուրին դալէքն բռնեցին զՃնուէզացն դալէքն, որ զեպիսկոպոսունքն կու տանէին ի Հոռմ» (ՄԺ, հ. 2, էջ 66):
- 1244 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՄԽԴ (1244) Եղեւ կրկին սէր ընդ Սեւիլին քրիստոնէքն եւ ընդ սուլտանն Տմրշխա եւ դարձոյց սուլտանն ի քրիստոնէքն զԵրուսաղէմ իւր ամենայն երկրովն, որ է յայսկոյս Յորդանանու՝ զարդ զԵրիքով եւ զՆապլուզ: ...Յայսմ ամի Խորազմիքն մտին յաշխարհն Երուսաղէմի եւ պատերազմեալ խանգրեցին զՍեւիլին քրիստոնէայքն եւ կալան բազում իշխանք...» (ՄԺ, հ. 2, էջ 66):
- 1245 Ժամանակագրության Ա2 օրինակի տարբերությունը՝ «...Հեթում էառ զՊռականա ի Հոռոմաց սուլտանէն Քարմուտար, մտիւք», սխալ է, քանի որ հիշյալ շրջանում Ռոմի սուլթանն էր Գիյաթ ալ Դին Քեյ-Խոսրովը (Խիաթադին)՝ 1237-1246 թթ., որի անունը դժվար թե տառադարձվեր «Քարմուտար»: Խմբագրողը «մտիւք» ասելով թերեւս նկատի է ունեցել բերդի գրավումը հնարամտությամբ, խորամանկությամբ: Որոշ ուսումնասիրողներ այստեղ նշված «Քարամուտը» (Քարմուտ) բերդանուն են համարել: Սակայն հարցը լուծում է Հեթում Նղիբցու ժամանակագրությունը, որը սկզբնամասում գրեթե բառացիորեն քաղված լինելով Հեթում Կոռիկոսցու ժամանակագրությունից, հիշյալ հատվածում նշում է. «...Հեթում էառ զՊռականա ի Հոռոմաց սուլտանէն քարմուտ արամբք» (Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 540): Այստեղից երեւում է, որ Պռականա բերդի գրավումը կատարվել է քարագնաց (լեռնագնաց) մարտիկների՝ քարմուտ/քարամուտ արանց հանդուգն ներխուժման շնոհիվ: Հայկազյան բառարանը նշում է՝ «Քարամուտ - որ մտանէ ընդ ծերպս քարանց կամ ի ծակս վիմաց» եւ օրինակ բերում Մխիթար Գոշի առակներից՝ «քարամուտ եմք ի բերդս թշնամեաց» (Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2-րդ, Վենետիկ, 1837, էջ 996): Բայց այս բառի ավելի վաղ հիշատակություն ունի Մատթեոս Ուռհայեցու շարունակող Գրիգոր Երեցը, որը Քեսունի մոտ Պեհեսնի անառիկ բերդի դեմ Թորոս Բ-ի (1145-1168) եղբայր Ստեփաննի արշավանքի առիթով գրում է, որ Թորոսը եղբորը տվել էր նաեւ «արս ոմանս, զոր ինքեանք Քարմուտ

ասէին» (Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցոյ, Երուսաղէմ, 1869, էջ 522), որոնց գործը հենց բերդ գրավելն էր (քանի որ, ըստ պատմիչի, Թորոսը նաեւ նրանց ծածուկ պատվիրել էր «զլուխ չբերել» բերդի գրավումը): Այս հատվածն Ուռհայեցոյ ժամանակագրության վաղարշապատյան 1898 թ. հրատարակությունից վերահրատարակած Հ. Բարթիկյանը խնդրո առարկա բառը նշում է «Քեարմուտ», ապա այն ծանոթագրում. «Քյարմուտները 9-րդ դարում ծագած Իսմայիլիտների աղանդի երկու թեւերից մեկի կողմնակիցներն էին» (Մատթէոս Ուռհայեցի, էջ 456-457, 514): Կարծում ենք, որ Թորոս Բ-ի, առավել եւս՝ Հեթում Ա-ի գործի մեջ, դժվար թէ Իսմայիլիտներ լինէին, մանավանդ, մասնակցէին մահմեդականներից բերդեր գրավելուն: Հավանաբար, երկու դեպքում էլ խոսքը բարձունքներ մագլցելու եւ դժվարամուտ ծերայերը սողոսկելու մեջ հմտացած հայ մարտիկների խմբի մասին է՝ «գոր ինքեանք Քարմուտ ասէին», որոնց էլ, անհրաժեշտության դեպքում, դիմել են հայ զորավարները:

Տարսոնը պաշարած սելջուկյան զորքը գլխավորել են Ռումի սուլթանության ազդեցիկ գործիչ Շամսատին սահիպը (Sa'd al-Din Köpek) եւ Կոստանդին Լամբրոնացին (Կեռան թագուհու պապը):

- 1246 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՄԽԶ (1246) Վախճանեացաւ թագուհի Ալիծն եւ թագաւորեաց Կիպրոսի Հեռի որդի իւր: Եւ պարոն Սմպատ գունդուստապլն Հայոց գնաց ի Կիուկ խանն» (ՄԺ, հ. 2, էջ 67):

«Կիուկ խան» - մոնղոլական մեծ խան Գույուկ (1246-1249):

«Հեռի» - Կիպրոսի թագավոր Հենրի Ա (1218-1253):

- 1247 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՄԽԷ (1247) Սուլտանն Մսրա էառ ի քրիստոնէից զՏապարիա եւ զԱսիսական» (ՄԺ, հ. 2, էջ 67):

Եգիպտոսի սուլթան Սալիխ Նեջմ ադ Դին Էյուբը (1240-1249) 1247-ին գրավել է Տիվերիադա (Տապարի) քաղաքը Գալիլիայում եւ Ասկալոն ամրոցը:

- 1248 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՄԽԸ (1248) Լաւիզ ըռէ տը Ֆրանցն ելեալ յաշխարհէն իւրմէ բազում զաւրաք եկն յայսկոյս ծովու եւ էջ ի կղզին Կիպրոսի յամսեանն սեպտեմպերի Իէ (27) աւրն» (ՄԺ, հ. 2, էջ 67):

Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս Թ-ի (1226-1270) մասին է:

- 1249 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «Եւ եղեւ ի յԱքա շմոր ընդ Ճնուէզքն եւ ընդ Բիզանքն...» (ՄԺ, հ. 2, էջ 67):

«Պիզանք» - նկատի ունի Պիզացիներին, «շմոր» - գժտություն, խառնակություն:

- 1250 Ժամանակագրության մեջ Հեթում Բ թագավորի կատարած հավելումն իր մորական պապի (Կեռան թագուհու հոր) մահվան մասին կրկնված է նրա Սաղմոսարանում. «Ի թվին Հայոց ՉՃՂԹ (1250), ի յունիս ԻԹ (29) սպանին զպարոն Հեթումն, տէրն Լամբրոնին՝ պապն ին» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 705): Այս Հեթումը երբեմն նույնացվել է իր հոր՝ պետության դեմ ապստամբած Կոստանդին Լամբրոնացու հետ (ՄԺ, հ. 1, էջ 66, Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 266-267):

Թեև ստույգ հայտնի չէ, թե Հեթում Լամբրոնացին ինչ հանգամանքներում է սպանվել, բայց նրա եղբոր՝ Օշինի հիշատակարանում այդ մասին ասվում է. «...արեամբ նահատակելոյ ի վերայ ճշմարիտ հաւտիցս Քրիստոսի...» (Հայերէն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 440):

Որ վերոնշյալ հատվածն ընդմիջարկություն է Կոռնիկոսցու ժամանակագրության մեջ, երևում է նաև նրանից, որ բոլոր ժամանակագրական միավորներից առաջ նշված է թվականը՝ միայն թվատառերով, իսկ այստեղ՝ «Ի թուակա. Հայոց ՈՂԹ»:

1250 թ. խաչակիրներին վերաբերող հատվածը՝ Լյուդովիկոս Թ-ի գերվելու, ազատ արձակվելու մասին եւ այլն, շատ մանրամասնորեն ներկայացված է «Պատմութիւն խրոնիկոնին» ժամանակագրության մեջ (ՄԺ, հ. 2, էջ 67-68):

- 1251 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՄԾԱ (1251) Ըոէ տը Ֆրանցն պարսպեց զՍը-
զայրն եւ մեռաւ բրինձն Անտիոքա՝ Պեմունտն, յետ որոյ եկաց բրինձ Անտի-
ոքա եւ գունդ Տրապալստ իւր որդին Պեմունտն» (ՄԺ, հ. 2, էջ 68):

Անտիոքի պրինց Բոհեմունդ Զ (1252-1275):

- 1252 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ « Ըոէ տը Ֆրանցն պարսպեց զՃաֆն...: Եւ
վախճանեցաւ Զապէլ թագուհին Հայոց: Եւ Ճուլիան Սայէտո տէրն ամուս-
նացաւ ընդ Ֆիմի դուստր թագաւորին Հայոց Հեթմո» (ՄԺ, հ. 2, էջ 68-69):

Սայետա - Սիդոն, ծովափնյա քաղաք Պաղեստինում:

- 1253 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «... ի տոյն ամի ըոէ տը Ֆրանցն կրկին պարս-
պեաց զՍայիտէ: Յայսմ ամի վախճանեցաւ Հեռի թագաւորն Կիպրոսի: Եւ
Հեթում թագաւորն Հայոց գնաց առ Մանկո խանն: Ի տոյն ամի ամուսնացաւ
բրինձն Անտիոքա ընդ Սպիլ, դուստր թագաւորին Հայոց Հեթմո» (ՄԺ, հ. 2,
էջ 69):

Մանգու - մոնղոլական մեծ խան (1251-1260):

- 1254 Դեպքերի մանրամասները տե՛ս «Պատմութիւն խրոնիկոնին» ժամանակագ-
րության մեջ: Այնտեղ եւս կրկնվում է «յայտնեցան Աղաճարիքն եւ Իսլամ-
պակն» (ՄԺ, հ. 2, էջ 69) նախադասությունը, որը վերաբերում է վրանաբնակ
մի թուրքմենական ցեղի ու դրա առաջնորդին, եւ որի պարզաբանումը գտ-
նում ենք Սմբատ Սպարապետի մոտ (Սմբատ Սպարապետ, էջ 230):

«Քուռաթ» - Գերմանական կայսր Կոնրադ Դ (1250-1254):

- 1256 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ « ՌՄԾԶ (1256) Հեթում թագաւորն Հայոց եկն ի
Մանկո խանէն եւ արշաւեաց զարաւք եւ զաւառն Հոռոմոց ի Մաւռանտինն
եւ ի յայլն: Եւ ի տոյն ամի ձիաւորեցոյց զանդրանիկ որդին իւր զԼեւոն: Եւ ի
յԱքա սկսաւ շմորն ընդ Ճնուէզքն եւ ընդ Վնիցիանքն» (ՄԺ, հ. 2, էջ 69):

«Մուռնտին» - Մուռանդին, բերդ Փոքր Ասիայում, Հերակլինայի մոտ:

- 1258 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՄԾԸ (1258) Հուլայուն խանն էառ զԱլա-
մուր եւ կոտորեաց զՀաշիշիքն: Եւ ի տոյն ամի էառ Հուլայունն զՊաղտատ:
Եւ վախճանեցաւ թագաւոր եղբայրն Հայոց պարոն Լեւոն մարաջախտն...
Եւ վարուեցան Ճնուէզքն ի յԱքայո եւ փլուցին զիրենց պուրճն եւ գնացին
Ճնուէզքն բանկեցան ի Սուր» (ՄԺ, հ. 2, էջ 70):

Հուլավու - Մոնղոլական Իրանի Իլ-խան (1256-1265), որը գրավել է իրանական Իսմայիլիտների (Հաշիշիք) կենտրոն Ալամուտ բերդը 1256 թ. դեկտեմբերի 15-ին:

- 1259 «Պատմություն խրոնիկոնին»՝ «ՌՄԾԹ» (1259) Թագաւորն Հայոց Հէթում գնաց ի յագնութիւն իր փեսային բրընծին ի Տրապաւլիս, զի ունէր շմոր ընդ իւր իշխանքն եւ ընդ ձիաւորքն, զոր յետոյ եղեւ խաղաղութիւն յիրենց մէջն թագուորին միջնորդութեամբն, եւ թագաւորն դարձաւ յերկիրն իւր: Եւ ձիաւորեցոյց զորդին իւր զԹորոս եւ ձեռնադրեցաւ եպիսկոպոս թագաւոր եղբայրն տէր Յոհաննէս: Եւ զողնալով առին զՄունտաս բերդն յանաւրինաց, զոր եկեալ զաւրքն սուլտանին Հոռոմոց պաշարեաց զՄունտաս եւ նեղէր զնոսա: Եւ թագաւորն Հէթում գնաց անդր Հայոց զաւրաւքն եւ պատերազմեալ խանգրեաց զնոսա եւ կոտորեաց բազումք յանաւրինացն եւ այնպէս վերոյց զՄունտասոյ սղարն» (ՄԺ, հ. 2, էջ 70):

Մունդաս (Մինդոս)՝ Կիլիկիայի սահմանամերձ բերդ, որի համար հայերը պայքարել են Ռումի սուլթանության հետ (Սմբատ Սպարապետ, էջ 234-235, Մ. Յովհաննէսեան, նշվ. աշխ., էջ 110-111):

- 1260 «Պատմություն խրոնիկոնին»՝ «ՌՄԿ» (1260) Հուլայունն էառ պատերազմաւ զՀալպ եւ զԴամասկոս եւ զամէն Շամպն ընդ ձեռամբ արար եւ ինք դարձաւ յարեւելս, վասն զի իւր աղբայրն Մանգու խանն մեռեալ էր եւ յորժամ եհաս խապարն առ Հուլայունն յաւժարութեամբ եւ փութով կամեցաւ երթալ յարեւելս եւ առնուլ զաթոռ եղբարն իւրոյ այլ ոչ ժամանեաց: Եւ ի Շամպին աշխարհքն եթող ի զաւրաց իւրոց ԺՌ (10000) եւ գլխաւորք նոցա զՔիթպաւղա նուինն եւ զՊայտար նուինն, զոր ի յետ աւուրց ինչ Խութուզ սուլտանն Մսրա եկեալ ի Շամպն իւր հեծելովն պատերազմեցաւ ընդ Քիթպուղայն եւ ընդ Պայտարն ի տեղին, որ կոչի Յայն Ճալուտ. եւ յաղթեցաւ Դադարն եւ ի փախուստ դարձեալ ելին ի Շամպուն երկրէն եւ տիրեաց Շամպուն սուլտանն Մսրայ Խութուզն, որ եւ ի սոյն ամի սպանուաւ ի յիւր զաւրացն յորժամ դարձեալ գնայր ի Մսր: Եւ եկաց ի տեղի նորա սուլտան Մսրայ Պորըտին Պէկպարսն, որ կոչէին Պնտուխտար: Յայսմ ամի Ճուլիան Սայիտոյ տէրն ծախեց Դամիլուն զՍայիտէ եւ զՊէաֆաւրթն: Եւ Թուրքմանքն բռնեցին զՍայետոյ տէրն եւ ծախեցին ԻՌ (20 000) կարմիր» (ՄԺ, հ. 2, էջ 70-71):

«Խութուզ» - Եգիպտոսի սուլթան Մուզաֆար Սեյֆ ադ-Դին Կուտուզ (1259-1260):

«Պնտուխտար» - Եգիպտոսի սուլթան Բայբարս Ալ-Բունդուկդարի (1260-1277):

Մոնղոլական ավերումից հետո Սիդոնի (Սայիտե) տերը՝ «Ճուլիան» (Julien de Grenier) քաղաքը եւ Բոֆոր (Պիաֆորթ) բերդը հանձնել է Տաճարականների ասպետական միաբանությանը:

«Դամբլուն» - Տեմպլիե (Templiers), Տաճարականների հոգեւոր-ասպետական միաբանություն: «Պատմություն խրոնիկոնին» գործում բազմիցս օգտա-

գործվում է այս անվանումը, իսկ միաբանության անդամները կոչվում են «Դամփլցիք» (ՄԺ, հ. 2, էջ 67, 77):

Ուճ - Կիլիկիային արեւմուտքից սահմանակից թուրքաբնակ շրջան (տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 35): Այլ աղբյուրներից հայտնի չէ, թե ինչու է Հեթում Ա-ն Ուճ գնացել եւ ով է եղել նրա հետ եղած Ալիճախը:

- 1261 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «Յայսմ ամի Պալիան Արսուֆին տէրն ծախեց զԱրսուֆն Ոյսպեթլուն: Եւ վախճանեցաւ թագուհին Կիպրոսի Բլաժանսն: Եւ եղև պայլ Կիպրոսի Ոյկ տ Լըզինայն: Պալիալաւն էառ Գոստընդինու պալիս ի Ֆռանգնոյն: Հեթում թագաւորն Հայոց փեսայացոյց Գոստանդին, որդի Ճաֆրէ, տէր Սարվանտիքարին, ի դուստր իւր Ըոիթա: Եւ ի սոյն ամի մեռաւ Ճաֆրի, տէր Սարվանտիքարին (ՄԺ, հ. 2, էջ 71):

Արսուֆ - ծովափնյա քաղաք Երուսաղեմի թագավորությունում, Յաֆֆայից 15 կմ հյուսիս:

«Ուսպիթլու» (յոսպեթլու) - Հոսպիտալիե (Ordre des Hospitaliers), Հյուրընկալների (կամ հիվանդախնամների) հոգեւոր-ասպետական միաբանություն: «Պատմութիւն խրոնիկոնին» գործում այս միաբանության անդամները կոչվում են «Ուսպեթլցիք» (ՄԺ, հ. 2, էջ 77):

«Ոյկ տ Լազոնեայն» - Հուզո դը Լուսինյան (մահ. 1267 թ.):

«Պալիալաւ» - Բյուզանդական կայսր Միքայել Ը Պալեոլոգոս (1242-1258):

- 1262 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ « ՌՄԿԲ (1262) Ջառլ եղբայր ըռէ տը Ֆրանցին, որ էր գունդ Անճուին եւ Բրուանսին, պաշարեաց զՄարսեալն եւ էառ զնա: Յայսմ ամի վախճանեցաւ թագաւորահայրն Հայոց Կոստանդին աւագ պարոնն: Հեթում թագաւորն Հայոց գնաց ի Մանիաւն եւ վերոյց զաղարն եւ հացեց զբերդն, եւ ի դառնալն Խարամանն իր Թուրքման հեճելովն եկն յեռաջ թագաւորին եւ պատերազմեցան ընդ միմեանս: Եւ զարքն քրիստոնէից յաղթեցին նոցա եւ կոտորեցին ի Թուրքմանացն բազումք եւ սպանին զեղբայր Խարամանն եւ զԲ (2) փեսայն իւր եւ ընկեցին զԽարամանն ի ձիու եւ դարձեալ հեծաւ ի յայլ ձի եւ փախեաւ» (ՄԺ, հ. 2, էջ 71):

Կոստանդին ավագ պարոն, թագավորահայր (Հեթում Ա-ի հայրը եւ Հեթումյան արքայատոհմի փաստական հաստատողը):

Խարաման - Կարաման իբն-Նուրա Սուֆի, Կարամանյան թուրքմենական հարստության հիմնադիրը (1256-1262):

Մանիոն - Բերդ Իսավրիայում (1290-ականներին պատկանել է Հեթում Կոնիկոսցուն):

Թագաժառանգ Լէւոն Գ (II) -ի ամուսնությունը Լամբրոնի տեր Հեթումի դուստր Կեռանի հետ փաստել է, որ Լամբրոնը միացել է Կիլիկիո թագավորությանը («խառնեցաւ Լանբրուն ընդ թագաւորութիւն»):

- 1263 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «Յայսմ ամի Հեթում թագաւորն Հայոց եւ Ըռուգնատին սուլտանն Հոռմաց եւ Մուղալ արդուչիքն ժողովեցան յԱռակլիայ վասն սինաւոնոյն եւ բերդերոյն բաժնելո: ՌՄԿԴ (1264) Վնիցիանացն ԾԲ (52) դալէ ընդ դարիթ պաշարեցին զՍուր յանկարծակի եւ տէրն Սրոյ՝

սիր Ֆիլիպ տ Մընֆաւրթն, Ճնուէգաւքն, որ անդ կային եւ Աքայոյ աւգնութեամբն պահեց զՍուր ընդդէմ Վնիցիանացն եւ Վնիցիանքն դարձան անտի Քաշնաւք: Եւ յայնմ ամի Ի (20) դալէ Ճնուէգացն բռնեցին զՎնիցիանացն կարվանն, որ կու գային յետեւ իրենց Ծ (50) դալէին: ... Եւ ապա Ջառլն ելեալ ի Հռոմայ գնաց ի Բոյլն եւ պատերազմեցաւ ընդ ըռէ Մանֆրէ: Եւ ըռէ Ջառլն տիրեալ կալաւ զամենայն աշխարհն Բոյլին եւ զկղզին Սիկէլիոյ, որում թագաւորեալ էր» (ՄԺ, հ. 2, էջ 71-72):

«Ռուգնատին» - Ռումի սուլթան Ռուկն ալ-Դին Դլիճ Արսլան Դ (1248-1265): Հայոց թագավորի հետ երկու պետութիւնների սահմանագծերը («սինոռ») ճշտող հանդիպումը կայացել է մոնղոլների պահանջով: Հետաքրքիր է, որ հանդիպմանը մասնակից մոնղոլ պաշտոնյաները կոչվում են «արդուչիք», անվանում, որը գուցե ծագում է մոնղոլական Իրանի կառավարիչ Արդուն-ադայի (1243-1255) անունից (վերջինիս մասին տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 306-307):

Արակլիա /Հերակլեա - Կիլիկիայի սահմանամերձ քաղաք Տավրոսի հյուսիսային ստորոտում:

«Խալէ»/«դալէ» - առագաստավոր թիանավ, որը «գալեր» (ֆր. galère) բառի հնչյունափոխված ձեւն է:

«Դարիթ» - ըստ Վ. Հակոբյանի՝ լատիներեն triremis բառի աղավաղված ձեւն է, որով անվանվում է երեք կարգի թիակներով ռազմանավը (ՄԺ, հ. 1, էջ 96):

Ճառլ/Ջառլ - Կառլ Ա Անժուացի (1266-1282):

«գռէ Մաֆրէ» - Սիցիլիայի թագավոր Մանֆրէդ (1258-1266):

- 1264 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՄԿԵ (1265) Պնտուխտար սուլտանն Մարայ Էառ զԱրսուֆն ի Յոյսպէթլէն եւ առին ծառա առաւել քան զհագարն ի քրիստոնէից: ... Յայսմ ամի Տաւրայայն սղարեց զՊիրն, հրամանաւ Ապաղա խանին» (ՄԺ, հ. 2, էջ 72):

Պնտուխտար (Բայբարս Ալ-Բունդուկդարի) սուլթանն Արսուֆը գրավել է 1265 թ. ապրիլի 26-ին:

Տուրպա - մոնղոլ հագարապետ, որը պաշարել (սղարել) է հյուսիսային Ասորիքում գտնվող Պիր բերդաքաղաքը:

- 1265 Հեթում Կոռիկոսցին այստեղ հայտնում է իր հոր մահվան թվականը, ստույգ ամսաթիվն ու օրը, (դեկտեմբերի 25, ուրբաթ), որի կապակցությամբ Վ. Հակոբյանը նկատում է, որ «իսկապէս 1265 թ. դեկտեմբերի 25-ն ուրբաթ է» (ՄԺ, հ.1, էջ 97): Հեթում Կոռիկոսցին հոր մահվան թվականն ու օրը մուծել է նաեւ «Պատմութիւն խրոնիկոնին» թարգմանական գործում՝ «ՌՄԿԵ (1265)... վախճանեացաւ թագաւորեղբայրն Հայոց պարոն Աւշին, տէրն Կոռիկաւսոյ ԻԵ (25) աւրն ի դեկտեմբրն, ի Նոյէլին գիշերն» (ՄԺ, հ. 2, էջ 73):

Հեթում Բ Հայոց թագավոր՝ 1289-1206 թթ.՝ ընդհատումներով, մահ.՝ 1307 թ.:

- 1266 Արսուֆը (Արսուս) Եգիպտոսի սուլթանը Հիվանդախնամ ասպետներից գրավել է 1265 թ. ապրիլի 25-ին, իսկ Մաֆերը՝ Տաճարականներից՝ 1266 թ. ամռանը: «Պատմութիւն խրոնիկոնին» ժամանակագրությունը առաջինի

մասին նշում է 1265 թվականի, երկրորդի մասին՝ հանգամանորեն՝ 1266 թ. ներքո:

«Պատմութիւն խրոնիկոնին»՝ «Եւ ի սոյն ամի Սմբւմաթն Մարայ զաւրաւքն եկն ի Մառի եւ խանգրեաց զՀայոց զաւրքն, որ անդ կային յամսեանն աւգոստոսի եւ եսպան զթագաւոր որդին Հայոց զպարոն Թորոս եւ բազումք ի զաւրացն Հայոց, եւ կալան զանդրանիկ որդի զպարոն Լեւոն եւ մտին յաշխարհն Հայոց գնացին մինչեւ ի Սիս եւ անտի հասան մինչեւ ի յԱտանա եւ մինչեւ ի սահմանս Բարձրբերդոյ, գերեցին զաշխարհն եւ այրեցին հրով եւ դարձան բազում աւարաւ յաշխարհն իւրեանց:

Յայսմ ամի վախճանեցաւ սիր Ճուան գունդն Ճաֆուն» (ՄԺ, հ. 2, էջ 73):

«Սըմվմաթ» - Իգգեղդին Իդան Սամմալ-Մաուր, մամլուքյան զորավար:

Յաֆֆայի (Ճաֆ) կոմս (գունթ) Ճուանը (Ժան) Իբելիյան տոհմից էր (1247-1266 թթ.):

- 1267 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «...ԻԸ (28) Ճնուէզ դալէով, խլեց զԱքայոյ մինայն եւ այրեց Բ (2) բերդնաւ Բիզանացն եւ այլ մանտր նաւեր, եւ կացին անդ ԺԲ (12) աւր, բայց ի դառնալն ԻԸ (28) Վնիցիան դալէ հանդիպեցան իրենց եւ բռնեցին ի Ճնուէզացն Ե (5) դալէ սարած:

Յայսմ ամի վախճանեցաւ թագաժառանկն Կիպրոսի Ոյկ Էթն եւ թագունեցաւ Ոյկ տը Լըզինայն թագաւոր Կիպրոսի յաւուր Նոյէլին...» (ՄԺ, հ. 2, էջ 73-74):

Կիպրոսի թագավորներ՝ Հուզո Բ Լուսինյան (1253-1267) եւ Հուզո Գ Լուսինյան (1267-1284):

- 1268 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «Պնտուխտար սուլտանն Մարայ էառ զՃաֆն խաբէութեամբ եւ փոյց, եւ զՊէաֆաւրթն էառ սղարով: Եւ դարձեալ էառ զԱնտաք տուրտվութեամբ գունդուստապլին Անտիոքա... Փոյց զԱնտաքոյ պարիսպն եւ զքաղաքն այրեաց հրով... : Յայսմ ամի ձեռնադրեցին կաթողիկոս Հայոց գտէր Յակոբ: Եւ ազատեցաւ ի ծառայութենէն Մարայ պարոն Լեւոն, թագաւորորդին Հայոց, տալով զին նմա գերեդն Դարպասկ...» (ՄԺ, հ. 2, էջ 74): 1268-ին Անտիոքի գրավման մասին տե՛ս նաեւ Հեթում Պատմիչ, էջ 73:

Հայոց կաթողիկոս Հակոբ Ա Կլայեցի (1267-1286):

Լեւոն արքայորդու գերեզարձի մասին տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 292-296:

«Քուռատին» - Կոնրադին (Konradin), Երուսաղեմի տիտղոսակիր թագավոր (1254-1268), որին 1268 թ. Հռոմի մոտակայքում տեղի ունեցած ճակատամարտում հաղթել է Կառլ («Ջառլ») Անժուացին:

- 1269 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՄԿԹ (1269) Փլան ի շարժէ Սարվանտիքարն եւ Համուսն եւ Դեղընքարն եւ այլ վանորայք եւ ամրոցք եւ գեղորայք ի Սեւ լէոն» (ՄԺ, հ. 2, էջ 74):

Սմբատ Սպարապետն այդ երկրաշարժի մասին գրում է. «Ի թուին ԶԺԸ (1269) եղեւ շարժ սաստիկ եւ յախշարհին Կիլիկիա... բազում շէնս յաւեր

դարձոյց եւս առաւել... զանառիկ դղեակն Սարվանդաւ յաւեր դարձոյց... եւ ի Սուրբ Ուխտն Արքակաղնին... եւ զբերդն Դեղնքարն եւ այլ բազում տեղիս...» (Սմբատ Սպարապետ, էջ 251): Նշված բերդերի մասին տե՛ս Մ. Յովհաննէսեան, նշվ. աշխ., էջ 94-95, 276-279:

- 1270 Ժամանակագրության մեջ այս թվականի ներքո նշված են նաեւ 1271 թվականի դեպքերը, ըստ երեւոյթին, նախօրինակի գրիչը վրիպել է թվականը: «Պատմութիւն խրոնիկոնին» ժամանակագրությունը 1270 թվականի տակ բավական մանրամասն նշում է ֆրանսիացիների Թունիս (Դունիզ) գնալու, թագավորի մահվան եւ որդու՝ Ֆիլիպի (Ֆիլիպ Գ՝ 1270-1285) հաջորդելու մասին, ապա հիշատակում Հեթում Ա-ի մահը, թաղումը, որից հետո պատմում է 1271-ի դեպքերի մասին՝ սկսելով Լեւոն Գ-ի թագադրումից: Դրանից հետո նշում է Լեւանտի գործերի մասին. «Պնտուխտար սուլտանն Սարայ էառ յՈսպերլէն գՀուսնա Քրատն եւ ի Դամիլէն գՋասդէլ Պլանգն եւ ի բրընծէն գՃըպլաքարն եւ ի յԱլամնացն գՄունֆարդն եւ բերդ մի ի Հաշիշեցն: Եւ Տաճիկ դալէք ԺԴ (14) կոտորեցան ի Կիպռաւս եւ բռնվեցան ի Տաճկնոյն ծառայք Վ (30 000)... Եւ եկն ի յԱքայ սիր Աւտուարտ, որդի Ընկլիզաց թագաւորին, յոլով ընկերաւք: Յայսմ ամի ընտրեցին պապ Հռոմայ զարժանաւորն Գրիգորիոս, որ եկեալ էր յաղաթվորութիւն հետ Սիր Աւտուարտին եւ կայր ի յԱքայ եւ անտի եկեալ տարան գնա ի Հռոմ ի հայրապետական աթոռն» (ՄԺ, հ. 2, էջ 74-75):

Պնտուխտար (Բայբարս Ալ-Բունդուկդարի) սուլթանի գրաված բերդերն են «Քրատ»՝ Քրաքը (Քրաք դե Շվալիե), Մաֆիտան՝ երկրորդ անունը՝ «Ջաստէլ Պլանկը» (Chastel-Blanc), «Ճպլաքարը», որը հնարավոր է Ջաբալան է (Լաթաքիայի մոտ), կամ սա այլ բերդի անվան հայերեն թարգմանությունն է, եւ Մոնսֆորթը (տե՛ս ծան. 1226 թ.):

«Աւտուարտ» - Անգլիայի թագաժառանգ, ապա թագավոր Էդվարդ Ա (1272-1307):

Գրիգոր Ժ Հռոմի պապ (1271-1276):

- 1272 Ժամանակագրության այս հատվածում եղած բազմաթիվ դեպքերից «Պատմութիւն խրոնիկոնին» գործում նշված է միայն մեկը՝ « Եւ ի ԺԸ (18) արն մայիսոյն Հաշիշի մի քշտեց Սիր Աւտուարտին Ե (5) դանկ զարկք, Աքայոյ բերդին ընդ ներքսէ, եւ յորժամ աջողցաւ դարձաւ յիւր աշխարհն...» (ՄԺ, հ. 2, էջ 76):

Հաջորդ դեպքերի՝ Լեւոն թագավորի դեմ ընդվզած իշխանների՝ Վահրամի («տէրն Համուսին») եւ մյուսների մասին («Լեւոն տէրն Մոլեւանին եւ Ապլխարիպ իշխան երեւելի՝ սոքա ի Յունաց. էր եւ ի Հայոց համախոհ անարեւնութեան սոցա...») մանրամասնորեն պատմվում է Ստեփանոս ցրչի 1273 թ. հիշատակարանում (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 434-435):

«Մոլովոն» - Մոլեւոն բերդը Լամբրոնից հյուսիս (Մ. Յովհաննէսեան, նշվ. աշխ., էջ 120-121):

Մուխնեղդին Փարվանա - Ռումի սուլթանության մեծ վեզիր, մոնղոլների դրածո եւ երկրի փաստացի կառավարիչ (1244-1277):

- 1273 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՄՀԳ (1273) Գրիգոր պապն Հռոմայ արար ժողով ընդհանրական ի Լիոն քաղաք, յառջի արն ի մայիսն: ...Եւ ի սոյն ամի վախճանեցաւ ի Տրապաւլիս Պեմունդ բրինձն Անտիոքա, ի մարտի ԺԱ (11) արն, եւ եկաց բրինձ իր որդին Պեմունտն, որ եղեւ վերջի բրինձ յազգէն իւրում» (ՄԺ, հ. 2, էջ 76):

Անտիոքի տիտղոսակիր պրինց Բռիեմունդ Է (1275-1287):

- 1274 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՄՀԴ (1274) Ի մարտի ԻԶ (26) արն Պնտոլիստար սուլտանն եմուտ անթիւ գաւրաք յաշխարհն Հայոց, խլեց զՄսայ կանդարայն եւ աւերեաց զամէն երկիրն՝ ի Մար(ա)շա մինչեւ ի Կուռիկաւս. էսպան անթիւ քրիստոնէք եւ հրակէզ արար զքաղաքքս եւ զգեաւոյս: ...Եւ ճուլիան Սայիտոյ տէրն վախճանեցաւ ի Տրապաւլիս» (ՄԺ, հ. 2, էջ 76):

Եզիպտական զորքի՝ Մսիսի կամուրջը («կանդարայն» - արաբ. փոխառություն) գրավելը հիշատակում է նաեւ Հեթում Նդիրցին՝ «խլեաց զկանդարայն Մսա» (Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 543):

- 1276 «խեղէփ» - երկվորյակ:

- 1277 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՄՀԵ (1277) Ի յունիս Ը (8) արն եկն ի Յաքայ Զ (6) դալէ ըռէ Զառլին, եւ էր գլխաւոր նոցա գունթ Ըռաւճէլ տը Սայնըսվրինն եւ տիրեցին Աքայոյ եւ վարեցին զԿիպրոսայ թագվորին գործաւորքն եւ կոչեցաւ ըռէ Զառլն թագաւոր Երուսաղէմի» (ՄԺ, հ. 2, էջ 76):

Կառլ Անժուացու զորավար Ռոջեր դե Սան-Սեւրինյոյ Աքքա գալու մասին է:

- 1282 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՄԶԲ (1282) Մանկաւ Տամուր եղբայր Ապաղայ խանին ԼՌ (30000) Մուղղով եւ ԳՌ (3000) Վրացով եւ Հաւումաց Ռ (1000) հեծելով եւ Հայոց ԲՌ (2000) հեծելով մտին յերկիրն Շամբուն եւ աւերեցին զաշխարհն մինչեւ ի դուռն Համասայ եւ անդ պատերազմեցան ընդ Ալֆի սուլտանն Մարայ: Եւ խանգրեցին զսուլտանին զարքն եւ կոտորեցին ի նոցանէ անթիւ եւ շահեցան զսուլտանին խզէնայն եւ զախրուխն: Այլ Մանկաւ Տամուրն վասն վատասրտութեան իւրոյ առանց իրիք պատճառի ի փախուստ դարձաւ, եւ յարժամ տեսին Մուղալ զարքն զդառնալ զգլխաւորին իւրեանց, թողին զպատերազմն եւ գնացին զհետ նորա: Եւ գնացեալ անցին ընդ գետն Եփրատա եւ մտին յաշխարհն իւրեանց: Եւ Սամաղարն ԲՌ (2000) հեծելով եւ Հայոց թագվորն իւր հեծելովն բաժնեցան ի Մանկաւ Տամուրէն եւ եկին դէպ ի Հաւումաք եւ ի Հայոց աշխարհն: Եւ ի ճանապարհին հասեալ նոցա շահանդակ եւ կորեան ի Հայոց զարացն բազում մեծամեծ իշխանք եւ ի հեծելէն առաւել քան զԵ (5) բաժինն: Եւ թագաւորն զերծեալ եմուտ յաշխարհն իւր...» (ՄԺ, հ. 2, էջ 77):

Այս դեպքի մասին Հեթում Կոռիկոսցին պատմում է նաեւ «Ծաղիկ պատմութեանց» երկում, Հայոց զորքի նահանջի մասին մասնավորապէս գրելով. «Իսկ թագաւորն Հայոց յայնմ ճանապարհի հանդերձ զօրօք իւրուք բազում ինչ կրեաց, զի վասն երկայնութեան ճանապարհաց եւ նուազութեան իրաց՝

երիվարքն իսպառ յոգնեցան, զի ոչ կարէին գնալ, եւ այնպէս զատուցեալք յիրեբաց գնալով ընդ անկոխ վայրս ի Սարակինոսաց եղելոյ յայն կողմանս անողորմաբար հարեալ լինէին, ուստի մեծ մասն զօրուն կորեալ եւ գրեթէ իշխանաւորք ամենայն եւ այս ձախողակ գործ Մանգո Դանա (Դամուրի - Կ. Մ.) դիպաւ յամի 1282» (Հեթում պատմիչ, էջ 55-56):

Ապաղա - Մոնղոլական Իրանի Իլ-խան (1265-1282):

«Ալֆի» - Եգիպտոսի սուլթան Ալ-Մանսուր Սեյֆեդդին Կալավուն ալ-Ալֆի-ին (1280-1290):

1283 Ահմատ - Մոնղոլական Իրանի Իլ-խան (1282-1284):

1284 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «Եւ ի սոյն ամի ի մարտ ամիսն մեռաւ թագաւորն Կիպրոսի Ոյկ տը Լըզինայն ի քաղաքն Սուր, եւ տարան զնա հանդերձ որդովն ի Կիպրոս եւ թաղեցաւ յաւազ եկեղեցին ի սուրբ Սոփի... եւ եղեւ թագաւոր Կիպրոսի Ճուանն իր որդին (ՄԺ, հ. 2, էջ 78):

«Ճուան» - Կիպրոսի թագաւոր Հովհան (Ժան) Ա (1284-1285):

Անամուռ ամրոցը (Միջերկրականի կիլիկյան ափին) 1290-ական թվականներին պատկանել է Հեթում Կոռիկոսցուն:

1285 Հեթում Բ-ն իր ստացած Մադոսարանի 1292 թվականից հետո գրված հիշատակարանում մոր մահվան մասին գրում է. «ՉԼԴ (1285) ի յաւգոստոս Թ (9) փոխեցաւ ի Քրիստոս ամենայգովելին հոգով եւ գեղեցիկն մարմնով մայրն իմ թագուհի Կեռան» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 705): Ժամանակագրության մեջ թագուհու մահվան ամսաթիվը սխալ է՝ «յոգոստոսի ԻԹ (29)», այն դեպքում, երբ իր հիշատակարանում Հեթում Բ-ը նշում է օգոստոսի 9-ը, եւ որը հաստատում է նաեւ Սարգիս Սսեցին՝ «Կեռան թագուհին մեռաւ, եւ է օգոստոսի Թ (9)» (ՄԺ, հ. 1, էջ 105):

Որ վերոնշյալ հատվածը ընդմիջարկություն է Կոռիկոսցու ժամանակագրության մեջ, երևում է նաեւ նրանից, որ բոլոր ժամանակագրական միավորներից առաջ թվականը նշված է միայն մեկ անգամ (որին հաջորդում են բոլոր տեղեկությունները), մինչդեռ այստեղ, Կեռանի մահվան մասին նշելուց առաջ գրված է թվականը՝ «ՉԼԴ», իսկ դրանից հետո թվականը կրկնված է՝ «ՉԼԴ սպանաւ Ահմատ խանն...»:

Արդուն - Մոնղոլական Իրանի Իլ-խան (1284-1291):

«Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՄՁԵ (1285) Վախճանեցաւ թագաւորն Կիպրոսի Ճուան տը Լըզինայն եւ եղեւ թագաւոր իր եղբայրն Հեռի տ Լըզինայն: Սուլտանն Մարայ Մէլէք Մնսուրն, որ կոչէր Ալֆի պաշարեաց զՄարդապն եւ էառ զնա ի յՈսպէթլէն» (ՄԺ, հ. 2, էջ 78):

Կիպրոսի թագաւոր Հենրի Բ (1285-1306), Երուսաղեմի տիտղոսակիր թագաւոր (1285-1291):

Մարդապ - Մարկաբ, հզոր ամրոց Սիրիայում (Լաթաքիայում):

1286 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՄՁԶ (1286) Հեռի թագաւորն Կիպրոսի զնաց ի յԱքայ ի ԻԵ (25) ի յունիսն եւ տիրեաց Աքայոյ եւ վարեաց զգործաւորքն ըռէ Զառլին եւ աքայցիք այրին իր աւմաճ եւ անտի զնաց ի Սուր: Եւ թագվեցաւ ի

թագաւորութիւնն Երուսաղէմի...: Եւ վախճանեցաւ Ֆիլիպ ըռէ տը Ֆրանցն, եւ եկաց յետ նորա Ֆիլիպն իր որդին: Վախճանեցաւ թագաւորն Ըռակունաց Փէռն եւ թագաւորեաց որդի նորա Ալֆունսն» (ՄԺ, հ. 2, էջ 78):

Ֆրանսիայի թագաւոր Ֆիլիպ Դ Գեղեցիկ (1285-1314):

«Արակունաց» - Արագոնայի (Բսպանիա) թագաւոր Փեռ (Պիեռ)՝ Պետրոս Գ (1276-1285) եւ Ալֆուն - Ալֆոնս Գ (1285-1291):

- 1287 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՄՁԷ (1287)... Սիկիլիոյ դաւէքն խանգրեցին զըռէ Զառլին դաւէքն եւ բռնեցին զբրինձն զըռէ Զառլին որդին եւ բազում իշխանք, որ ընդ նմա էին: ...Եւ սուլտանն Մարայ Ալֆի Մէլէք Մնսուրն էառ զԼատիկն ի բրընձէն» (ՄԺ, հ. 2, էջ 78):

Լատիկ - Լաոդիկիա (Laodicea), նաւահանգիստ Սիրիայում, Լաթաքայից հյուսիս:

- 1288 Ըստ Վ. Հակոբյանի՝ Լեւոն Գ-ի մահվան տարին եւ ամսաթիվն այս վկայության մեջ հավաստի են (տե՛ս ՄԺ, հ. 2, էջ 169, ծան. 174): «Պատմութիւն խրոնիկոնին» ժամանակագրության մեջ նույն դեպքը, առանց ամսաթվի, նշված է 1289 թ. ներքո՝ «Վախճանեցաւ թագաւորն Հայոց Լեւոն եւ եկաց պարոն Հայոց անդրանիկ որդի նորա Հեթում» (ՄԺ, հ. 2, էջ 78):

- 1289 «Պատմութիւն խրոնիկոնին» գործում Տրիպոլիի գրավումը ներկայացվում է բազմաթիվ մանրամասներով (ՄԺ, հ. 2, էջ 78-79): Այս մասին տե՛ս նաեւ Հեթում Պատմիչ, էջ 74:

Քեյխաթու - Մոնղոլական Իրանի Իլ-խան (1291-1295):

- 1290 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «Յայսմ ամի սատակեցաւ սուլտանն Մարա Մէլէք Մնսուր Ալֆին ԻԲ (22) ի նոյեմբոն եւ եղեւ սուլտան Մարա իր որդին Աշրաֆն» (ՄԺ, հ. 2, էջ 79):

Աշրաֆ - Եգիպտոսի սուլթան Ալ-Աշրաֆ Խալիլ (1290-1294):

- 1291 «Պատմութիւն խրոնիկոնին» ժամանակագրության մեջ հիշյալ թվականի դեպքերը նշվում են ավելի մանրամասն, թվարկվում կորուստները Աքքայում, Տյուրոսում (Սուր) եւ այլուր՝ «...քրիստոնեայք... թողին զՊերութ եւ զՍայիտ եւ զԱնտըռտուզ եւ զԶաստէլ Բլրինն. եւ եղեւ կորուստ ամենայն Սէիլին...» (ՄԺ, հ. 2, էջ 79): Աքքայի գրավման մասին տե՛ս նաեւ Հեթում Պատմիչ, էջ 74:

1291-ին խաչակիրների կորցրած ամրոցների թվում նշված «զԱնտըռտուզ»-ը ծովափնյա ամրոց Ատլիտն է (Atlit), Հայֆայից 14 կմ հարավ:

- 1292 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «Ի սոյն ամի սուլտանն Մարա Աշրաֆն պաշարեաց անթիւ զաւրաւք զհայրապետանիստ դղեակն Հռոռմկլայն, եւ յետ Խ (40) աւուր էառ զնա պատերազմաւ, եւ գերեաց զհայրապետն տէր Ստեփանոս եւ զսրբութիւնսն, որ անդ էին: Եւ տարեալ զնոյն հայրապետն ի Մար եւ եղին ի բանդն Խահրէոյ բերդին, որ եւ անդ վախճանեցաւ եւ թաղեցաւ ի նմին բանդի: Եւ յետ սակաւ աւուրց ետուն եւ զԱլլճիսոյ ծակքն ի սուլտանն: Եւ պարոնն Հայոց Հեթում ետ ի սուլտանն Մարայ զանմարտընչելի դղեակն

Պեհեսնի եւ արար հաշտութիւն, վասն որոյ խաղաղացաւ աշխարհն իւր ժամանակս ինչ» (ՄԺ, հ. 2, էջ 79-80):

«Զծագրն զԱպլճես» կամ «զԱպլճիսոյ ծակքն», հավանաբար լեռնանցքի մասին է:

Պեհեսնի բերդաքաղաքի մասին տե՛ս Մ. Յովհաննէսեան, նշվ. աշխ., էջ 505-506:

Ուշագրավ են հիշյալ թվականին տեղի ունեցած ծոցատիկի վերաբերյալ Ժամանակագրության երեք խմբագրության տեքստերում եղած նրբերանգային տարբերությունները:

1293 «Պատմութիւն խրոնիկոնին»՝ «ՌՄՂԳ (1293) Աշրաֆ սուլտանն Մսրայ սպանաւ յիւր ամիրացն եւ զսպանաւոյ նորա, որ կոչէր Պայտարայ, սպանին ծառայքն սուլտանին եւ կացուցին սուլտան զեղբայր Մելէք Աշրաֆին, որ էր ԺԱ (11) տարոյ եւ կաղ ի մի ոտիցն» (ՄԺ, հ. 2, էջ 80, տե՛ս նաեւ Հեթում Պատմիչ, էջ 74):

Աշրաֆին հաջորդել է նրա մանկահասակ եղբայր Նասրեդդին Մուհամմեդը, բայց 1294-ին գահին տիրել է Ադիլ Զեյն-ադ-Դին Քիթբուդան (1294-1296), (տե՛ս ՄԺ, հ. 1, էջ 99, Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 545):

Կիլիկիայի նավահանգստային քաղաք Այասի մոտ տեղի ունեցած ծովամարտը, որտեղ ճենովացիները հաղթեցին վենետիկցիներին, «Պատմութիւն խրոնիկոնին» ժամանակագրությունը դնում է 1294 թ. ներքո, որը ճիշտ թվագրում է. «Յայսմ ամի Ճնուէզացն ԺԸ (18) դալէ կրուցեան ի յԱյաս ընդ ԼԲ (32) դալէ եւ ընդ դարիտ Վնէցիանացն եւ շահեցան ի նոցանէ ԲԴ (24) ընդ դարիտ եւ ընդ դալէ» (ՄԺ, հ. 2, էջ 80): Սա «Պատմութիւն խրոնիկոնին» գործի վերջին տեղեկությունն է:

Ա եւ Բ խմբագրությունները համեմատելիս երեւում է, որ առաջինի՝ «Դաւ եղել Հեթում թագաւորի յիւ իշխանացն...» հատվածը բնագրի «խալէ» բառով ավարտվող եւ «Էառ»-ով սկսվող նախադասությունների միջեւ կատարված ընդմիջարկություն է: Հավելման մեջ նշված տեղեկությունը հայտնի են միայն այս աղբյուրից:

Հեթում Բ-ի՝ իշխանությունից (պարոնությունից) հրաժարվելու մասին հատվածում Ա3 ձեռագրի գրիչը «պարոնութիւն»-ը սխալմամբ դարձրել է «թագաւորութիւն» (տե՛ս նաեւ ՄԺ, հ. 1, էջ 86), որով իմաստային փոփոխություն է տեղի ունեցել, քանի որ Հեթում Բ-ը Թորոսին էր տվել ոչ թե թագն ու թագավորությունը, այլ միայն երկիրը կառավարելու իրավունքը՝ իշխանությունը կամ պարոնությունը (տե՛ս , Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 344, 346-347):

Հայոց Կաթողիկոս Գրիգոր Է Անավարզեցի (Տուրքերիցանց) (1293-1307):

Բ խմբագրության մեջ հավելում կատարած հեղինակը սխալմամբ Հեթում Ա-ի կրոնավորական անունը՝ Մակար, վերագրել է Հեթում Բ-ին, որի կրոնավորական անունն է Յովհաննէս:

1294 «Պայտու» - Բայդու, Մոնղոլական Իրանի Իլ-խան (1295):

Ղազան - Մոնղոլական Իրանի Իլ-խան (1295-1304):

Ժամանակագրության մեջ 1294 թ. դիմաց նշված դեպքերը (նաեւ՝ Հեթում Բ-ի՝ Իլ-խանի մոտ մեկնելը) տեղի են ունեցել 1295 թ.: Կարելի է ենթադրել, որ Ժամանակագրության ՉԽԳ (1294) թվականի միավորը սխալագրությամբ է, եւ պետք է լիներ ՉԽԴ (1295):

1296 Առաջին եւ երկրորդ նախադասությունները Ժամանակագրության Ա խմբագրության մեջ հավելումներ են, քանի որ բացակայում են Բ եւ Գ խմբագրություններում:

Հեթում Բ-ը հավանաբար Ղազանի մոտ մեկնելիս կրկին «պարոնությունը» հանձնել է Թորոսին, իսկ վերադարձին իրենից դժգոհողների խումբ գտել («դաւ եղեւ նմա»), որոնց պարագլուխը Օշին սենեշալն էր, նշանավոր Սմբատ Սպարապետի որդին: Հայտնի է, որ այս Օշինը հետագայում դարձել է Կիլիկիո գունդստաբլ եւ սպանվել Հեթում Բ-ի, Լեւոն Դ (III)-ի եւ այլոց հետ միասին մոնղոլ Բիլարդուի 1307 թ. Անարգաբայի մոտ կազմակերպած սպանդի ժամանակ (տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 348, 368-369):

Հեթում Բ-ի իշխանությունը Սմբատին հանձնելու եւ վերջինիս 1296-1298 թթ. գահակալության մասին տե՛ս նույն տեղում, էջ 348-354:

«Հուսամատին Լաչին» - Եգիպտոսի սուլթան Հուսամ ադ-Դին Լաչին (1296-1299):

Ղազան խանի դեմ ընդվզած (մրտել/մոտել - ապստամբել, ընդվզել) Ռումի մոնղոլական կառավարիչ «Պալթօի» (Բալատու) մասին վկայություններ ունի Անանուն Սեբաստացին: Նախ նշում է, որ 1296 թ. Խոթլուշահը հաղթեց նրան, ապա՝ արդեն Կիլիկիո գահին բազմած Սմբատը «ըմբռնեաց զՊալթօն եւ զորդին նորա...» եւ ուղարկեց Ղազանին (որից հետո ինքը մեկնեց խանի մոտ): 1297-ի դիմաց էլ նշում է երկու կալանավորների մահապատիժը Թավրիզում (ՄԺ, հ. 2, էջ 150): Հիշյալ դեպքերի մասին այլ մանրամասներով պատմում է Ռաշիդ ադ Դինը, ըստ որի՝ Բալատուին բռնել եւ Թավրիզ են տարել Սուլամիշն ու Արաբը (Рашид ад-Дин, Сборник летописей, т. III, М.-Л., 1946, с. 170-177):

Հիշատակվում է ճենովացիների հաղթանակով եւ վենետիկցիների պարտությամբ ավարտված Կուրցոլայի (Curzola) ծովամարտը (8 սեպտեմբեր, 1298 թ.):

Ժամանակագրության վերջին վկայությունը վերաբերում է Անգլիայի թագավոր Էդվարդ Ա-ի եւ Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ Դ Գեղեցիկի ժամանակ Ֆլանդրիայի համար մղված 1294-1299 թթ. պատերազմի դրվագներից մեկին:

1307 Հեթում Բ-ի եւ Լեւոն Դ (III)-ի՝ մոնղոլ զորավար Բիլարդուի ձեռքով սպանության մասին հայտնում են նաեւ բազմաթիվ այլ աղբյուրներ (տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 368-369):

- 1317 Կիլիկիո թագավոր Օշին (1308-1320):
- 1320 Կիլիկիո թագավոր Լեւոն Ե (IV) (1320-1242):
- 1327 Կաթողիկոս Հայոց Կոստանդին Դ Լամբրոնացի (1323-1326), Կաթողիկոս Հայոց Հակոբ Բ Անավարզեցի (1327-1341):
- 1328 Չոպան (Չոբան), Աբու Սայիդ խանի խնամակալ, որը սպանվեց խանի հրամանով, իսկ որդին՝ Թեմուրտաշը, փախավ Եգիպտոս:
- 1329 Հեթում Կոռիկոսցու երկու որդիների՝ Լեւոն Ե (IV) թագավորի խնամակալ Օշին պայլի եւ Կոստանդին գունդստարլի՝ թագավորի հրամանով կատարված սպանության ու դրա դրդապատճառների մասին տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 400-404:
- 1336 Նղիր - Կիլիկիո ամանոսյան ճկեր գավառի բերդերից, որը պատկանում էր Հայոց ջամբուլա (սենեկապետ) Հեթում Նղիրցուն (բերդի եւ սենեկապետ ու ժամանակագիր բերդակալի մասին մանրամասնորեն տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 527-537):
- 1337 Կովառա բերդը գտնվում է դաշտային Կիլիկիայում, Ջահան գետի ձախ ափին, Համուս բերդաքաղաքը՝ Անարգաբայի մոտ (տե՛ս Մ. Յովհաննէսեան, նշվ. աշխ., էջ 309, 276):
- 1338 Հիշատակությունը սխալ թվականի ներքո է գետեղված, քանի որ շուրջ 21-ամյա գահակալություն ունեցել է Լեւոն Ե-ը (1320-1242):
- 1339, 1341 «Ջոհանէս» Հովհաննէս (Ջեհան) Լուսինյան եւ երբայրը՝ Կիլիկիո թագավոր Գի Լուսինյան (Կոստանդին Գ՝ 1342-1344 թթ.) տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 409-424:
- 1342, 1344, 1345 Գ խմբագրության հավելումների տեղեկությունները՝ Հուստորի եղբայր Վասիլի եւ ում Պարսամի մահվան մասին, նաեւ Ուրելում եղած դեպքերը («Սպանին Լեւոնակն եւ զիր ընկերն ի յՈւրէլն», «Մեռաւ Հեթումն ի յՈւրէլն»), հավանաբար տեղական, գավառական դեպքերի արձանագրում են, որոնց հեղինակը՝ ձեռագրի գրիչ Ստեփանոս քահանան, մատյանը գրել է «ի գեղս, որ Ուրէլ կոչի» (ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 357): Ինչ վերաբերում է 1344-ի երկրաշարժից տուժած բնակավայրերին («փլուց գՊրին կէս բերդին ու Մնպէճ ի վայր գնաց»), ապա դրանք Եփրատի առափնյա բերդավաններ են, առաջինը Հռոմկլայից հարավ գտնվող Պիրն է (Պիրեճիկ), մյուսը՝ հոսանքն ի վար՝ Մնպէճը:
- 1351 Կիլիկիո թագավոր Կոստանդին Դ (III) (1344-1362), որդի Պադոսին մարաշախտի (մահ. 1336 թ.):
- Կիլիկիո թագավոր Լեւոն Ջ (V) Լուսինյան (1374-1375):
- Հիշատակության մեջ նշված է Սսի անկման, Լեւոն Ջ-ի գերության, ապա Մարիուն (Մարիոն) թագուհու մահվան եւ Երուսաղեմում թաղվելու մասին, որը տեղի է ունեցել 1377 թվականին:
- Ձեռագրերում նշված Մարիունը ոչ թե Կիլիկիո վերջին թագավոր Լեւոնի կին Մարգարիտ Սուսսոնն է (նա մահացել է եգիպտական գերության մեջ եւ թաղվել Կահիրեում), այլ Կոստանդին Դ թագավորի կինը, որը նաեւ եր-

կու անգամ, կարճ ժամանակով (1363-1364 եւ 1373-1374 թթ.) իրականացրել է Կիլիկիայի կառավարումը, եղել է ճանաչված եւ սիրված գործիչ (տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 437, 438, 441-456, 461, 475, 554-555): Սսի անկումից հետո Լեւոն Զ-ի եւ կիլիկյան ավագանու հետ նա եւս եգիպտական գերության մատնվեց, իսկ հայ հեղինակները (Հակոբ Սսեցին, Կոռիկոսցու Ժամանակագրությունը լրացնողները, հետագայում նաեւ Մինաս Համթեցին) հենց նրան էին ճանաչում որպէս Հայոց թագուհի (ոչ թե գահի վրա մեկ տարին չբոլորած Մարգարիտ Սուսսոնին), այդ պատճառով էլ թագավորի անունից հետո նրան են հիշատակել: Հատկանշական է, որ նույն դեպքի մասին մի հիշատակարանում երկու գերված թագուհիները զանազանվում են, եւ Մարիունը կոչվում է «մեծ թագուհի» («թագաւոր Հայոց պարոն Լեւոն... վարեցաւ գերի յԵգիպտոս, թագուհին իւրով եւ որդւովք իւրովք, բայց մեծ թագուհին Հայոց Մարիան՝ յԵրուսաղեմ մեծաւ առաքնին ճշմարտութեամբ ամս... եւ հանգեաւ ի Քրիստոս ի թուաբերության Պ/// եւ ի յուլիս ամսոյ ԺԸ/// ... սա թաղեցաւ առաջի դրան Սուրբ Յակոբայ...») (ՄԺ, հ. 1, էջ 101): Հակոբ Սսեցու մոտ ամբողջական է թվականը՝ «... թաղեցին զնա առաջի դրան Սրբոյն Յակոբայ ի ՊԻԶ (1377) թվին, յամսեանն յուլիսի ԺԸ (18)» (այս մասին հանգամանորեն տե՛ս Կ. Մաթեւոսյան, Հէթում Կոռիկոսցու ժամանակագրությունը... էջ 137-140: Հակոբ Սսեցու անտիպ ժամանակագրությունից սույն տեղեկությունը (Վենետիկ, ձեռ. թիվ 1318, թերթ 121բ) մեզ է տրամադրել Գեւորգ Տեր-Վարդանյանը, որին շնորհակալություն ենք հայտնում - Կ. Ս.):

ՀԵԹՈՒՄ ԿՈՌԻԿՈՍՑՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՍԱՄՎԵԼ ԱՆԵՑՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հեթում Կոռիկոսցու դպիր Վասլի ընդօրինակած Մատենադարանի թիվ 1898 ձեռագիրը սկսվում է Սամվել Անեցու Ժամանակագրությամբ (թերթ 6ա-96բ, հաջորդող 97ա-122բ թերթերը չեն գրված), որի առաջին մասը՝ Աղամից մինչև Քրիստոս, ամբողջական է¹, սակայն աղյուսակավոր երկրորդ մասը (32ա թերթից)՝ Քրիստոսի ծնունդից մինչև 1294 թ., ամբողջովին խմբագրված է, ընդ որում կատարված փոփոխություններն այնքան հիմնավոր են, որ կարելի է ասել, հեղինակը Սամվել Անեցու Ժամանակագրությունից վերցրել է միայն արտաքին ձևը, իսկ մնացածը կառուցել է իր հայեցողությամբ: Կատարված հիմնական փոփոխություններից մեկն այն է, որ էջերի կենտրոնում գտնվող Ժամանակագրական ուղղահայաց թվաշարքի սյունակների թիվն ավելացված է մեկով, որը հատկացված է Հռոմի պապերին², մյուսը՝ որ Ժամանակագրության Հայոց մեծ թվականի առաջին տարին դրված է Փրկչական ՇՕԲ (552) թվականի դիմաց (59բ), ի տարբերություն Սամվել Անեցու բնագրի, ուր 554 թվականի դիմաց է: Բանն այն է, որ Սամվել Անեցու եւ մի քանի այլ հայ հեղինակների մոտ Փրկչական (այսպես կոչված՝ «հայկական քրիստոնեական») թվականը 2 տարով ավելի է եւ Հայոց մեծ թվականի հետ տարբերությունը ոչ թե 551, այլ 553 տարի է³: Այսինքն, այս ձեռագրում Փրկչական եւ Հայոց թվականները ներդաշնակեցված են, եւ հավելյալ 2 տարին գեղջված է: Մյուս նորությունն այս ձեռագրում այն է, որ սկզբի մի քանի էջերից հետո, Սամվել Անեցու Ժամանակագ-

1. Որոշ էջերի տողատակերում գրիչը փոքր հավելումներ ունի: Դրանցից հետաքրքրական է մեկը, որտեղ ասվում է, թե աստվածաշնչյան Եսավից են ծագում ֆրանկները՝ «յԵսավա են Ֆրանգք» (13բ):

2. Սյունակներից առաջինը՝ «Ի Քրիստոսէ», Փրկչական թվականն է, որից հետո ավելացվել է երկրորդը՝ «Պապ ի Հռոմ», որը չկա Ս. Անեցու Ժամանակագրության մեջ, հաջորդ սյունակներն են՝ «կայսր Հռոմայ», «կայսրոհիկոս Հայոց», «թագաւոր Հայոց», «ի թուականութեան Հայոց» (Հայոց մեծ թվականը): Իսկ կոնկրետ անձանց անունները եւ տարիները այս ձեռագրում, ի տարբերություն Սամվել Անեցու երկի, գրվել են ոչ թե թվաշարքերի սյունակների վերելում, այլ էջի աջ եւ ձախ մասերի՝ պատմական վկայությունների համար նախատեսված լայն սյունակներում:

3. Լ. Խաչիկյանը եւ Վ. Հակոբյանը նշում են. «Սամուել Անեցին հետեւել է այն տոմարագետներին, որոնք Քրիստոսի ծննդյան տարեթիվը դրել են այժմ գործող թվականից 2 տարի առաջ, ուստի Սամուելի... Ժամանակագրության մեջ, ամենուրեք, քրիստոնեական եւ հայկական թվականների տարբերությունը ոչ թե 551, այլ 553 տարի է» (Լ. Խաչիկյան, Վ. Հակոբյան, Ինչպես չպետք է հրատարակվեն պատմական սկզբնաղբյուրները, ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, 1949, թիվ 2, էջ 82, տե՛ս նաեւ Բ. Թումանյան, Տոմարի պատմություն, Երևան, 1972, էջ 132):

րությունից խիստ սակավաթիվ տեղեկություններ են պահպանված, դրա փոխարեն ավելացված են Կիլիկիային եւ խաչակիրների պետություններին վերաբերող Հեթում Կոռիկոսցու երկերից քաղված բազմաթիվ տեղեկություններ:


Այդ փոփոխությունները կարող էր կատարել կամ անձամբ Հեթում Կոռիկոսցին կամ դրանք արվել են նրա հանձնարարությամբ՝ Վասլի ձեռամբ: Երկու դեպքում էլ հեղինակի ինքնությունը չի փոխվում, քանի որ Սամվել Անեցու երկի մեջ մուծված ժամանակագրական միավորները, չնչին բացառություններով, նույնությամբ կամ կրճատումներով, քաղված են հիմնականում Հեթում Կոռիկոսցու «Պատմութիւն խրոնիկոնին» եւ մասամբ՝ «Համառոտ պատմութիւն ժամանակաց հաւաքեալ ի զանազան պատմութեանց» ժամանակագրություններից: Մի շարք հանգամանքներ խոսում են այն մասին, որ այս մատյանի պատվիրատուն հենց Հեթում Կոռիկոսցին է եղել եւ Վասլին հանձնարարել է ժողովածուի մեջ ընդօրինակել իր հեղինակած եւ իրեն անհրաժեշտ նյութերը:

Վերելում արդեն նշել ենք, որ այս մատյանում Սամվել Անեցու ժամանակագրությանը հաջորդում են Հեթում Կոռիկոսցու երկերը՝ նախ «Պատմութիւն խրոնիկոնին...» ժամանակագրությունը (123ա-167բ), ապա՝ ազգաբանական երկերը (168ա-175բ): Դրանից հետո գետեղված է այլ հեղինակի՝ Միքայել Ասորու Ժամանակագրությունը (176ա-217բ), որը սակայն, սկսվում է ոչ թե Ադամից (ինչպես Միքայել Ասորու բուն երկում է), այլ բավական ուշ շրջանից՝ Մուհամմեդի հայտնվելուց՝ «Երեւեցաւ Մահմէտ որդի Աբդլայի...» (176ա)⁴: Այս հանգամանքը նույնպես ցույց է տալիս, որ ժողովածուն կազմվել է նախապես մշակված ծրագրով: Քանի որ ձեռագրի սկզբում գետեղված Սամվել Անեցու ժամանակագրությունը սկսվում է Ադամից եւ տալիս է հնագույն պատմության անհրաժեշտ տվյալները, ժողովածուն կազմողը Միքայել Ասորու ժամանակագրությունից դուրս է թողել սկզբի մասը՝ կրկնությունից խուսափելով: Ուշագրավ է նաեւ, որ ձեռագրում՝ Հեթում Կոռիկոսցու նյութերի լուսանցքներում (151բ, 155ա, 155բ, 174բ), բուն գրչի ձեռքով ժամանակագրական բնույթի կամ այլ մանրատառ հավելումներ են արված, որոնք հավանաբար կատարվել են ժողովածուն կազմողի ցուցումով:

Ձեռագրի մյուս նյութերի մի մասը պատմաաշխարհագրական եւ տեղեկատվական բնույթ ունեն եւ միանգամայն համապատասխանում են Հեթում Կոռիկոսցու նախասիրություններին: Դրանցից մի քանիսը՝ «Այս են քաղաք[ք] եւ շինաւոք նոցին» (221բ-222ա), «Չորս գետք են եւ Փիսոն ի Հնդկաց...» (222ա-222բ), «Գետք եւ գնացք նոցա մեծ եւ անուանիք ԽԲ (42)...», «Անուն քաղաքացն Հնդկացն եւ Պարսիցն» (224ա-226ա) եւ այլն, գերմաներեն թարգմանությամբ առաջին անգամ հրատարակվել են հենց այս ձեռագրից⁵:

4. Հմմտ. Տեառն Միխայելի պատրիարքի Ասորւոց Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1870, էջ 312: Սա Միքայել Ասորու Ժամանակագրության առաջին թարգմանությունն է, որը զգալիորեն տարբերվում է երկրորդից (տե՛ս Փ. Անթապյան, Վարդան Արեւելցի, գիրք Ա., Երևան, 1987, էջ 325-351):

5. Այս մասին տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. Ա, Երևան, 1959, էջ 1019, 1021-1023, 1091, 1095:



«Պատմութիւն խրոնիկոնին...»:

Գրչի լրացումները ստորին լուսանցքում (Մատենադարան, ձեռ. 1898, ք. 155բ.):

Կարող է հարց առաջանալ, թե ինչն է դրդել ժամանակագրություն թարգմանած եւ սեփական ժամանակագրությունը կազմած Հեթում Կոռնիկոսցուն լրացնելու եւ շարունակելու նաեւ Սամվել Անեցու ժամանակագրությունը: Բանն այն է, որ Սամվել Անեցու համառոտ ժամանակագրությունը Քրիստոսից մինչեւ իր ապրած ժամանակը (1163 թ.) կազմված է աղյուսակային սկզբունքով: Այստեղ որեւէ

տեղեկություն-փաստ կարելի է տեսնել ոչ միայն որոշակի թվականի դիմաց, այլև իմանալ թե դա, օրինակ, բյուզանդական ո՞ր կայսեր, արաբական ո՞ր ամիրապետի, Հայոց ո՞ր թագավորի եւ կաթողիկոսի որերորդ տարվա մեջ է եղել: Այսինքն՝ պատմական ժամանակն արտահայտվում է ոչ միայն թվականների շարքով, այլև տարբեր հարթություններում, տվյալ ժամանակի քաղաքական եւ հոգեւոր իշխանության գլուխ հանդիսացող անձանց տարիների խորքի վրա եւ դառնում է ավելի առարկայական, ակնառու: Մեր կարծիքով հենց այս հանգամանքն է պատճառը, որ ժամանակագրություններով հետաքրքրված Հեթում Կոռիկոսցին իր հավաքած ժամանակագրական նյութը փորձել է տեղաբաշխել նաեւ Սամվել Անեցու ժամանակագրական աղյուսակային համակարգի մեջ: Դրա համար է նա կատարել Փրկչական եւ Հայոց թվականների ներդաշնակեցումը եւ ժամանակագրական թվաշարքի սյունակների թվում ավելացրել Հռոմի պապերի սյունակը, որոնց գահակալության տարիները ժամանակագրական առանցք են հանդիսանում նրա թարգմանած «Պատմութիւն խրոնիկոնին...» ժամանակագրության համար:

Սամվել Անեցու՝ 1163 թվականով ավարտվող ժամանակագրությունը շարունակելով (հասնելով 1294 թ.)՝ կազմողը նաեւ ավելացրել է Հռոմեական սրբազան կայսրության գահակալների, Կիլիկիայի Հայոց իշխանների ու թագավորների, Անտիոքի իշխանների, Երուսաղեմի եւ Կիպրոսի թագավորների անուններն ու թվերը, նշել ժամանակի որոշ կարեւոր ռազմաքաղաքական իրադարձություններ՝ արդյունքում ստանալով ժամանակագրական իրեն անհրաժեշտ համապատկերը: Նկատենք նաեւ, որ Սամվել Անեցու ժամանակագրության լրացումներում առավել հաճախ օգտագործվել են այն տեղեկությունները, որոնք, ծագելով «Պատմութիւն խրոնիկոնին...» ժամանակագրությունից, տեղ չեն գտել նույն աղբյուրից սնված «Համառոտ պատմութիւն ժամանակաց...» ժամանակագրության մեջ:

Հրապարակվող բնագրի վերաբերյալ նշենք, որ Սամվել Անեցու ժամանակագրության հատվածում եղել են բազմաթիվ պակասող թերթեր, որոնք նոր մագաղաթային եւ թղթային թերթերով լրացրել են ձեռագրի 1747 թ. նորոգման ժամանակ⁶: Փաստորեն, ժամանակագրությունից դուրս են մնացել այն տեղեկությունները, որոնք եղել են սկզբնական մատյանի կորած թերթերի վրա՝ ներառելով հետևյալ թվականները՝ 21-140 թթ. (թերթ՝ 33-38), 161-320 թթ. (թերթ՝ 40-47), 381-420 թթ. (թերթ՝ 51-52), 521-600 թթ. (թերթ՝ 58-61), 681-760 թթ. (թերթ՝ 66-69), 781-820 թթ. (թերթ՝ 71-72), 861-920 թթ. (թերթ՝ 75-77), 1021-1060 թթ. (թերթ՝ 83-84), 1161-1180 թթ. (թերթ՝ 90)⁷:

6. Ձեռագիրը ստացել է Հակոբ Եպիսկոպոս Շամախեցին եւ նորոգել տվել. «Վերստին նորոգեալ կազմեցաւ գիրքս եւ գրեցաւ յիշատակարանս ի ՌՃՂ եւ Ջ (1747)» (թ. 280բ):

7. Այս մատյանը կամ նրանից կատարված մի ընդօրինակություն, նախօրինակ է ծառայել Մատենադարանի թիվ 2965 ձեռագրի համար: Այն 17-րդ դ. ձեռագիր է, որի անանուն գրիչը Հայոց թվականի ընդունման հատվածում ծանոթագրել է. «Յայլ օրինակս զՀայոց թուականն ի Քրիստոսի ՇՕԱ (551) ամեն էր սկսեալ» (թ. 86բ): Դա հենց թիվ 1898 ձեռագրի (Հեթում Կոռիկոսցու) սկզբունքն է, ուր Փրկչական եւ Հայոց թվականները ունեն 551 տարվա տարբերություն եւ ոչ 553-ի: Մենք փորձել ենք այդ ձեռագրի 1021-1060 եւ 1161-1180 թթ. հատվածներում եղած նյութերի շարքում գտնել թիվ 1898 ձեռագրից ծագող տեղեկությունները: Հավանաբար այդպիսիք են 1029, 1163, 1169 թթ. դիմաց նշված միավորները, որոնք մուծել ենք բնագրի մեջ:

Մի շարք տեղերում (1078, 1204, 1250, 1268 թվականների դիմաց) արվել են հավելումներ այլ ձեռքով, բայց դրանք հավանաբար հեռու չեն գրչության ժամանակից (ծանոթագրություններում հեղինակին պայմանականորեն անվանում ենք առաջին խմբագրող): Ժամանակագրության բնագիրը որոշ տեղերում միջամտության է ենթարկվել նաև 19-րդ դարում⁸:

Այս ձեռագիրը թեև Մամվել Անեցու Ժամանակագրության 1893 թ. վաղարշապատյան հրատարակությունը պատրաստած Արշակ Տեր-Միքելյանի ձեռքին է եղել (13 մատյանների թվում համարել է Ա. օրինակ)⁹, սակայն նա այստեղ եղած տարընթերցումներն ու հավելումները տողատակերում ընդհանրապես չի նշել: Դրանցից Կիլիկիայի պատմությանը վերաբերող հատվածների մի խումբ քաղվածաբար հրատարակել է Լ. Տեր-Պետրոսյանը (25 միավոր՝ 1074-1289 թթ. ժամանակահատվածից)¹⁰, իսկ մի մասը՝ տողերիս հեղինակը (33 միավոր 1063-1268 թթ. ժամանակահատվածից)¹¹: Ստորև ներկայացվում են այդ եւ մի շարք անտիպ միավորները՝ որպես մանր ժամանակագրությունների կարգին պատկանող առանձին բնագիր¹²:

8. Մատյանի սկզբում, տարբեր էջերում եւ վերջում մի շարք ընդմիջարկություններ եւ անհարկի գրառումներ է կատարել Մեսրոպ արքեպս. Սմբատյանը (1833-1911): Մամվել Անեցու շարունակված Ժամանակագրության ամենավերջում՝ 1300 թվականի դիմաց նա ավելացրել է. «Գրիգոր Է Անաուարեցի կաթողիկոս» եւ «Հեթում Բ թագաւոր Հայոց վերստին» (96բ): Մատյանի վերջում նույն գրով հիշատակարան է թողել. «Ով ընթերցողը յիշեք... զմիաբան Սրբոյ Էջմիածնի ի 1850 ամէ, զՄեսրովբ եպիսկոպոս Սմբատեանց Նախիջեւանցի, որ յաւուրս երից կաթողիկոսացն՝ Ե (5-րդ) Ներսիսի, Ա (1-ին) Մատթեոսի եւ Դ (4-րդ) Գեորգայ» (280բ): Քանի որ Մ. Սմբատյանը վերջինը նշում է Գեւորգ Դ Կոստանդնուպոլսեցուն (1866-1882), հետեւաբար իր միջամտությունները արել է մինչեւ նրա մահը: Նրա մի քանի ընդմիջարկության մասին նշում ենք հրատարակվող բնագրի ծանոթագրություններում:

9. Մամուլի քահանայի Անեցու Հաւաքմունք ի գրոց պատմագրաց՝ յաղագս գիտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելումներով եւ ծանօթութիւններով Արշակ Տեր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893, էջ Է (այսուհետեւ՝ Անեցի):

10. Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Ա, հավելված 2 (Մամուլէ Անեցու մի նորահայտ շարունակողի ժամանակագրական ցանկը), էջ 483-484:

11. Կ. Մաթեւոսյան, Մամվել Անեցու Ժամանակագրության ձեռագրերը եւ նորահայտ լրացումները, Երեւան, 2009, էջ 114-120:

12. Քանի որ այս բնագրում բազմաթիվ անձնանուններ եւ տեղանուններ կրկնվում են վերը ներկայացված «Համառոտ պատմութիւն ժամանակաց հաւաքեալ ի զանազան պատմութեանց» ժամանակագրության մեջ, ծանոթագրություններում դրանք չենք կրկնում: Անհրաժեշտ տվյալը կարելի է հեշտությամբ գտնել անվանացանկերի միջոցով կամ նախորդ ժամանակագրության նույն թվականի ծանոթագրության մեջ: Ներկա Ժամանակագրության սկզբից նշված Հռոմի պապերի ցանկը հրատարակվող բնագրում չենք ներառել, որովհետեւ այն ամբողջովին քաղված է արդեն հրատարակված «Պատմութիւն խրոնիկոնին» գործից եւ այս մատյանի՝ հատկապես սկզբնամասի բազմաթիվ թերթերի բացակայության պատճառով շատ թերի է:

Փոկչական թվ.	Հայրոց թվ.	
Ա 1		Յայսմ ամի եղեւ ծնունդն Յիսուսի Քրիստոսի Աստուծոյն մերոյ եւ մոգուցն գալն յերկրպագութիւն եւ ընծայիլն ի տաճարն եւ գնալն յեգիպտոս ¹ :
Գ 3		Դերովդէս Կմանգունսն Բեթղեմի կոտորեաց, որ էր թիւ նոցա հարիւր եւ քառասուն եւ չորս հապարհ ² :
Դ 4		Յոհաննէս ասետարանիչն ծնանի ի ծնողաց իւրոց ³ :
Ը 8		Ընգեցաւ յիշխանութենէն Երուսաղէմի վասն խստութեան բարոց իւրոյ Արքեպայոս ⁴ :
ԺԲ 12		Եկաց Յիսուս Քրիստոս յերուսաղէմ եւ անմեղեքեան վարձանային ընդ իմաստութեան նորա, զի անմեղեքուն տայր պատասխանի ⁵ :
ԼԿ 460		Բ (2-րդ) ժողովն Եփեսոսի վասն Ֆլավիանոսի եւ Եսոիքի ⁶
ՌԽ 621	Հ	Յայսմ ամի յայտնեցաւ Մահնէտ առաջնորդն Տաճկաց, ուստի եւ սկսանի թուականն Տաճկաց ⁷ :
ՈԼԱ 1029	ԼՀէ	Եղեւ պատերազմ մօտ ի Սուրբ Պետրոս, զոր Ջառլն արար ⁸ :
ՌԿԳ 1063	ՇԺԲ	Վախճանեցաւ Տաղրիւլ սուլտանն Խորասանա եւ տիրեաց Ալիապլան ⁹ :
ՌԿԴ 1064	ՇԺԳ	Ալիապլանն ետա զԱմի:
ՌԿԵ 1065	ՇԺԴ	Ալիապլանն առաքեաց Վուլիման ¹⁰ քուերորդին իւր յաշխարհն Հոռոմոց եւ Հայոց ընդ դէմ Յունաց: Յայսմ ամի Գագիկ դարձեալ ի Կոստանդնուպոլսէ եսպան զմետրապալիտն Կիսարոյ:
ՌԿԵ 1067	ՇԺԵ	Կաթողիկոս եկաց Հայոց Տէր Գրիգորիս Վահրամն, որ կոչեցաւ Վկայաւեր, ամս ժՁ (16) ¹¹ :
ՌՀ 1070	ՇԺԸ	ԴեասԺեմն ¹² եկն յարեւելս եւ ետա զՄանծկերտ ի թուրքաց եւ Ալիապլանն պատերազմեալ յաղթեաց մմա եւ կալաւ Կմա եւ դարձեալ ապատեաց ուխտադրութեամբ ¹³ : Ոմանք վկտորիկն ԴիասԺեմնի ի թու. Հայոց ՇԺԸ (1069) են գրեալ ¹⁴ : եւ ի ՇԺԹ (1070) Գողճախմատն ¹⁵ ատերեաց ՎԱԵ Եւան ¹⁶ եւ կոտորեաց Կմա Գրիգոր Պիլիտն ¹⁷ ի դաշտն Հարունոյն ի մամխեմուտն ¹⁸ :

1. Սամվէլ Ամեցու մոտ 1 թվականի դիմաց գրված է. «Յիսուս Քրիստոս ի Բեթղէմ ծնանի» (Ամեցի, էջ 52), իսկ Դեթում Կողիկոս-ցու թարգմանած «Պատմութիւն խորնիկոնի» ժամանակագրութեան 1 թվականի դիմաց կարդում ենք. «Յառաջին ամի ծնընդեանն Քրիստոսի եղեւ գալ մոգուցն յերկրպագութիւն, եւ ընծայիլն Տեառն ի տաճարն, եւ գնալն յեգիպտոս» (ՄԺ, հ. 2, էջ 37):

2. «Պատմութիւն խորնիկոնի» «Դերովդէս Կմանկունն կոտորեաց, որ էր թիւ նոցա ճևհր (144) հապարս» (Մ1898, 123ա): Այս եւ հաջորդ չորս վկայությունները դուրս են թողնված «Պատմութիւն խորնիկոնի» գործի «Մանր ժամանակագրություններում» կատարված հրատարակությունից, դրա համար հղումը տրվում է ըստ Մատենադարանի թիվ 1898 ձեռագրի:

3. Բառացիորեն կրկնվում է «Պատմութիւն խորնիկոնի» գործում (Մատենադարան, ձեռ. թիվ 1898, 123ա):

4. «Պատմութիւն խորնիկոնի» «Արքեպայոս ընկեցաւ յիշխանութենէն Երուսաղէմի վասն խստասրտութեան իւրոյ» (Մատենադարան, ձեռ. թիվ 1898, 123ա):

5. «Պատմութիւն խորնիկոնի» գործից քաղված է բառացի (Մատենադարան, ձեռ. թիվ 1898, 123ա):

6. Տեղեկությունը Սամվէլ Ամեցու մոտ ԼԿԲ (462) թվականի դիմաց հետեւեալ կերպ է. «Դարձեալ վասն Փղաբախմոսի Բ (2-րդ) ժողովն յեփեսոս» (Ամեցի, էջ 70): Եփեսոսի Բ ժողովը տեղի է ունեցել 449 թ. օգոստոսի 8-ին:

7. Մուհամմեդը (մոտ 570-632) հալածանքների պատճառով իր հետևորդների հետ փախել է Մեքքայից եւ 622 թ. սեպտեմբերի 21-ին հասել Մեդինա: Այդ իրադարձությունը կոչվել է «Հիջրա», որը հետագայում մահմեդականները համարելով դարակազմի իրադարձություն, իրենց տարեգրվույթը սկսել են հաշվել 622 թ. սեպտեմբերի 22-ից:

8. Քաղված է Մատենադարանի թիվ 2965 ձեռագրից, ծագումն է Դեթում Կողիկոսցու «Պատմութիւն խորնիկոնի» գործից՝ «ՌԼԱ (1031) եղեւ պատերազմ մատ ի Սուրբ Պետրոս, զոր Ջառլն արար» (ՄԺ, հ.2, էջ 55):

9. Տոդրիկ, սելջուկյան սուլթան (1055-1063), Ալի Արսլան (Ալիապլան) սելջուկյան սուլթան (1063-1072):

10. Սուլեյման Ա, հետագայում Ռումի (Իկոնիայի) սելջուկյան սուլթան (1077-1086):

11. Հայոց կաթողիկոս Գրիգոր Բ Վկայաւեր (1066-1105): Սամվէլ Ամեցու բուն ժամանակագրության մեջ այս կաթողիկոսի գահակալությունը հիշված է 1065-ից, տարիների քանակը՝ 20 (ոչ աշխարհական Վահրամ անունը, ոչ էլ «Վկայաւեր» մականունը

չեն նշվում), բայց արդեն 1082 թ. դիմաց՝ 17 տարի անց, նշված է Վկայաւերի թրոջ որդի Բարսեղ Ա Ամեցու աթոռակալությունը: Մուտավորապէս նույնախի հաշվարկ է արված թիվ 1898 մատյանում (1067+16=1083):

12. Բյուզանդական կայսր Ռոմանոս Դ Դիոգենեսը (1067-1071):

13. Մատենադարանի թիվ 2965 ձեռագրում ժամանակագրական տվյալ միավորը ավարտվում է՝ «ուխտադրութեամբ հարկին» բառերով (104ա):

14. Ճակատամարտի համար 1069 թվականն է հայտնում Ամանուն եղեսացին (Ամանուն եղեսացի, ժամանակագրություն, թարգմանությունը բնագրից, առաջաքան եւ ծանոթագրություններ Լ. Տեր-Պետրոսյանի, Երեւան, 1982, էջ 29-30):

15. Ձեռագրում գրված է «գողճախմատն»: Կարծում ենք, օտարա-հունց անվան արվալվալած ձեւ է: Հմարավոր է նաեւ, որ մի անուն է, որի սկզբում նշված է «Գող» մականունը, ինչպէս որ այս նույն շրջանում հիշվում է հայ իշխան Գող Վասիլը: Իսկ շարունակությունը կարող է լինել Սիմոն անվանը մոտ հնչյունափոխված մի անուն:

16. Սեւ Ետը կամ Սմանունը (նույնաշրջան Կիլիկիայի արեւելքում է, ուր այդ ժամանակ կային հայկական վանքեր եւ հայ բնակչութ-յուն):

17. 11-րդ դարի քաղկեդոնականություն ընդունած Շիրակացի հայ իշխան, որի անունը հայ պատմիչները չեն տալիս, այլ նշում են միայն նրա պաշտոնից ծագող մականունը՝ «Պիլիտ», «Եպիլիտ» (Մատթեոս Ուռուպեցի) «Բելիտ» (Վարդան Արեւելցի): Փաստորեն, ներկա բնագրում առաջին անգամ հանդիպում ենք իշխանի ամբողջական անվանն ու մականվանը՝ Գրիգոր Պիլիտ: Մ. Չամչյանն այս իշխանին նույնապիղծ է Անտիոքի դուքս Խաչատուրի հետ, մի տեսակետ, որը բավականին տարածվել է (Մ. Չամչյանը, Հայոց Պատմություն, հ. Բ, Երեւան, 1984, էջ 872, տե՛ս նաեւ Է. Ամարյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Երեւան, 1944, էջ 468, Ե. Քատունի, ժԱ դարու Անտիոքի հայ կառավարիչներ Պիլիտ-Խաչատուր եւ Վասակ Պաիվալունի, «Հայկական հայագիտական հան-դէս», 1971, հ. Բ, էջ 123-133): Գրիգոր Պիլիտի եւ Անտիոքի դուքս Խաչատուրի կենսագրություններն այնքան ընդհանրություններ ունեն, որ դժվար է նրանց տարբեր մարդիկ համարել: Հավանա-կան է, որ Շիրակացի իշխանը Խաչատուր անունը ստացել է քաղ-կեդոնական դառնալու՝ կրկնանկրտության ժամանակ (հարցի հանգամանակից բնությունը տես՝ Կ. Մաթեոսյան, Գրիգոր Պիլիտ Շիրակացի, «Եղբայրներ», 2009, ժ. էջ 95-105, նույնի. Անի-Շիրակի պատմության էջեր, Երեւան, 2010, էջ 150-168):

18. Հարունի, Հարունի բերդավանդ գտնվում է Սարվանդիքարից

ՌՅԱ 1071	ՇԻ	Եղեւ սով սաստիկ եւ Կումիշտիկին ¹⁹ եկն յՈւռհա եւ կտորեաց փոռոմոց վարսն:
ՌՅԲ 1072	ՇԻԱ	ՎՊիխտն յԱնդրիունն խեղդեցին ծառայք իւր ²⁰ :
ՌՅԳ 1073	ՇԻԲ	Մեռաւ Ալիախանն եւ եկաց սուլտան խորասանա որդի նորա Մելքշահն, այր քաղցր եւ իմաստուն:
ՌՅԴ 1074	ՇԻԳ	Թագաւորն Յայոց Գագիկ սպանաւ ի Կենդռասկալի՝ յորդոցն Մանտալէի:
ՌՅԵ 1077	ՇԻԶ	Մեռաւ Ապլարիալ ²¹ իշխանաց իշխանն՝ Յասանայ որդին, եւ թաղեցաւ ի Պապեռանն:
ՌՅԸ 1078	ՇԻԷ	Կալաւ փիշխանութիւն Յայոց Ռոբէն Մեծն՝ ազգական թագաւորին Յայոց Գագկայ, կացեալ ամս ²² :
ՌԶԲ 1083	ՇԼԲ	Թագաւորեաց Յունաց Ալէքսն ամս ԼԸ (39): Ի սորա ատուս շարժեցաւ բասաճն Ֆոանկաց ²³ : Կաթողիկոս եկաց Յայոց Տէր Բարսեղ ամս ԼԳ (33) ²⁴ :
ՌԶԵ 1087	ՇԼԶ	Եկն սուլտանն խորասանա Մելքշահն եւ առ վԱնտիոք եւ վԿիլիկիա, եւ վՖիլատոսն ²⁵ տաճկոց, տալով մնա վՄարաշ: Ետ եւ վՄալալ Ախսնդոսին եւ վՈւռհա՝ Բուպանին եւ վԱնտաք՝ Էլիսանին եւ ինքն գնաց ի խորասան ²⁶ :
ՌՂԲ 1092	ՇԽԱ	Մեռաւ սուլտանն Մելքշահ եւ եկաց որդի նորա Պէկիարուխն ²⁷ , յատուս սորա պառակտեցաւ իշխանութիւն թուրքաց ի բալսն մասունս, եւ ի գալ բասաճին, սա էր սուլտան ի Պարսս՝ թուրք գոլ ազգաւ:
ՌՂԶ 1096	ՇԽԵ	Շարժեաց Աստուած վճն բասաճն Ֆոանկաց գալ ի թափումն Երուսաղէմի ²⁸ :
ՌՂԷ 1097	ՇԽԶ	Բասաճն ետր վԿիլիկիա ի Սուլիման շահէն:
ՌՂԸ 1098	ՇԽԷ	Պարոն եկաց Յայոց՝ յաշխարհն Կիլիկեցոց, Կոստանտին որդի Ռովբէնա՝ ամս Ե (5) ²⁹ : Բասաճն ետր վԱնտիոք եւ վՈւռհա:
ՌՂԹ 1099	ՇԽԸ	Եղեւ թափումն Երուսաղէմի եւ տուկն Գունդաւֆոն տիրեաց Երուսաղէմի:
ՌԾ 1100	ՇԽԹ	Վախճանեցաւ Գունդաւֆոն եւ պսակեցաւ առաջին թագաւոր Երուսաղէմի Պաղտին եղբայր նորա, առաջին կոմսն Ուռհայո:
ՌԾԳ 1103	ՇԾԲ	Պարոն եկաց Յայոց թորոս՝ անտրանիկ որդին Կոստանտեա՝ ամս ԻԶ (26) ³⁰ :
ՌԾԺԶ 1116	ՇԿԵ	Կաթողիկոս եկաց Յայոց Տէր Գրիգորիս ³¹ :
ՌԾԻԱ 1121	ՇԴ	Թագաւորեաց Յունաց Յովհաննէս Պարֆիրաւմենն ամս ԺԳ (13) ³² : Սա էր որդի Ալէքսին:
ՌԾԻԶ 1126	ՇԴԵ	Կայսր եկաց Յոնանեցոց Կալադայրն ամս Թ (9) ³³ :
ՌԾԻԹ 1129	ՇԴԸ	Պարոն եկաց Յայոց Լեւոն որդի Կոստանտեա եւ եղբայր թորոսի՝ ամս Դ (4):

հյուսիս, Մարաշից հարավ (Հայաստանի ազգային ատլաս, հ. Բ, Երեւան, 2008, էջ 47, 48, Մարի-Ամնա Շեկալիե, Նշվ. աշխ., էջ 25, 33, 35, 50), այստեղ պետք է նշած լինի նաեւ համանուն դաշտը: Հեղինակը նաեւ կոնկրետացրել է կովի տեղը՝ «ի մամխեմուտն», որ հավանաբար նշանակում է մամխենի (փշտո վայրի սալորենի) ծառերով տեղանք, ինչպէս, օրինակ, եղեգնուտ:

19. Գիմիշտեգին իբն Դանիշմանը (Իբն Ալ-Ասիր, թարգմանությունը եւ ծանոթագրությունները Ա. Տեր-Ղեւոնդյանի, Երեւան, 1981, էջ էջ 231): Մատթեոս Ուռհայեցին նրան կոչում է Ալիախանի սեւեկապետ, մեծ ամիրա «Գոմէշ-Տիկին» (Մատթեոս Ուռհայեցի, էջ 200-205):

20. Անդրիուն բերդը գտնվում է Մարաշից արեւմուտք: Կիլիկյան մի ձեռագրի 1332 թ. հիշատակարանում նշվում է, որ այն գրվել է «մերձ յաստուածապալա ամրոցն, որ կոչի Անդրուին բերդ» (ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 251): Անունն ուշ շրջանում թուրքերենի ազդեցությամբ դարձել էնդրուն (Հայաստանի ազգային ատլաս, էջ 49, 50, 55, 62, 80-81, 84, 88, 151, 167):

21. Ապլարիալ Արծրունի՝ Կիլիկիայի քյուպղանկան կառավարիչ 1072-ից: Ենթադրվել է, որ մահացել է 1078 կամ 1080 թվականին (Տե՛ս Դ. Անայոյան, Յայոց ամենամոնղոների բառարան, հ. Ա, Երեւան, 1942, էջ 22, Լ. Տեր-Պետրոսյան, հաչակիւնները եւ հայերը, հ. Ա, էջ 415-416): Պատմիչները նրա թաղման տեղը չեն նշում, բայց այդ մասին գրում է Լամվել Ալեքսանդր 1190 թ հիշատակարանում՝ աւելացնելով, որ իշխանը ճախապէս Պապեռունում՝ «չինեալ եկեղեցի մեծ՝ դամբարան հանգստեան սահմանեաց իւր եւ իւրոցն» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., աշխատասիրությամբ Ա. Մաթեոսյանի, Երեւան, 1988, էջ 255):

22. Մատենադարանի թիվ 1898 ձեռագրում այս եւ երեք ուրիշ ժամանակագրական միավորներ (1204, 1250 եւ 1268 թթ.) ավելացված են այլ գրչությամբ, որոնց հեղինակին անվանում ենք առաջին խմբագրողը: Վերջինս Ռուբենի տարիների թիվը չի նշել: Այդ երեսուն է նաեւ Մատենադարանի թիվ 2965 ձեռագրի (որի միաթիղթանկերից մեկը եղել է թիվ 1898 ձեռագիրը) համապատասխան հատվածից, ուր «ամս» բառից հետո թիվ չկա (թեթր 105ա): Մինչդեռ

թիվ 1898 մատյանում տարիների թիվը՝ ԺԵ (15) ավելացված է այլ միջամտություններից հայտնի ձեռագրով, որը պատկանում է Մեսրոպ Ամբաստյանցին:

23. «Բասաճ»՝ «անցում» (լատ.), խորհրդանշում է խաչակրաց արշավանքը:

24. Յայոց կաթողիկոս Բարսեղ Ա Անեցի (1081-1113):

25. Փիլարտոս Վարաժմունի, Ասորիքում եւ Կիլիկիայում ստեղծված հայկական իշխանության իմնադիրը (1070-ական թթ. - 1086 թ.):

26. Մամվել Անեցու ժամանակագրության այլ օրինակներում այս մասին ասվում է. «Եկն ի խորասանա Մելքշահ սուլտանն եւ ետր վԱնտաք՝ փշիլատոսն տաճկացոյց իւր կամաց եւ ետ մնա վՄարաշ եւ կոխեալ երկարան ի ծով՝ եւ ետ շուքը Աստուծոյ որ տիրեաց յաղաղութեան ի ծովը Պարսից մինչեւ ի ծովը արեւմտից, եւ ծովն յորովեալ եկեր եւ փորն կապեալ ի ծովը ընկեց՝ եւ դարձաւ յԱնտիոք եւ ետ վԱնտիոք Էլիսանին, եւ վՄալաղսն Կորին եւ վՈւռհայ Բուրանին եւ ինքն ի խորասան գնաց» (Անեցի, էջ 118):

27. Պարկիարուխ - Ռուբենի որդին Բարք-Յարուկ, սելջուկյան սուլթան (1094-1105):

28. Հմմտ. Հեթում Կողիկոսոյ ժամանակագրությունը՝ «Շես (1096) շարժեաց Աստուած վճն բասաճն Ֆոանկաց գալ ի թափումն Երուսաղէմի...»: Նույն աղբյուրից են այս եւ հաջորդ երեք վկայությունները:

29. Կոստանդին Ա-ի իշխանության սկիզբը տարբեր աղբյուրներում նշվում է՝ 1093, 1095, 1097 թթ. (տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, հաչակիւնները եւ հայերը, հ. Բ, էջ 76):

30. Կիլիկիո իշխան Թորոս Ա, մոտ՝ 1100-1129 թթ.:

31. Յայոց կաթողիկոս Գրիգոր Գ Պաիկաւունի (1113-1166): Բնագրում, վերջին բառից հետո Մեսրոպ Ամբաստյանցի ձեռքով ջնջված է տարիների թիվը եւ ավելացված է «Գ Պաիկաւունի, ամս ԾԴ (54)»:

32. Բյուզանդական կայսր Դովիաննես Բ Կոմնենոս (1118-1143):

33. «Պատմութիւն Խորնիկունին»՝ «ՌԵԻԶ (1126)... Յայնմ ժամանակի եղել Կալադայրն կայսր, կացեալ ամս ԺԲ (12)» (ՄԺ, հ. 2, էջ 57): Գերմանիայի թագավոր Լոթար Գ (1125-1137) (Lothaire III):

ՈՃԼԳ 1133	ՇԶԲ	Կայսրն Յունաց կալաւ պապորն Հայոց Լեւոն, եւ դարձեալ տիրեցին Կիլիկիոյ Յոյնք՝ ամս ժԱ (11) ³⁴ :
ՈՃԼԴ 1134	ՇԶԳ	Թագաւորեաց Յունաց Մանուիլ որդի Պարֆիրաւթենին ամս ԽԶ (46) ³⁵ :
ՈՃԼԵ 1135	ՇԶԴ	Կայսր եկաց Հռոմայեցոց Քուռաթ երկրորդն ամս ³⁶ :
ՈՃԼԶ 1136	ՇԶԵ	Կայսր եկաց Հռոմայեցոց Ֆրտրիկն ամս Ժ (10) ³⁷ :
ՈՃԽԴ 1144	ՇԴԳ	Պարոն եկաց Հայոց ի Կիլիկիա Թորոս որդի Լեւոնի, վերծեալ ի բանտն Կոստանտինուպալսու՝ ամս ԺԳ (13) ³⁸ :
ՈՃԽԶ 1146	ՇԴԵ	Կայսր եկաց Հռոմայեցոց Հենի Ե (5)-երորդն ամս Ե (5) ³⁹ :
ՈՃԾԱ ⁴⁰ 1151	Ո	Կայսր եկաց Հռոմայեցոց Ֆրտրիկն, որ խեղդեցաւ ի գետն Սելեւկիոյ, ամս ԼԹ (39) ⁴¹ :
ՈՃԾԵ 1157	ՈԶ	Պարոն եկաց Հայոց Մլեհ, եղբայր Թորոսի՝ ամս Ե (7):
ՈՃԿԵ 1163	ՈԺԲ	Թագաւորն Երուսաղէմի Ամառի գնաց յեգիպտոս եւ Էառ վԱքանտարիա եւ վՊալես ⁴² :
ՈՃԿԹ 1169	ՈԺԸ	Առին վՊիլմասա անօրէնքն ի քրիստոնէից եւ շինեցաւ վանքն Վալմունդ ⁴³ :
ՈՃԶԶ 1186	ՈԼԵ	Պարոն եկաց Հայոց Լեւոն, եղբայր Ռովբէնի եւ որդի Ստեփաննի՝ ամս ԺԱ (11) ⁴⁴ :
ՈՃԴ 1190	ՈԼԹ	Կայսր եկաց Հռոմայեցոց Հենի որդի Ֆրտրիկն ամս Ո (9) ⁴⁵ :
ՈՃԴԶ 1196	ՈԼԵԵ	Կաթողիկոս եկաց Հայոց տէր Գրիգորիս Տղայն ամ Լ (1) ⁴⁶ :
ՈՃԴԵ 1197	ՈԽԶ	Պարոնն Հայոց Լեւոն պատկեցաւ թագիւ եւ եկաց առաջին թագաւոր ի Կիլիկիա՝ ամս ԻԴ (24): Կաթողիկոս եկաց Հայոց տէր Գրիգորիս Ապիրատն ամս Ե (7) ⁴⁷ :
ՈՍԳ 1203	ՈԺԲ	Կաթողիկոս եկաց Հայոց տէր Յոհաննես ամս ԺԸ (19) ⁴⁸ :
ՈՍԴ 1204	ՈԺԳ	Կայսր եկաց ի Ֆրանկոնոյն Կոստանդինուպալսոյ Պարտիմն ⁴⁹ առաջին կացուցեալ վնա Գուլնը տը ֆլանտրմ ⁵⁰ եւ տուին Վնժու, որ առին վնա կացեալ ամս ⁵¹ :
ՈՍԵ 1207	ՈԺԶ	Կայսր եկաց Հռոմայեցոց Աւրոմն ծնեալ ի Սաքսոնաց, որ եւ հաւառակ եկաց եկեղեցոյ, ամս Ո (9):

34. Դեպքը եղել է 1137 թ., որը ճիշտ է նշված Պեմոն Կողիկոսցու ժամանակագրության մեջ. «ՇԶԶ (1137) Թագաւորն Յունաց Պարֆիրաւթեն Էառ Կիլիկիեայ ի պարոն Լեւոն եւ վԼեւոն հանդերձ որդաքն առաքեաց կապանաք ի Կոստանդնուպալիս, որ եւ անդ մեռաւ»: Բայց Սամվել Անեցու ժամանակագրության մեկ այլ լրացման մեջ այն դնում է ավելի վաղ թվականով՝ «Ի ՇԶԱ (1132) ամին ել Պեռփոռնոսն եւ Էառ Կիլիկիայ... եւ վԼեւոն՝ կնաւ եւ Բ (2) որդւոյն Թորոսի եւ Ռուբենի կապեաց եւ առաքեաց ի Կոստանդնուպալիս...» (Անեցի, էջ 130)

35. Բյուզանդական կայսր Մանուել Ա Կոմնենոս (1143-1180): «Պատմութիւն խորնիկոնին» գործում նրա գահակալությունը նշված է 1137 թ.-ին (Մժ, հ. 2, էջ 57):

36. «Պատմութիւն խորնիկոնին»։ «ՈՃԼԵ (1135) ...3այն ժամանակի եղել երկրորդ Քուռաթն ընթրոր, կացեալ ամս ԺԵ (15)» (Մժ, հ. 2, էջ 57): ժամանակագրական ցանկը լրացնող գրիչը թվականը նշելու հարցում թյուրմեացության մեջ է ընկել, քանի որ հաջորդ տողում՝ հաջորդ տարվա՝ 1136 թվ. դիմաց տեսել է այլ կայսեր անուն, ուստի նախ, հավանաբար գրել է «ամս ԺԵ», բայց հետո ջնջել, գրել է «ամս Ա (1)»: Մինչդեռ «Պատմութիւն խորնիկոնին» ժամանակագրությունը նույն թվականի դիմաց ունի նաեւ՝ «Եւ յայն ժամանակի եկաց ընթրոր Ֆրտրիկն ամս ԼԵ (35)», որից հետո պատմվում է նրա գործերի եւ գետնու խեղդվելու մասին (նույն տեղում): Առաջին դեպքում խոսքը վերաբերում է Քուռաթին՝ գերմանական կայսր Կոնրադ Գ-ին (1138-1152), երկրորդում՝ Ֆրիդրիխ Ա Բարաբառային, որն իրոք Հռոմեական սրբապան կայսրության կայսրն է եղել 35 տարի, սակայն 1155-1190 թվականներին: Այսպիսով ներկա բնագրում առկա սխալը գալիս է «Պատմութիւն խորնիկոնին» ժամանակագրությունից, որ ի սկզբանե, ինչ-որ պատճառով, 1155 թվականի տեղեկությունը հայտնվել է 1135 թվականի դիմաց:

37. Տե՛ս նախորդ ծանոթագրությունը:

38. Կիլիկիոյ իշխան Թորոս Բ (1145-1168):

39. «Պատմութիւն խորնիկոնին»։ «ՈՃԽԶ (1146) ...3այն ամի թագեցին ընթրոր ի Հոռն վԵ (5)-երորդն Հենի» (Մժ, հ. 2, էջ 58): 1146-1150 թթ. Հռոմի թագավոր (Rex Romanorum) է եղել Կոնրադ Գ-ի որդի Հենրի Բեռնեգարը: Բայց «Պատմութիւն խորնիկոնին» գործում վկայակցված տեղեկության շարունակության մեջ նշվում է Հենրիի կնոջ անունը՝ Սիցիլիայի արքայադուստր Կոստանցիա: Վերջինս, սակայն Հռոմեական սրբապան կայսրության կայսր Հենրի 2-ի (1191-1197), (մինչ այդ՝ Գերմանիայի թագավոր՝ 1169-ից) կինն էր, ուստի այստեղ, թերեւս տարբեր սկզբնաղբյուրների տվյալների

օգտագործման պատճառով թյուրմեացաբար նույնացվել են Հենրի անունով երկու գործիչները:

40. Այս թվականին դիմաց Մեսրոպ Ամբաստանցի ձեռքով հավելում է արված. «Սամուել Անեցի գրիչ պատմով(թե)ան(յ)ս»։ Լշեճը, որ բուն մատյանի ամենասկզբում Մ. Ամբաստանցը որպես վերնագիր, գրել է. «Պատմութիւն Սամուելի քահանայի Անեցույ գրեալ յամի Տեառն 1151 եւ Հայոց Ո (600), ի Խ (40)-րդ ամի կաթողիկոսութեան Գրիգորի Գ Պաիաւունոյ եւ ի թագավորութեան Հայոց Թորոսի Բ» (թերթ 1ա): Մոտավորապես նույնաբովանդակ մի գրություն էլ թողել է Սամվել Անեցու ժամանակագրության առաջին մասի վերջում (թերթ 31բ): Հայտնի չէ, թե՛ նա որտեղից է այս թվականը վերցրել, բայց այն կարող էր վերաբերվել ժամանակագրության պատվերը տալուն եւ ոչ՝ ավարտին, որը եղել է 1163 թ. (4. Մաթեոսյան, Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերը..., էջ 41-45):

41. Տե՛ս ծանոթագրություն 36:

42. Քաղված է Մատենադարանի թիվ 2965 ձեռագրից, ժամանակագրությունը խախտված է, ծագումն է «Պատմութիւն խորնիկոնին» ժամանակագրությունից «ՈՃԶ (1167) թվականի հատվածից»:

43. Քաղված է Մատենադարանի թիվ 2965 ձեռագրից, ծագումն է Պեմոն Կողիկոսցու «Պատմութիւն խորնիկոնին» գործից. «ՈՃԿԹ (1169) Առին վՊիլմասա անաւրենքն ի քրիստոնէից եւ շինեցաւ վանքն, որ կոչի Վալմունդ» (Մժ, հ. 2, էջ 59):

44. Լեւոնի իշխանության սկիզբը՝ ՈԼԵ (1186) թվականին է նշված նաեւ Պեմոն Կողիկոսցու ժամանակագրության մեջ:

45. Քաղված է «Պատմութիւն խորնիկոնին» գործից (Մժ, հ. 2, էջ 60): «Հենի» - Հռոմեական սրբապան կայսրության կայսր Հենրի 2 (1191-1197):

46. Հայոց կաթողիկոս Գրիգոր Ե Քարալվեճը (1193-1194) «Տղա» մականունով է կոչվել երիտասարդ տարիքում աքոսակալելու պատճառով:

47. Հայոց կաթողիկոս Գրիգոր Զ Ապիրատ (1194-1203):

48. Հայոց կաթողիկոս Հովսեփանես Զ Սեպեց (1203-1221):

49. Կոստանդնուպոլսի առաջին լատին կայսր Բալդուին Ա (1204-1206):

50. Այսինքն՝ Ֆլանդրիայի կոմսը եւ Վենետիկի դուքսը:

51. Հմմտ. Պեմոն Կողիկոսցու ժամանակագրությունը եւ Պեմոն Լոյիցցու ժամանակագրությունը (Լ. Տրե-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 539): Սա առաջին խմբագրողի երկրորդ միջամտությունն է:

52. Գերմանական կայսր Ֆրիդրիխ Բ (1212-1250):

ՈՄԺԶ 1216	ՈԿԵ	Կայսր եկաց Ղոնմայեցոց Ֆրտրիկն ⁵² , որ յետոյ բանադրեցաւ եւ աքսորեցաւ ի ժառանգութենէ, ամս:
ՈՄԻԱ 1221	ՈՂ	Թագաւորեաց Ղայոց Ֆիլիպ, որդի Կոյր բրընծին՝ ամս ե (5) ⁵³ : Կաթողիկոս եկաց Ղայոց տէր Կոստընդին Բարձրբերդցին ամս խԵ (47):
ՈՄԻԶ 1226	ՈՂԵ	Թագաւորեաց Ղայոց Յեթում, որդի Կոստանտեա աւագ պարոնին Ղայոց՝ ամս խԵ (45) ⁵⁴ :
ՈՄԽԲ 1242	ՈՂԱ	Կլիմիք արմտերն գողցան ՎՊռականա ⁵⁵ ի թուրքէն:
ՈՄԽԴ 1244	ՈՂԳ	Խորապմիք մտան յերկիրն Երուսաղէմի եւ խանգրեցին ՎՍէլցիք ⁵⁶ :
ՈՄԽԵ 1245	ՈՂԴ	Հոռ(ո)մաց հեծելն սղարեցին ՎՏարսուս եւ թագաւորն Յեթում ետ ՎՊռականա եւ արար հաշ-տութիւն ⁵⁷ : Ինասանդ պապն բանադրեալ եհան ի ժառանգութենէ ՎՖրտրիկ ընթրուրն ⁵⁸ :
ՈՄԽԶ 1246	ՈՂԵ	Պարոն Սմբատ՝ զանտուտապլն Ղայոց, գնաց ի Կիով խանն: Թագաւորեաց Կիպրոսի Յեռի գերն ⁵⁹ :
ՈՄԽԷ 1247	ՈՂԶ	Սարցիք առին ի Ֆոնգնոյն ՎՏապարի եւ վկայալան:
ՈՄԽԸ 1248	ՈՂԷ	Լաիվ ըռտ տը Ֆրանցն ⁶⁰ եկն վարաւք ի Կիպրոս:
ՈՄԽԹ 1249	ՈՂԸ	Ըռտ տը Ֆրանցն էառ ՎՏամիաթ:
ՈՄԾ 1250	ՈՂԹ	ՎԸռ տ Ֆրանցն կալան Սարցիք եւ առեալ զին ՎՏամիաթն եւ ԸՈ (100 000) մարկ արծաթ պա-տեցին վնա ⁶¹ : Կայսր եկաց Ղոնմա Կիլան տը Ղաւանդն ի յկամնաց, կացեալ ամս ⁶² :
ՈՄԾԱ 1251	Չ	Սիր Ղալկան ⁶³ գողացաւ ՎՊռականա ի Թուրքէն, եւ ի սոյն զհչերն առին եւ ՎՆորբերդ յանա-րինաց տուրտութեամբ ⁶⁴ : Բրինճ եկաց Անտաքո Պենունդ վերրորդն:
ՈՄԾԲ 1252	ՉԱ	Վախճանեցաւ թագուիւին Ղայոց Չապէ: Ըռտ տը Ֆրանցն շինեաց Վճաֆն, եւ ճուլիան՝ Սայիտոյ տերն՝ էառ կին Վֆիմի դուստր թագա-տրին Ղայոց Յեթոյ ⁶⁵ :
ՈՄԾԳ 1253	ՉԲ	Թագաւորն Ղայոց Յեթում գնաց ի Սանկո խանն, եւ դուստր նորա Սպիլ եղեւ կին Պենունդ բրընծին Անտիոքա:
ՈՄԾԴ 1254	ՉԳ	Յայտնեցան Աղաճարիքն եւ Իսլանպակն ⁶⁶ : Ըռտ տը Ֆրանցն դարձաւ իւր աշխարհն: Վախճանեցաւ Քուռաթ ⁶⁷ որդի ընթրուրին:
ՈՄԾԶ 1256	ՉԵ	Թագաւորն Ղայոց Յեթում եկն ի Սանկո խանն, եւ արշաւեաց ի Սուտանտինն, եւ ձիաւորեցոյց ՎԼեւոն որդի իւր ⁶⁸ :
ՈՄԾԸ 1258	ՉԷ	Վախճանեցաւ թագաւորեղբայրն Ղայոց պարոն Լեւոն՝ մարաջախոյն Ղայոց: Հովալայոն խանն էառ ՎԼկանդի Ղաշիչեցն եւ ՎՊաղտատ ի խալիֆայէն ⁶⁹ :
ՈՄԾԹ 1259	ՉԸ	Յեթում թագաւորն գնաց ի Տրապաւլիս, եւ ձիաւորեցոյց վորդին իւր պապրոն Թորոս, եւ առին ՎՄուղդաս եւ խանգրեցին ՎԹուրքն, որ սղարեց ՎՄուղդաս ⁷⁰ :

53. Ղայոց թագավոր Փիլիպոս (Ֆիլիպ) (1222-1225):

54. Ղայոց թագավոր Յեթում Ա (1226-1269):

55. Բերդ Կիլիկիայում, Սեւելիկայի մոտ:

56. «Սէլ» - Պաղեստինի եւ Սիրիայի ծովափնյա երկրամասի անվանում:

57. «Սղարեք» - պաշարել (արաբ. փոխառություն): Այս դեպքի մասին մանրամասն նշված է Յեթում Կողիկոսցու եւ Յեթում Նղիբցու ժամանակագրություններում (Լ. Տեր-Պետրոսյան, հաջակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 540):

58. «Ընթրուր» աղավաղված «ինպերատոր» բառն է:

59. Կիպրոսի թագավոր Յենրի Ա (1218-1253):

60. «Ըռտ տը Ֆրանցն» (roi de France) Ֆրանսիայի թագավորը (գերված ու փրկագնված) Լյուդովիկոս Թ-ն էր (1226-1270):

61. Հմմտ. Յեթում Կողիկոսցու եւ Յեթում Նղիբցու ժամանակագրությունները (Լ. Տեր-Պետրոսյան, հաջակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 540):

62. «Կայսր եկաց» բառերով սկսվող տողը առաջին խմբագրողի հավելումն է: Աղբյուրը՝ «Պատմություն խորնիկոնին» «...Ավանագ

վգուհը Կիլան տը Ղաւանդն, որ թագաւորեալ էր ի վերայ Ալամ-նաց եւ ուներ ընդ ծնոսան պիւրաւունք ընթրուրութեան...» (ՄԺ, հ. 2,

էջ 68), վերաբերում է Գիյոմ Ղոլանդացուն (Guillaume de Hollande), որը չճանաչված թագավոր էր 1247-1254 թթ., Ֆրիդրիխ Բ-ի եւ Կոն-րադ Դ-ի ժամանակ:

63. Սիր Ղալկանը Սմբատ Սպարապետի հաղորդմամբ «էր Յոյն ազգաւ», որին Յեթում Ա-ն Իսապրիայի եւ Սեւելիկայի շրջանում «կացուցեալ էր անդ կողմնապահ»: Սպանվել է 1263-ին հարա-մանի գլխավորած վրանաբնակ ջոչվորների հարձակումների ժա-մանակ (Սմբատ Սպարապետ, էջ 238):

64. Հատվածը բացակայում է Յեթում Կողիկոսցու գործերում:

65. Ամբողջությամբ կրկնվում է Յեթում Կողիկոսցու ժամանակագ-րության մեջ:

66. Հմմտ. Յեթում Կողիկոսցու ժամանակագրությունը:

67. Կոնրադ Դ (1228-1254), գերմանական կայսր Ֆրիդրիխ Բ-ի որ-դին:

68. Ամենայն տարբերություններով կրկնված է Յեթում Կողիկոսցու ժամանակագրության մեջ:

69. Հմմտ. Յեթում Կողիկոսցու «Պատմություն խորնիկոնին» գործը (ՄԺ, հ. 2, էջ 70) եւ ժամանակագրությունը:

70. Թաղված է Յեթում Կողիկոսցու ժամանակագրությունից, որ-տեղ կան հավելյալ մանրամասներ:

ՈՍԿ 1260	ՉԹ	Հուլայունն էառ ԿՀալալ եւ տիրեալ Շամայուն ⁷¹ եւ ի տյոյն ամի Սրցիք խանգրեցին ԿՔիթալա-դայն եւ սպանին Կիսութուլ սուլտանն Մարա եւ եկաց Պնտուխտարն ⁷² : Հեթուն թագաւորն գնաց ի յՈւնն, հետ Ալիճախին: Շուլիան Սալիտոյ տէրն ծախեց Դամփլուն ⁷³ ՎՍալիտե եւ ԿՊիաֆաւորն: Թուրքմանքն բռնեցին ԿՊերութայ տէրն:
ՈՍԿԱ 1261	ՉԺ	Հեթուն թագաւորն Հայոց փեսայացոյց ԿԿոստանտին որդի տեառն Սարվանդիքարին ի դուստր իւր Ռիթա: Եւ ի տյոյն ամի մեռաւ ճաֆրի՝ տէրն Սարվանդիքարին ⁷⁴ : Պելիան Արսուֆին տէրն ծախեց ԿԱրսուֆն Ոսպեթլուն ⁷⁵ : Կախճանեցաւ թագուիին Կիպրոսի Բաժանսն եւ եղել պալլ Կիպրոսի Ոյլ լոք Լըփհնայն ⁷⁶ : Պալիալաւոն էառ ԿԿոստանտինուպալիս ի Ֆռանգնոյն ⁷⁷ :
ՈՍԿԸ 1268	ՉԺԵ	Պնդոլխտար սուլտանն Մարայ էառ Վննտաք ի քրիստոնաց, որ է ի Բասաճին առնելոյն մինչեւ աստ ճԿԶ (166) ամ ⁷⁸ : Կաթողիկոս եկաց Հայոց տէր Յակոբ վարդապետն ամս ժԹ (19) ⁷⁹ :
ՈՍԿԱ 1271	ՉԻ	Թագաւորեալ Հայոց Լեւոն, որդի Հեթմոյ՝ ամս ժԸ (19) ⁸⁰ :
ՈՍԶԹ 1289	ՉԼԸ	Կախճանեցաւ թագաւորն Հայոց Լեւոն եւ եկաց պարոն Հայոց անդրանիկ որդի նորա Հեթում՝ ամս ⁸¹ :
ՈՍԴԴ 1294	ՉԽԳ	Պապ եկաց ի Հոռն Սելեստինոս Ե (5)-երրորդ, այր կրանաւոր կացեալ ամիսս 2 (6) եւ հրաժա-րեաց: Եւ Պանաֆանց Ը (8)-երրորդ, ամս ⁸² :
ՈՅ 1300	ՉԽԹ	(Ժամանակագրական ցանկի աւարտը եւ հետին շրջանի հաւելում) ⁸³ :

71. «Շամայուն» - ցկատի ունի Սիրիան:

72. Եգիպտոսի սուլթան Բայբարս ալ-Բուրդուկլարի (1260-1277):

73. Դամփլուն - Տեմպլիե (Templiers), Տաճարականների հոգեւոր-ասպետական միաբանություն:

74. Քաղված է Հեթում Կողիկոսոց ժամանակագրությունից:

75. «Ոսպեթլու» (յոսպեթլու) - Հոսպիտալիե (Ordre des Hospitaliers), Հիվանդանոցային (Հիվանդախնամ կամ Հյուրընկալների) հոգեւոր-ասպետական միաբանություն:

76. Հուլզո դը Լուսինյան (մահ. 1267 թ.):

77. Բյուզանդական կայսր Միքայել Ը Պալեոլոգոս (1242-1258):

78. Այս հատվածն առաջին խմբագրողի չորրորդ եւ վերջին հա-վելումն է: Այն թերեաւ սխալ հաշվարկ է ներկայացնում, քանի որ Անտիոքը խաչակիրները գրավել են 1098 թ. եւ եթե դրան ավե-լացնենք 166 տարի, կստացվի 1264 (մինչդեռ տեղեկությունը 1268 թվականի դիմաց է գրված):

79. Հայոց կաթողիկոս Հակոբ Ա Կալեցի (1268-1289):

80. Հայոց թագավոր Լեւոն Գ (1269-1289):

81. Բնագրում Հեթում Բ-ի տարիների թիվը բաց է թողնված, քանի որ նա այդ ժամանակի թագավորն էր, եւ գրչին հայտնի չէր նրա թագավորության ավարտը (ուստի՝ տարիների քանակը): Սակայն հետազայում այդ մասում գրվել է Ե (5): Լույն նախադասության մեջ նույն ձեռագրով Լեւոն թագավորի ամուսից հետո գրված է

Գ (այսինքն՝ Լեւոն 3-րդ): Սրանք Մեսրոպ Սմբատյանցի ավելաց-րածներն են:

82. Ժամանակագրության՝ Վասիլի ձեռքով գրված վերջին նշումն է (1294 թ.): Այստեղ Հոռմի Սելեստինոս Ե պապին հաջորդած Բոնի-փակիոս Ը-ի (1294-1303) տարիների քանակը չի նշված: Նախա-դասության վերջին «ամս» բառից հետո գրիչը ոչ միայն թվական չի գրել, այլեւ, ի տարբերություն մյուս բոլոր ժամանակագրական միավորների, վերջակետ չի դրել՝ ակներևորեն հետագա ընթեր-ցողին թողնելով այդ պապի տարիների քանակը գրելու գործը:

83. Ժամանակագրության վերջին էջի աղյուսակը (96թ), բոլոր մյուս էջերի նման, 10 տարի է ընդգրկում. տվյալ դեպքում՝ ՌԱԴԱ (1291) - ՌՅ (1300) թթ.: Բայց ինչպես նախորդ ծանոթագրության մեջ նշվեց, բուն գրչի վերջին նշումը 1294 թվականի ներքո է: Ցանկի ամենավերջում՝ 1300 թ. դիմաց Մեսրոպ Սմբատյանցը երկու հա-վելում է արել՝ էջի ծախ մասում՝ «Գրիգոր է Անաարպեցի կաթո-ղիկոս», աջ մասում՝ «Հեթում Բ թագաւոր Հայոց, վերստին»: Երկու տեղեկությունն էլ ստույգ չեն: Այս ձեռագրում Մ. Սմբատյանցի կա-տարած անհարկի միջամտությունների վերաբերյալ նշում է դե-ռեւս մատյանի առաջին հետապոստոներից մեկը՝ Արշակ Տեր-Սի-քայանը. «Տեր-տեղ կան նորագոյն եղծումներ եւ անելացումներ, որոնք անպատուաբեր են պարապ գրչին» (Ամեցի, էջ Թ):

ՀԵԹՈՒՄ ԿՈՌԻԿՈՍՑՈՒ 1293 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Հեթում Կոռիկոսցու պատվերով նրա Վասիլ դպիրի ձեռամբ ընդօրինակված Ավետարանը, որը գրվել էր Կոռիկոսի նորաշեն ծովային ամրոցի նորակառույց եկեղեցու համար, հայերեն բազմաթիվ ձեռագրերի պես իր ողիսականն է ունեցել: Բնականաբար, սկզբում դրվել է այդ եկեղեցում, բայց որոշ ժամանակ հետո գրված մի հիշատակարանից երևում է, որ տարվել է Կիպրոս, պահվել Ս. Աստվածածին անունով եկեղեցում՝ «(ի) փոքր եկեղեցին հայերուն Կիպրաւսեայ»¹: Նկատենք, որ Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո (1375) Կոռիկոսը որոշ ժամանակ գտնվել է Կիպրոսի թագավորության տիրապետության ներքո:

Արդեն նոր ժամանակներում գրված մեկ այլ հիշատակարանից պարզվում է, որ 1891 թ. ձեռագիրը գտնվել է Կեսարիայի Ս. Կարապետ վանքում: Հայտնի չէ, թե Մեծ Եղեռնի տարիներին այս թանկագին մատյանն ինչ փորձությունների միջով է անցել, սակայն արդեն 1980-ական թվականներին հայտնվել է Նյու Յորքում, պարսկաստանցի հրեաների ձեռքում: Այս մասին տեղեկանալով՝ ձեռագիրը նրանցից գնել է Շահե արքեպիսկոպոս Աճեմյանը² եւ մատյանը բերել Հայաստան, ավելի ուշ՝ նվիրել Մայր Աթոռ Ս. Էջմիածնին՝ հանձնելով Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսին: Նվիրատուի ցանկությունն է եղել, որ մատյանը կոչվի «Գարեգին կաթողիկոսի Ավետարան»:

Մագաղաթյա ձեռագիրը, որն ունի 454 թերթ, զարդարված է չորս ավետարանիչների մանրանկարներով ու անվանաթերթերով, արժեքավոր է հատկապես իր երկարաշունչ հիշատակարանով: Արդեն նշել ենք, որ այն որոշ կրճատումներով արտագրված է եղել 1608 թ. մի ժողովածուի մեջ (Մատենադարան, ձեռ. թիվ 5613), որից էլ 1948 թ. հրատարակել է Վ. Հակոբյանը, իսկ երկրորդ անգամ՝ Ս. Մաթեոսյանը՝ 13-րդ դարի հիշատակարանների ժողովածուում³: Այդտեղ կրճատված են եղել հիշատակարանի առաջին մեծ հատվածը եւ վերջաբանը, որի պատճառով անհայտ են մնացել գրչի ու ծաղկողի անունները, մի շարք այլ էական մանրամասներ: Շահե արքեպս. Աճեմյանի 2006 թ. իրականացրած ամբողջական հրատարա-

1. Շ. Աճեմյան, նշվ. աշխ., էջ 343:

2. Նույն տեղում:

3. Վ. Հակոբյան, Հեթում պատմիչի հիշատակարանը, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1948, N 10, էջ 66-73, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 717-719: Հրատարակվել է «Արդ, յայսմ ժամանակի ցաւեր աշխարհ իբրեւ զծեր...» հատվածից մինչեւ՝ «Եւ Նմա փառք յամենայն արարածոց իւրոց»:

կության շնորհիվ⁴ այժմ հնարավոր է գնահատել այս ինքնատիպ գրական գործը, որը թեև ձեռագիրով հիշատակարան է, բայց շատ ավելի լայն ընդգրկում ունի:

Հիշատակարանների համար սովորական համարվող փառաբանական սկզբի («Փառքի») փոխարեն այստեղ գտնում ենք աստվածաբանական, խոհափիլիսոփայական մի յուրօրինակ ներածություն: Սկսելով Ավետարանի չորս գրքերին վերաբերող (չորս թվի խորհրդաբանության) բազմապիսի մեկնաբանություններից՝ հեղինակը գալիս հասնում է իր ապրած ժամանակը բնութագրող հետաքրքիր այլաբանության. «յայսմ ժամանակի ցաւէր աշխարհ իբրեւ զծեր եւ երկնէր որպէս զմայր եւ ծփէր որպէս զծով», մինչ այդ նաեւ բացատրելով, թե կոնկրետ ինչը նկատի ունի:

Ողջ հիշատակարանի նպատակն Ավետարանի գրության պատճառը ներկայացնելն է եղել, որը Հեթում Կոռիկոսցին կատարել է պատմաբանի ու ժամանակագրի բժախնդրությամբ՝ շարադրանքի երկրորդ մասում ներկայացնելով արեւելամիջերկրածովյան քրիստոնեական իշխանությունների հոգեւարքը, խաչակիրների վերջին հենակետ ամրոցների կործանումը, այնուհետեւ հայերին պատուհասած դեպքերը՝ Հռոմկլայի ողբերգական անկումն ու Կիլիկիայի սահմաններին հասած եգիպտական փոթորիկը: Այս պայմաններում է, որ նա որոշել է Կոռիկոսի ափամերձ կղզին հուսալի ամրոց-ապաստարանի վերածել, այդտեղ կառուցել է նաեւ եկեղեցի եւ գրել տվել այդ Ավետարանը, որպեսզի այն դրված լինի եկեղեցում, «ինչպէս կենաց ծառը՝ դրախտում»:

Քանի որ մատյանում ավետարանական տեքստը եւ ստացողի ավելի մանրատառ հիշատակարանը նույն ձեռագրով են գրված, ենթադրելի է, որ Հեթում Կոռիկոսցին հիշատակարանը թելադրել է Վասիլ գրչին (դա երեւում է նաեւ շարադրանքի որոշ մանրամասներից, օրինակ՝ «զի որպէս ասացաք յառաջ քան զայս...», եւ այլ հատվածներից): Հիշատակարանն աչքի է ընկնում հարուստ լեզվով, հետաքրքիր համեմատություններով, զգացական շեշտադրումներով, վերջապէս՝ փաստառատությամբ: Հավելյալ մեկնաբանություններից զերծ ենք մնում⁵, քանի որ տեքստն արդեն պերճախոս է, իսկ հիշատակարանն ամբողջության մեջ պետք է իրավամբ համարվի Հեթում Կոռիկոսցու ստեղծագործություններից մեկը:

4. Ե. Աճեմեան, նշվ. աշխ., էջ 344-351:

5. Հիշատակարանին ծանոթագրություններ չենք կցում, քանի որ վերը ներկայացված ժամանակագրական բնագրերում ու դրանց ծանոթագրություններում ներկայացված են հիշատակված դեպքերի, վայրերի եւ անձանց վերաբերյալ բոլոր անհրաժեշտ բացատրությունները, որոնք հեշտությամբ կարելի է գտնել հիշատակման թվականի կամ անվանացանկերի միջոցով:

